ISSN 2738-2737

www.ahms.am

AJHMS

ARMENIAN JOURNAL
OF HEALTH & MEDICAL SCIENCES

PROCEEDINGS

6TH INTERNATIONAL
MEDICAL CONGRESS
OF ARMENIA

Supplement
#1 / Volume III / 2023

ԱԲՀՀ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՆՅՈՒԹԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ 6-ՐԴ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԲԺՇԿԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Հավելված
#1 / Հատոր III / 2023

Անահիտ Ավանեսյան
Հայաստանի Հանրապետության
Առողջապահության նախարար

Anahit Avanesyan
Minister of Health
Republic of Armenia

Հայաստանի միջազգային բժշկական համաժողովն անգնահատելի դեր է ունեցել առողջապահության ոլորտի մասնագետների միջև կապերի հաստատման, առավել արդյունավետ բժշկական գործունեության ծավալման, առողջապահության ոլորտի ապաջակիմական փորձի փոխանակման և տեղայնացման, տեղեկատվության տարածման, ինչպես նաև Հայաստանում առողջապահության ոլորտում նշանավոր գաղափարների և նախագծերի հիմնադրույթը լինելու գործում:

Հայաստանի 6-րդ միջազգային բժշկական համաժողովն իր ուրույն տեղը կունենա, և համաժողովի շրջանակում ներկայացված արդի և համապարփակ գիտական հետազոտությունները հնարավորություն կընձեռեն բացահայտել առողջապահության ոլորտի առջև ծառացած հիմնախնդիրները, փոխանակել առաջադիմական փորձ, որով հիմք կհանդիսանան ձեռնարկվող ծրագրերի շուրջ գիտական ներուժի համախմբման համար:

Հուսով եմ համաժողովը կնպաստի կրթական և գիտական մտքի զարգացմանը, հայաստանյան բժշկագիտության միջազգայնացմանը:

Վստահ եմ, որ Հայաստանի 6-րդ միջազգային բժշկական համաժողովը նպաստելու է հանուն հայության համար առողջապահական արդի և արդյունավետ համակարգի զարգացմանը և կրկին հանդիսանալու է համագործակցության հիմք ապագա Հայաստանը կառուցելու ուղղությամբ:

The International Medical Congress of Armenia has played an invaluable role in establishing connections between healthcare professionals, implementing more efficient medical practices, sharing and localizing advanced healthcare experience, exchanging information and being a source of outstanding ideas and projects in the healthcare sector of Armenia.

The 6th International Medical Congress of Armenia will have its unique place, and the contemporary and comprehensive scientific research presented by recognized specialists within the framework of the Congress will provide an opportunity to identify the issues facing the healthcare system and exchange progressive experience, which will be the basis for the consolidation of scientific potential around the undertaken programs.

I hope the Congress will contribute to the development of educational and scientific thought, and the internationalization of Armenian medicine.

I am confident that the 6th International Medical Congress of Armenia will contribute to the development of a modern and efficient healthcare system for all Armenians and will again serve as a basis for cooperation in building a future Armenia.

ՆՅՈՒԹԵՐ

Հայաստանի 6-րդ միջազգային
բժշկական համագումար

МАТЕРИАЛЫ

6-ой международный медицинский
конгресс Армении

PROCEEDINGS

6th International
Medical Congress of Armenia

Երախտիքի խոսք – Acknowledgement

Անի Ասատրյան - Ani Asatryan
Սոնա Գալստյան - Sona Galstyan
Արտաշես Գրիգորյան - Artashes Grigoryan
Մերի Գրիգորյան - Meri Grigoryan
Հովհաննես Դաշտոյան - Hovhannes Dashtoyan
Գարրի Դավթյան - Garry Davtyan
Աստղիկ Թորոսյան - Astghik Torosyan
Գրիգոր Թորոսյան - Grigor Torosyan
Դալար Թումասյան - Dalar Tumasyan
Դիանա Խաչատրյան - Diana Khachatryan
Տաթևիկ Կարապետյան - Tatevik Karapetyan
Ռուզաննա Հովհաննիսյան - Ruzanna Hovhannisyan
Ադրինե Ղազարյան - Adrine Ghazaryan
Հասմիկ Ճաղարյան - Hasmik Tshagharyan
Մարիամ Միրզոյան - Mariam Mirzoyan
Հենրիկ Մուրադյան - Henrik Muradyan
Սամվել Սարգսյան - Samvel Sargsyan
Անի Քոչարյան - Ani Kocharyan
Հայկ Միլիտոնյան - Hayk Militonyan
Մարիամ Իսայան - Mariam Isayan
Սեդա Աբգարյան - Seda Abgaryan
Յովսէփ Գրիգորեան - Hosep Karkourian
Էլզա Բալյան - Elza Balian
Նարինե Նադրյան - Narine Nadryan
Էմմա Մինասյան - Emma Minasyan
Սաթենիկ Մուրադյան - Satenik Muradyan
Աննա Գրիգորյան - Anna Grigoryan

Ցանկ | Contents | Содержание

Առողջապահության կազմակերպում 5
Организация здравоохранения
Public Health

Քույրական գործ 46
Сестринское дело
Nursing

Ախտորոշիչ բժշկություն 52
Диагностическая медицина
Diagnostic Medicine

Թերապևտիկ մասնագիտություններ 62
Терапевтические специальности
Therapeutic Specialties

Վիրաբուժական մասնագիտություններ 112
Хирургические специальности
Surgical Specialties

ՀԱՆԴԵՍԻ ՏՆՕՐԵՆ
DIRECTOR OF THE JOURNAL
Ալեքսանդր Ա. Բազարչյան
Alexander A. Bazarchyan

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱԽՄԲԱԳԻՐՆԵՐ
CO-EDITORS-IN-CHIEF
Դավիթ Օ. Աբրահամյան
Սամսոն Գ. Խաչատրյան
Davit O. Abrahamyan
Samson G. Khachatryan

Համարի համակարգող և սրբագրիչ
Issue coordinator and proofreader
Հայկ Միլիտոնյան
Hayk Militonyan

Ձևավորող
Designer
Անդրեյ Աստվածատրյան
Andrey Astvatsatryan

Բովանդակությունը և ամփոփագրերի առցանց տարբերակները տես
Оглавление и онлайн-версии тезисов доступны на сайте
The table of contents and online versions of the abstracts are available at

www.ahms.am

The copyright of the materials published in the journal belongs to AJHMS and to the authors. For complete or partial reprodiction of the materials or for the use in any other form a permission from the Journal's editorial office is required.

Ամսագրում հրապարակված նյութերի հեղինակային իրավունքները պատկանում են ԱԲՀՀ-ին և հեղինակներին: Նյութերի ամբողջական կամ մասամբ վերահրատարակման կամ որևէ այլ ձևով օգտագործման համար հանդեսի խմբագրության թույլտվությունը պարտադիր է:

ISSN 2738-2737

© Առողջապահության և բժշկագիտության հայկական հանդես (ԱԲՀՀ), 2023
© Armenian Journal of Health & Medical Sciences (AJHMS), 2023

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ОРГАНИЗАЦИЯ ЗДРАВООХРАНЕНИЯ
PUBLIC HEALTH

0066 Հայաստանի լաբորատոր ծառայության բարեփոխումների որոշ ասպեկտներ
Some aspects of laboratory system reformation in Armenia

Վահագն Գևորգյան, Կարինե Թեյմուրազյան,
Վարուժան Աբովյան, Ալվարդ Ավանեսյան,
Անահիտ Պետրոսյան
Բժշկական լաբորատոր ախտորոշման մասնագետների ասոցիացիա, Հայաստան

Vahagn Gevorgyan, Karine Teymurazyan,
Varujan Abovyan, Alvard Avanesyan, Anahit Petrosyan
Association of Medical Laboratory Diagnostics spetialists, Armenia

Ներկայումս Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության կողմից իրականացվում են առողջապահության բարելավմանն ուղղված օրենսդրական բարեփոխումներ: Դրանք առնչվում են նաև լաբորատոր ծառայությանը, որն այսօր դժվար է համարել համակարգված ու արդյունավետ գործող կառույց: Պետական, մասնավոր խոշոր ու ոչ մեծ լաբորատորիաները՝ տարբեր տարածքային ու գերատեսչական պատկանելությամբ, իրականացնում են տարբեր ծավալի հետազոտություններ, զարգանում են համաձայն ֆինանսավորման մակարդակի՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Մեր առաջարկները բարեփոխումների առումով հետևյալն են՝

1. Վերանայման փուլում են լաբորատոր հետազոտությունների արդյունքների արձանագրմանը ներկայացվող օրենսդրական պահանջները, որոնք կորցրել են արդիականությունը և չեն արտացոլում ներկայիս մոտեցումները: Մեր կողմից առաջարկված նախագծի տարբերակը հիմնված է արդյունքների արձանագրման համար պահանջվող անհրաժեշտ նվազագույն մուտքային ու ելքային տվյալների վրա, որոնք բոլորի համար նույնական են, իսկ իրականացվող հետազոտությունների ծավալը որոշվում է կազմակերպությունների կողմից:

2. Ինչպես լաբորատորիայի, այնպես էլ լաբորատոր ծառայության արդյունավետության կարևորագույն բաղադրիչ է անձնակազմի պրոֆեսիոնալիզմը: Առողջապահության նախարարությունը, Առողջապահության ազգային ինստիտուտը հատուկ ուշադրություն են դարձնում համապատասխան մասնագիտացված ամբիոններում հետբուհական շարունակական մասնագիտական զարգացմանն (ՇՄԶ) ուղղված վերապատրաստումներին: Մյուս կարևորագույն խնդիրը, որը սերտորեն կապված է հետբուհական կրթական գործընթացի հետ, բազային ոչ բժշկական կրթությամբ լաբորատոր աշխատակիցների մասնագիտական հավաստագրումն է: Այն հիմք է հանդիսանում առողջապահության ոլորտում վերջիններիս աշխատանքի թույլատվության համար: Խնդրի լուծման համար, մեր կողմից առաջարկվեց, որպես հավաստագրման չափանիշներ հիմք ընդունել բարձրագույն մասնագիտական կրթությունը, 5 տարվա անընդհատ աշխատանքային ստաժը, ինչպես նաև սահմանված կարգով նախատեսված ՇՄԶ միավորների անհրաժեշտ քանակի առկայությունը: Ակնկալվում է, որ ոչ բժշկական կրթությամբ լաբորատոր մասնագետների վկայականների ճանաչմանը և աշխատանքների իրավունքների հավասարեցմանն ուղղված մեր առաջարկները, ինչպես նաև հավաստագրման գործընթացի վերաբերյալ դիտողությունները կընդունվեն և կարտացոլվեն օրենսդրության համապատասխան լրացումների տեսքով:

3. Որակի վերաբերյալ ազգային ու միջազգային պահանջների ներդաշնակեցումը պարտադրում է հանրապետության լաբորատոր ծառայության կառուցվածքային փոփոխությունների իրականացում: Ակնհայտ է, որ տարբեր լաբորատորիաների կողմից իրականացված հետազոտությունների արդյունքները պետք է լինեն համադրելի և համապատասխանեն որակի ընդունված ազգային պահանջներին: Վերջինս հասնելու մեխանիզմներից է լաբորատորիաների լիցենզավորման գործընթացը: Լիցենզավորման պահանջները պետք է լինեն բազմամակարդակ, ընդգրկեն այնպիսի պայմաններ, ինչպիսիք են հետազոտական ծավալները, հետազոտական ոլորտները և մասնագիտացումը, ունենան իրենց տեղը լաբորատոր համակարգում՝ լինի ազգային, բազմապրոֆիլ, մարզային, թե տարածքային լաբորատորիա: Նախաձեռնող բարեփոխումների արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է գործողությունների ծրագիր և պատասխանատու աշխատանքային խումբ:

0106 Աջակցություն լսողական խնդիրներ ունեցող երեխաներին Հայաստանում. «Արաբկիր» բժշկական համալիրի և «Հավատ» հասարակական կազմակերպության համագործակցություն

Supporting children with hearing impairment in Armenia: Cooperation of Arabkir Medical Center and Havat non-governmental organization

Կարինե Հարությունյան[1], Թամարա Մանուկյան[2]
[1] «Հավատ» հասարակական կազմակերպության, Երևան, Հայաստան
[2] Արաբկիր բժշկական համալիր-երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ, Երևան, Հայաստան

Karine Harutyunyan[1] Tamara Manukyan[2]
[1] "Havat" NGO, Yerevan, Armenia
[2] Arabkir MC, Yerevan, Armenia

Ներածություն. Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով աշխարհում ծնվող 1000 երեխայից յուրաքանչյուր 3-րդի մոտ լսողական խնդիրներ են հայտնաբերվում: Հայաստանում ևս նմանատիպ վիճակագրություն է: Երեխաների լսողության կորստի փոխհատուցումը, նրանց խոսքի և ընդհանուր զարգացումն ու ներառումը բխում են ինչպես պետության, այնպես էլ հենց տվյալ երեխայի շահերից, ինչին էլ ուղղված են Արաբկիր բժշկական համալիր-երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի («Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ) Սուրդոլոգիական ծառայության, դրան կից գործող Խոսքի զարգացման կենտրոնի և «Հավատ» վատ լսող երեխաների մայրերի հասարակական կազմակերպության («Հավատ» ՀԿ) աշխատանքները:

Մեթոդներ. «Հավատ» ՀԿ-ն գործում է 1996թ.-ից: Նպատակը՝ աջակցել լսողական խնդիրներ ունեցող երեխաների ներառմանն ու առաջընթացին: Աշխատանքի հիմնական մեթոդը համագործակցությունն է տեղական և արտասահմանյան հասարակական ու մասնավոր կազմակերպությունների, պետական կառույցների հետ և ամենատարբեր ծրագրերի իրականացումը՝ դրամաշնորհներով: «Հավատ» ՀԿ ամենամեծ գործընկերը տարիներ շարունակ եղել և մնում է «Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ-ն, որտեղ գործում են Մանկական սուրդոլոգիական կենտրոնն ու լսողական խնդիրներ ունեցող երեխաների հանրապետական մանկական դիսպանսերը: Դիսպանսերում գրանցված է 0-18 տարեկան շուրջ 1500 երեխա: «Հավատ» ՀԿ և «Հովարդ Կարագյոզյան» հիմնադրամի համագործակցությամբ տարիներ շարունակ մինչև 12 տարեկան երեխաներին տրամադրվում են բարձրակարգ թվային լսողական սարքեր: «Հավատ» ՀԿ և Ճապոնիայի կառավարության համագործակցությամբ Հայաստանի ծննդատներում իրականացվում է լսողության նորածնային սքրինինգային ծրագիր: «Հավատ» ՀԿ-ն իրականացնում է «Ծնողական դպրոց» ծրագիր՝ օնլայն և օֆֆլայն տարբերակներով: Օնլայն տարբերակն ստեղծվել է ՀԲԸՄ-ի և «Եվրասիա» համագործակցության հիմնադրամի համատեղ ծրագրի ենթադրամաշնորհով:

Արդյունքներ. 40 երեխա (5 խումբ) հաճախում է «Արաբկիր» ԲՀ-ում գործող խոսքի զարգացման կենտրոն, որից հետո նրանց մեծ մասը հաճախում է հանրակրթական դպրոց՝ ներառական ուսուցմամբ: Կենտրոնի ավագ սաներից որոշներն արդեն ավարտել են նաև միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունները և աշխատում են:

Եզրակացություն.

1. Կարևոր են լսողական խնդրի վաղ հայտնաբերումն ու վաղ կոմպենսացիան:
2. Լսողական սարքերը պետք է ընտրել անհատապես՝ ելնելով յուրաքանչյուր երեխայի կարիքից:
3. Խոսքի զարգացման գործընթացում պետք է աշխատի թիմ՝ սուրդոլոգ, աուդիոմետրիստ, սուրդոմանկավարժ, երաժշտական թերապիայի մասնագետ, հոգեբան, ծնողներ:
4. Կարևոր են ծնողներին կրթող, իրազեկող ծրագրերը, քանի որ եթե նրանք չպատկերացնեն խնդիրը, չեն կարողանա շարժվել ճիշտ ուղղությամբ:
5. Կարևոր է համագործակցությունը պետական կառույցների, հասարակական և մասնավոր կազմակերպությունների հետ. դա փոխադարձաբար ուժեղացնող գործընթաց է:
6. Արաբկիր ԲՀ-ԵԴԱԻ-ի և Հավատ ՀԿ համագործակցությունն այս ոլորտում լավագույն օրինակներից է և որպես մոդել է հանդիսանում այլ կլինիկաների և նորաստեղծ ՀԿ-ների համար:

0165 Կանխարգելիչ հետազոտությունների իրականացման գնահատականներ

Preventive screenings implementation assessments

Սամվել Խարազյան[1], Լենա Նանուշյան[2]
[1]Առողջապահության տնտեսագետների ասոցիացիա, Երևան, Հայաստան
[2]ՀՀ Առողջապահության նախարարություն, Երևան, Հայաստան

Samvel Kharazyan[1], Lena Nanushyan[2]
[1]Health Economics Association, Yerevan, Armenia
[2]Ministry of Health Armenia, Yerevan, Armenia

Ներածություն. Ընդհանուր առմամբ Հայաստանում ոչ վարակիչ հիվանդությունների (ՈՎՀ) տնտեսական բեռի վերլուծությունը վերհանում է ՈՎՀ-ի պատճառով տնտեսությանը հասցվող վնասի ծավալները՝ գնահատելով դրանց ուղղակի և անուղղակի ծախսերը: Ուղղակի ծախսերից են սրտանոթային հիվանդությունների, շաքարային դիաբետի, քաղցկեղի և շնչառական քրոնիկ հիվանդությունների բուժման հետ կապված առողջապահական ծախսերը: Անուղղակի ծախսերը ներառում են հաշմանդամության նպաստները, ժամանակավոր անաշխատունակության հետ կապված վնասները, աշխատավայրում ցածր արտադրողականությամբ աշ-

խատելու (ձևական ներկայության) հետևանքով կրած վնասները, ինչպես նաև աշխատունակ տարիքի անձանց վաղաժամ մահվան հետևանքով առաջացած տնտեսական վնասները: Առողջության համապարփակ ապահովագրության ներդրման դեպքում կանխատեսվում է, որ միայն կանխարգելիչ պարտադիր հետազոտությունների իրականացումը հնարավորություն կտա ապահովագրության ամբողջական ներդրման երրորդ տարուց սկսած, խնայել շուրջ 123.0 մլրդ դրամ, որից 65.0 մլրդ դրամը՝ ծառայությունների մատուցման համար կատարվող ուղղակի ծախսերն են:

Եղանակներ. Գնահատման իրականացման համար վերլուծվել է ՈՎՀ հիվանդացության, մահացության և հաշմանդամության վիճակագրական տվյալներն ըստ բնակչության տարիքի: Նաև ուսումնասիրվել են վարձու աշխատողների և ինքնազբաղվածների տարիքասեռային տվյալները, հաշվարկվել է կյանքի արդյունավետ/արտադրողական միջին տարիքը և 1 աշխատողի կողմից ստեղծված արդյունքը կյանքի արդյունավետ/արտադրողական տարիների ընթացքում, որտեղ հաշվի է առնված այն կանխատեսումը, որ համաշխարհային համախառն ներքին արդյունքի վերջին քսան տարվա միջին տարեկան աճի (3%) տեմպը հաջորդ 20 տարիների ընթացքում կպահպանվի: Հաշմանդամությամբ ընթացող կյանքի տարիներն ըստ հիմնական ՈՎՀ-ների կազմում են 586,660 տարի կամ միջինում 12 տարի. այդ հիվանդությունները կամ վիճակներն ունեցող անձանց արտադրողականությունը կամ արդյունք ստեղծելու հնարավորությունները լինում են սահմանափակ: Ըստ ոչ վարակիչ հիմնական հիվանդությունների մահացածների վիճակագրության, վաղաժամ կամ կյանքի արտադրողական/արդյունավետ տարիների կորուստը կազմում է 40,523 տարի կամ մեկ անձի հաշվով միջինում 6 տարի: Յուրաքանչյուր ՀՀ քաղաքացի 18-ից 63 տարեկան հասակում հարկային օրենսգրքով սահմանված կարգով հարկման ենթակա արդյունք է ստեղծում միջինում 23 տարի: 1 աշխատողի կողմից ստեղծված արդյունքը կյանքի արդյունավետ/արտադրողական տարիների ընթացքում կկազմի միջինում 212,293,510 դրամ:

Արդյունքներ. Իրականացված գնահատականները ցույց են տալիս, որ առաջնային և երկրորդային կանխարգելման առաջարկվող միջոցառումներում մեծահասակ բնակչության կեսի ընդգրկման (48%), իսկ նորածինների և երեխաների տարբեր տարիքային խմբերի համար 85%-ի ընդգրկման դեպքում անհրաժեշտ ծառայությունների ծախսերը կկազմեն շուրջ 12.0 մլրդ դրամ: Կանխարգելիչ միջոցառումներում ընդգրկված բնակչության մոտ հիվանդությունների վաղ հայտնաբերման և վերահսկման, հիվանդությունների բարդությունների կանխարգելման արդյունքում հնարավոր կլինի կանխել շուրջ 858.8 մլրդ դրամի չափով ծախս երկարաժամկետ կտրվածքով՝ առաջիկա 7 տարիների ընթացքում (2024-2030թթ.): Ընդ որում, ուղղակի ծախսերը, որոնք կխնայվեն կանխարգելման ուղենշային դիմելիության ցուցանիշի ապահովման դեպքում, տարեկան կտրվածքով կկազմեն շուրջ 65.0 մլրդ դրամ կամ մոտ 5.5 անգամ կգերազանցեն կանխարգելման նպատակով ծախսված գումարները:

0190 Հայաստանում լսողության նորածնային սքրինինգային ծրագրի արդյունքների վերլուծություն
Analysis of the results of the newborn hearing screening program in Armenia

Նելլի Մոսեսովա
Արաբկիր ԲՀ, Երևան, Հայաստան

Nelli Mosesova
Arabkir MC, Yerevan, Armenia

Ներածություն. Ծանրալսությունը ամենահաճախ հանդիպող բնածին արատներից մեկն է: Անհերքելի է այն փաստը, որ բնածին ծանրալսության ուշ հայտնաբերումը և ռեաբիլիտացիոն գործընթացների ոչ ժամանակին կիրառումը կարող են բացասական ազդեցություն թողնել երեխայի հոգեկան գործընթացների և կյանքի բազմաթիվ ոլորտների վրա՝ խոսք և հաղորդակցում, ճանաչողական գործառույթներ, կրթություն և աշխատանք, սոցիալական ներառում: Հաշվի առնելով, որ լսողության խանգարումների վաղ հայտնաբերումը և դրան հաջորդող վաղ միջամտությունը հնարավոր է իրականացնել միայն լսողության նորածնային սքրինինգային ծրագրի (ԼՆՍԾ) արդյունավետ իրականացման պայմաններում, անհրաժեշտ է, որ այն լինի շարունակական գործընթաց և պարբերաբար ենթարկվի մշտադիտարկման ու արդյունքների վերլուծության:

Եղանակներ. Կատարվել է 2008-2022թթ. Հայաստանում իրականացված ԼՆՍԾ արդյունքների ռետրոսպեկտիվ փաստաթղթային վերլուծություն: ԼՆՍԾ-ն վերլուծվել է ըստ հետևյալ չափանիշների՝ ծրագրի ծածկույթը, հսկողությունից դուրս մնացած նորածինները, իրականացման ժամկետները: Ստացված արդյունքները համեմատվել են Նորածինների լսողության միասնական կոմիտեի (Joint Committee on Infant Hearing, JCIH) առաջարկած չափորոշիչների հետ: 2008թ. հուլիսից Արաբկիր ԲՀ-ն և Էրեբունի ԲԿ-ն սկսել են համատեղ իրականացնել պիլոտային ԼՆՍԾ, իսկ 2018թ. հուլիսից Հայաստանում գործում է համընդհանուր ԼՆՍԾ:

Արդյունքներ. 2008-2022թթ. հետազոտվել է 310,196 նորածին, այդ թվում՝ 341-ի մոտ հայտնաբերվել է լսողության խանգարում (1.1/1000), ինչը համապատասխանում է միջազգային միջինացված տվյալներին: Լսողության հայտնաբերված խանգարումներով նորածինների 30%-ի մոտ անամնեստիկ տվյալների վերլուծության արդյունքում հայտնաբերվել են ռիսկի գործոններ. ամենահաճախ հանդիպողներից են՝ ժառանգականություն, ինտենսիվ թերապիա, վաղաժամ ծննդաբերություն: ԼՆՍԾ ծածկույթը 2019-2022թթ. կազմել է ընդհանուր ծնունդների 90%-ը: Հայտնաբերված լսողական խանգարում ունեցող բոլոր երեխաները ներառված են Արաբկիր ԲՀ դիսպանսեր հսկողության ծառայությունում, անհրաժեշտության դեպքում նրանց հատկացվում են լսողական սարքեր, կատարվում է կոխլեար իմպլանտացիա: Երեխաները ստանում են սուրդոմանկավարժների, հոգեբանների, սոցիալական աշխատողների աջակցություն Արաբկիր ԲՀ վերականգնողական կենտրոններում: Այնուամենայնիվ կրկնակի հետազոտության կարիք ունեցող երեխաների մոտ 13%-ը դուրս է մնում հսկողությունից, և վերջնական ախտորոշման ու վաղ միջամտության մեկնարկի ժամկետը միջինում կազմում է 8.5 ամսականը:

Եզրակացություն. Կատարված վերլուծության արդյունքում վերհանվել են ԼՍՆԾ հիմնական խնդիրները և որոշվել են դրանց լուծման ուղիները: ԼՍՆԾ բարելավման և արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է տվյալների հավաքման էլեկտրոնային միասնական համակարգի ներդնում, բնակչության և առողջապահության առաջնային օղակի մասնագետների իրազեկվածության բարձրացում:

0223 Doctor Yan. Հայաստանում բժշկական ծառայությունների ամրագրման առաջին հարթակը
Doctor Yan: the first platform in Armenia that connects patients and doctors

Իրինա Ղազարյան, Զավեն Նաղաշյան
Դոկտոր Յան, Երևան, Հայաստան
Irina Ghazaryan, Zaven Naghashyan
Doctor Yan, Yerevan, Armenia

Doctor Yan հարթակը կապ է ստեղծում բուժառուների և բժիշկների միջև: Այն կազմված է երկու հավելվածներից՝ բուժառուների և բժիշկների համար: Doctor Yan հավելվածը հնարավորություն է տալիս բուժառուներին ընտրել բժիշկ՝ հիմնվելով բժշկի մասին առկա հավաստի տեղեկատվության ու այլ պացիենտների իրական կարծիքների վրա, ինչպես նաև ամրագրել այց նախընտրած բժշկի մոտ և նախընտրած բժշկի մոտ ամրագրել այց՝ առանց ավելորդ զանգերի և ժամանակի կորստի: Հավելվածի միջոցով օգտատերը կարող է նաև ամրագրել այց՝ ամրագրել իր ընտանիքի անդամների համար: Այս հնարավորությունը հատկապես կարևոր է սմարթֆոններից օգտվել չկարողացող մեծահասակների և երեխաների համար այց կազմակերպելիս: Այցից հետո բուժառուն կարող է կարծիք թողնել բժշկի մասին: Doctor Yan հարթակում բժշկի մասին կարծիք կարող են գրել միայն հավելվածի միջոցով տվյալ բժշկի մոտ գնացած օգտատերերը: Այսպիսով, հավելվածում կեղծ գնահատականներն անհնար են: Բժիշկների համար նախատեսված Doctor Yan Partner հավելվածը բժշկի անձնական օգնականն է՝ հավելվածի տեսքով: Հարմար և հեշտ օգտագործվող հավելվածն օգնում է կարգավորել բոլոր գրանցումները, թեթևանալ զանգերի անվերջ հոսքից և պացիենտներին առաջարկել շատ ավելի բարձր որակի փորձառություն օգնություն: Բժշկի բոլոր գրանցումները հեռախոսի մեջ են և միշտ հասանելի: Գրանցումների ողջ ընթացքին օգնում են հետևել աջակցման կենտրոնի աշխատակիցները: Doctor Yan Partner հավելվածում բժիշկը կարող է հեշտությամբ ակտիվացնել այն օրերն ու ժամերը, որոնց ընթացքում պատրաստ է ընդունել պացիենտներին: Doctor Yan-ի օգտատերերը, տեսնելով բժշկի ազատ ժամերը, կարող են առցանց գրանցման հայտ ուղարկել: Գրացման հայտը ստանալուց հետո բժիշկը կարող է հաստատել կամ չեղարկել այն՝ իր զբաղվածության համաձայն: Չեղարկման դեպքում աջակցման կենտրոնի աշխատակիցներն օգնում են գտնել ժամ, որը հարմար կլինի թե՛ բժշկի, և թե՛ պացիենտի համար: Doctor Yan-ը խրախուսում է նաև խրախուսում է կանխարգելիչ բժշկությունն ու նպաստում պացիենտների առողջության պահպանմանը: Այդ նպատակով հավելվածում ստեղծվել է տարեկան սկրինինգային հետազոտությունների անհատական ուղեցույց, որը հիմնված է պացիենտի սեռի և տարիքի վրա: Այդ գործառույթի շնորհիվ պացիենտները տեսնում են, թե իրենց ինչ հետազոտություններ են անհրաժեշտ և ինչպես նաև կարողանում առցանց հերթագրվել բժշկի մոտ:

0234 Կրծքագեղձի քաղցկեղի սքրինինգային պիլոտային ծրագիրը Հայաստանի Հանրապետության մարզերում. ճառագայթաբանական ասպեկտներ
Breast cancer screening pilot program in provinces of the Republic of Armenia: radiological features

Սոնա Ջիլավյան, Նարեկ Մանուկյան, Արթուր Ավետիսյան, Գագիկ Ջիլավյան, Մետաքսիա Մկրտչյան
Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն, Երևան, Հայաստան

Sona Jilavyan, Narek Manukyan, Artur Avetisyan, Gagik Jilavyan, Metaksya Mkrtchyana
Fanarjian National Center of Oncology, Yerevan, Armenia

Ներածություն. Վերջին քսանամյակում Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) նկատվում է կրծքագեղձի քաղցկեղով հիվանդացության զգալի աճ: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Եվրասիական կայունացման և զարգացման հիմնադրամի (EFSD) հետ համատեղ 2020թ. դեկտեմբերից ներդրվել և առ այսօր շարունակվում է ՀՀ Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերում կրծքագեղձի քաղցկեղի սքրինինգի պիլոտային ծրագիր, որն իրականացվում է ժողովրդագրական մեթոդով: Թիրախային բնակչություն են ընտրվել նշված մարզերի 50-69 տարեկան կանայք: Սքրինինգային հետազոտության և կրծքագեղձի քաղցկեղի վաղ ախտորոշման հիմքում ընկած է մամոգրաֆիան, որը հնարավորություն է տալիս կրծքագեղձում հայտնաբերել տարբեր նորագոյացություններ՝ սկսած 50-միկրոնանոց կալցիֆիկատներից մինչև 2-3մմ օջախներ, տարբերակել դրանց տեսակները:

Նպատակ. Սքրինինգային ծրագրի շրջանակներում ՀՀ մարզերում հայտնաբերված քաղցկեղի փուլերի հաճախականության գնահատում և դրանց համեմատական վերլուծություն մինչև սքրինինգային ծրագրի ներդրումը և վերջինիս ներդրումից հետո:

Եղանակներ. Հետազոտությունն իրականացվել է շարժական թվային ռենտգեն մամոգրաֆի (Hologic) միջոցով: Սքրինինգային ծրագրի շրջանակներում կիրառվող տոմոսինթեզով ռենտգեն-թվային մամոգրաֆիան վերջին տասնամյակների ամենամեծ ձեռքբերումն է մամոգրաֆիայի ոլորտում: Որպես հետազոտման մամոգրաֆիկ նկարագրություն ընտրվել է BI-RADS

դասակարգման ամերիկյան համակարգը: Հետազոտվել է երկու կլինիկական խումբ, որոնք ներառում են Տավուշ և Լոռի մարզերը, Սյունիքի մարզը ընթացիկ սքրինինգային պրոցեսում է: Տվյալները հավաքագրված են մինչև ծրագրի մեկնարկը (2019-2020թթ.) և ծրագրի մեկնարկից հետո (2021-2022թթ.):

Արդյունքներ. 2021թ. հունվարի 19-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ը հետազոտվել է 17,279 կին: BI-RADS-4 և -5 ախտորոշմամբ 1,242 հրավիրված կանանցից մեզ այցելել են 788-ը, որոնցից 174-ի մոտ հյուսվածաբանորեն հաստատվել է կրծքագեղձի քաղցկեղ: Ախտորոշված և հյուսվածաբանորեն հաստատված բոլոր դեպքերը ստացել են համալիր բուժում: Մինչև սքրինինգային ծրագրի մեկնարկը 2019-2020թթ. առաջին անգամ ախտորոշված 1,272 կանանց մոտ եղել է փուլավորման հետևյալ հարաբերակցությունը. I-II՝ 60%, III՝ 9.8%, IV՝ 15.9%: 2021-2022թթ. առաջին անգամ ախտորոշված և սքրինինգային ծրագրին մասնակցած 1,720 կանանց մոտ եղել է փուլավորման հետևյալ հարաբերակցությունը. I-II՝ 72.85%, III՝ 14.3%, IV՝ 12.85%:

Եզրակացություն. Կատարված հետազոտությունը ցույց է տվել սքրինինգային ծրագրի արդյունավետությունը Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերի 50-69 տարեկան կանանց շրջանում, ինչը հանգեցրել է I և II փուլերում կրծքագեղձի քաղցկեղի հայտնաբերման տոկոսի 1.2 անգամ բարձրացման: ՀՀ-ում ներդրված սքրինինգային պիլոտային ծրագրի իրականացումը հնարավորություն է տալիս կանխարգելել կրծքագեղձի քաղցկեղը կամ ախտորոշել այն զարգացման վաղ փուլերում, կազմակերպել արդյունավետ բուժում՝ փրկելով կանանց կյանքերը և նվազեցնելով հաշմանդամության ծավալը:

0239 Արտաընդերային վիրուսային հեպատիտների համաճարակաբանական դիտարկման համակարգի տվյալների վերլուծություն. Հայաստան, 2012–2022

Data analysis of the parenteral hepatitis surveillance system: Armenia, 2012–2022

Ռուբեն Գրիգորյան[1], Գենադի Պալոզյան[1,2], Ռոմելլա Աբովյան[1,2]
[1]ՀՀ ԱՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն, Երևան, Հայաստան
[2]ՀՀ ԱՆ Առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան

Ruben Grigoryan[1], Gennady Palozyan[1,2], Romella Abovyan[1,2]
[1]National Center for Diseases Control and prevention, MoH RA, Yerevan, Armenia
[2]National Instute of Health, MoH RA, Yerevan, Armenia

Ներածություն. Արտաընդերային վիրուսային հեպատիտները (ԱՎՀ) լուրջ առողջապահական խնդիր և սոցիալ-տնտեսական բեռ են ինչպես աշխարհում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ): Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլոբալ ռազմավարությունն է 2016-2030թթ. ընթացքում նվազեցնել հեպատիտով նոր դեպքերը 90%-ով, մահերը՝ 65%-ով, ինչին հնարավոր է հասնել դրանց վաղ հայտնաբերման, տարածման կանխարգելման և վերահսկման, պատվաստումների իրականացման միջոցով:

Նպատակ. Իրականացնել ՀՀ-ում ԱՎՀ համաճարակաբանական դիտարկման համակարգի տվյալների վերլուծություն:

Եղանակներ. Իրականացվել է ՀՀ-ում առկա ԱՎՀ համաճարակաբանական դիտարկման համակարգի ուսումնասիրություն, 2012-2022թթ. տվյալների ազգային բազայի տվյալների ամփոփում և նկարագրողական վերլուծություն:

Արդյունքներ. ՀՀ-ում 2015 թվականից գործում է վիրուսային հեպատիտների համաճարակաբանական դիտարկման համակարգ, որի շրջանակներում իրականացվում է դեպքերի հավաքագրում, վերլուծություն, առկա իրավիճակի գնահատում և կանխարգելիչ միջոցառումների իրականացում: Միաժամանակ գործադրվել է HBsAg և anti-HCV արագ թեստերով ռիսկի խմբերի շրջանում հեպատիտների վաղ հայտնաբերման մեխանիզմ, ինչպես նաև յուրաքանչյուր դեպքի համաճարակաբանական հետազոտություն՝ հավանական պատճառների բացահայտման նպատակով: 1999 թվականից ներդրվել է վիրուսային հեպատիտ Բ-ի (ՎՀԲ) դեմ պատվաստման գործընթաց՝ նորածինների և ռիսկի խմբերի շրջանում: 2012-2022թթ. հիվանդացության ցուցանիշը (ՀՑ) 100,000 բնակչի հաշվով սուր ՎՀԲ համար նվազել է 1.9-ից մինչև 0.1, սուր ՎՀՑ՝ 1.1-ից մինչև 0.4: Սուր ԱՎՀ-ների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 14% դեպքերում վարակը կարող է փոխանցված լինել բժշկական միջամտությունների ժամանակ, 21%-ում՝ սեռական ճանապարհով, 64%-ում՝ անհայտ, ՎՀԲ 33%-ում ատամնաբուժական միջամտությունների հետևանքով, իսկ ՎՀՑ 9%-ում բժշկական միջամտությունների և 27%-ում սեռական ճանապարհով: 2012-2022թթ. 0-14 տարեկան երեխաների շրջանում ՎՀԲ հիվանդացության ցուցանիշը նվազել է 2.8-ից մինչև 0.1: 2022թ. 1692 դեպքից 656-ում արձանագրվել է ՎՀԲ, այդ թվում՝ 3 սուր, 16 առաջնակի քրոնիկ, 637 HbsAg-կրություն: 1019 (60.2%) դեպքերում արձանագրվել է ՎՀՑ, այդ թվում՝ 11 սուր, 37 առաջնակի քրոնիկ, 982 anti-HCV-կրություն: ԱՎՀ բոլոր դեպքերի 63%-ն արձանագրվել է տղամարդկանց շրջանում:

Եզրակացություն. ՀՀ-ում դիտվում է նոր հայտնաբերված անախտանիշ ԱՎՀ (անտիգենակիրների և հակամարմնակիրների) դեպքերի աճ: Գործադրված պատվաստումային գործընթացի շնորհիվ զգալիորեն նվազել է ՎՀԲ-ով հիվանդացությունը երեխաների շրջանում: Անհրաժեշտ է շարունակել հակահամաճարակային միջոցառումների և սքրինինգային ծրագրերի լայնածավալ գործածումը՝ ՀՀ-ում ԱՎՀ-ով հիվանդացության շարունակական նվազեցման նպատակով:

0250 Բուժական գործընթացի կազմակերպումը համաճարակի ժամանակ
Healthcare process management during an epidemic

Սերգեյ Միրզոյան, Աննա Մարտիրոսյան
Երևանի պետական բժշկական համալսարան, Երևան, Հայաստան

Sergey Mirzoyan, Anna Martirosyan
Yerevan State Medical University, Yerevan, Armenia

Ներածություն. Պետության առջև ծառացած առաջնահերթություններից մեկը բյուջետային միջոցների հատկացումների օպտիմալացումն է, հատկապես համաճարակների ժամանակ: Տարբեր մակարդակներում բժշկական կազմակերպությունների բյուջետային հատկացումների ծախսերն իրականացնելու և օպտիմալացնելու նպատակով հրատապ խնդիր է համարվում առաջնային բուժօգնության նոր ծախսարդյունավետ մոդելների որոնումը, որոնցից լայն կիրառվում է ցերեկային ստացիոնարը:

Եղանակներ. Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում ցերեկային ստացիոնարի գործունեությունը կարգավորվում է ՀՀ Առողջապահության նախարարության 12 ապրիլի 2021 թ. «Արտահիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն եվ սպասարկում իրականացնող հաստատությունների կողմից 18 տարեկան և բարձր տարիքի պացիենտների ցերեկային ստացիոնարների կազմակերպման ընթացակարգը» N 19-Ն հրամանով: Սպասարկումը իրականացվում է քրոնիկական հիվանդությունների սրացումների, սուր՝ թերապևտիկ ուղղվածության շուրջօրյա բժշկական հսկողություն և բուժում չպահանջող հիվանդությունների, քրոնիկական հիվանդությունների բարդությունների կանխարգելման, ինչպես նաև բուժական միջոցառումների դեպքում: Նոր կորոնավիրուսային վարակի համաճարակի ժամանակ պլանավորված կարգով բժշկական օգնության տրամադրումը հիմնականում հանձնվում է առաջնային բուժօգնությանը, բացառությամբ այն հիվանդությունների և տրավմաների, որոնք պահանջում են ստացիոնար բուժում: Սակայն համաճարակի դեպքում հիվանդանոցային պայմաններում մատուցվող պլանային հիվանդներին բժշկական օգնության տրամադրումը խիստ սահմանափակվում է մահճակալների հիմնական մասի ինֆեկցիոն պրոֆիլի վերափոխման արդյունքում: Այդ պատճառով պլանային բժշկական օգնությունը հնարավոր է ցերեկային ստացիոնարի կամ տան պայմաններում:

Արդյունքներ. Արտահիվանդանոցային պայմաններում ցերեկային ստացիոնարների կազմակերպման ընթացակարգը նոր կորոնավիրուսային վարակի համաճարակի ժամանակ ցույց տվեց վերջինիս արդյունավետությունը: Ցերեկային ստացիոնարների կազմակերպումը և աշխատանքը լիարժեք ապահովեցին այդ հիվանդների բուժման գործընթացը և հնարավորություն ընձեռեցին՝

- հիվանդանոցի մահճակալային ֆոնդը արդյունավետ օգտագործել ծանր հիվանդների բուժման համար
- պլանային ստացիոնար բուժման հասանելիությունը բարձրացնել հիվանդների համար
- ամբուլատոր պայմաններում իրականացնել ախտորոշիչ, կանխարգելիչ, բուժական և վերականգնողական միջոցառումներ, որոնք ուղղված են շուրջօրյա բժշկական հսկողություն կարիք չունեցող պացիենտների ապաքինման արագացմանը կամ առողջության բարելավմանը
- համապարփակ ակտիվ բուժում իրականացնել այն հիվանդներին, ովքեր, ինչ-ինչ պատճառներով, չեն կարող հիվանդանոց տեղափոխվել համաճարակի ժամանակ առկա մահճակալների բացակայության պատճառով
- հիվանդանոցում բուժումից հետո հիվանդների առանձին կոնտինգենտի լրացուցիչ բուժում կազմակերպել
- ամբուլատոր պայմաններում ախտորոշիչ որոշ բարդ հետազոտություններ կատարել
- ամբուլատոր պայմաններում որոշ վիրաբուժական, օտորինոլարինգոլոգիական, ակնաբուժական և գինեկոլոգիական հիվանդություններ ունեցող հիվանդների վիրահատական միջամտությունների ծավալը ընդլայնել և իրականացնել
- աշխատունակ տարիքի հիվանդների ժամանակավոր անաշխատունակության ժամկետը կրճատել:

Եզրակացություն. Այսպիսով, համաճարակի ժամանակ ցերեկային ստացիոնարը կարող է որոշ չափով փոխարինել մասնագիտացված հիվանդանոցային բժշկական օգնությանը: Այն ապահովում է մահճակալային ֆոնդի արդյունավետ օգտագործումը, նվազեցնում է հիվանդանոցային չհիմնավորված հոսպիտալացումները, ինչպես նաև խնայողական միջոց է, հատկապես համաճարակի ժամանակ:

0277 Թիմային աշխատանքի կարևորությունը ավատավրկված անձանց մոտ վարակների հայտնաբերման նպատակով. կլինիկական դրսևորումների, կլինիկալաբորատոր և մանրէաբանական հետազոտությունների համադրում
The importance of teamwork in the detection of infections in imprisoned persons combination of clinical manifestations, clinical laboratory and microbiological studies

Անահիտ Դավթյան[2], Անահիտ Շառաֆյան[2], Արփինե Միրաքյան[2], Սիլվա Գաբրիելյան[1], Օլգա Դավթյան[1]
[1]ՀՀ ԱՆ Առողջապահության ազգային ինստիտուտ, Մանրէաբանության ամբիոն, Երևան, Հայաստան
[2]ՀՀ ԱՆ Քրեակատարողական բժշկության կենտրոն, Երևան, Հայաստան

Anahit Davtyan[2], Anahit Sharafyan[2], Arpine Mirakyan[2], Silva Gabrielyan[1], Olga Davtyan[1]
[1]National Institute of Health, MoH RA, Department of Microbiology, Yerevan, Armenia
[2]Correctional Medicine Center MoH RA, Yerevan, Armenia

Ներածություն. Սահմանափակ ախտորոշիչ հնարավորությունների պայմաններում առավել արդիական է դառնում հետազոտական պիտանի տեղեկատվական

տվյալների ստացումը կենսաբանական նյութերից: Վերջին շրջանում կատարված մեզի ընդհանուր կլինիկական քննությունների ժամանակ զգալի թվով դեպքերում ականառու առանձնանում էր լեյկոցիտուրիան՝ համադրված էպիթելային կոնգլոմերատների և անհայտ ծագման սպիտակուցային դետրիտների հետ: Նմանօրինակ պատկերը հիմք տվեց ենթադրելու, որ գործ ունենք որոշակի ծագման միկրոֆլորայի հետ:

Եղանակներ. Խտացված նստվածքից պատրաստված, հայտնի մեթոդներով ներկված պատրաստուկներում հայտնաբերվեցին գլիկոպրոտեիդային թաղանթներ՝ լիպիդային ներառուկներով և շաքարների ու աղերի բյուրեղներով: Նման կառուցվածքային տարրերը բնորոշ են վիրուսներին: Պատկերն առավել հստակեցնելու համար ընտրվեց ռեակցիոն միջավայրի հարստացման մեթոդ՝ մեր առկա աշխատանքային պայմաններին համապատասխանեցված որոշակի մոդիֆիկացիայով, ինչը հնարավորություն տվեց առանձնացնելու վիրուսներին բնորոշ կառուցվածքային տարրերը: Համաձայն ընտրված մեթոդի պահանջների՝ հետազոտվել է մեզի միջին բաժինն անմիջապես, հետևելով շերտավորմանը՝ պրեպարատները պատրաստվել են 3-րդ, 5-րդ և 7-րդ օրերին գոյացած շերտերից: Ներկվել են մեթիլենով, ֆուքսինով, ազուր էոզինով ըստ Ռամանովսկու-Գիմզեի, գենցիան վիոլետով: Հայտնաբերվել են ցիտոմեգալովիրուսին (ՑՄՎ) բնորոշ հայտնի աչք հիշեցնող պատկերը և/կամ վիրիոններ հիշեցնող այլ կառուցվածքային տարրեր՝ գլյուկոզի բյուրեղներով ծածկված գլիկոպրոտեիդային թաղանթ՝ ճարպային բնույթի ներառուկներով և վիրիոններով:

Արդյունքներ. Հետազոտությունների արդյունքները համադրվել են բուժառուների մոտ արձանագրված կլինիկական պատկերի և շճաբանական հետազոտությունների հետ: Մեզում նման պատկեր ունեցող 15 բուժառուներից 9-ի մոտ առկա են եղել ՑՄՎ-վարակի կլինիկական դրսևորումներ, 13-ի մոտ արձանագրվել է ՑՄՎ IgG (դրական), 5-ի մոտ ՑՄՎ IgM (դրական): Հարկ է նշել, որ իմունոգլոբուլինների որոշումը կատարվել է աշխատանքային խմբի նախաձեռնությամբ և միջոցներով, քանի որ այս հետազոտություններն են համարվում ախտորոշիչ ՑՄՎ-վարակի համար: Բացառելու համար, որ հայտաբերված տարրերը այլ մանրէաբանական ծագման չեն, համավարակ ունեցող բուժառուներից 4-ի մոտ կատարվել է մեզի մանրէաբանական հետազոտություն, իսկ 15-ի մոտ՝ բակտերիոսկոպիա: Արդյունքում համանման կառուցվածքային տարրերով մանրէներ չեն հայտնաբերվել: Առաջարկվող մոդիֆիկացիայով մեզի նմանօրինակ հետազոտություն կատարվել է ևս 4 բուժառուների մոտ, ովքեր չեն ունեցել կլինիկական որևէ դրսևորում և ունեցել են արձանագրված ՑՄՎ IgG (բացասական) պատասխան: Այս բուժառուները դիտարկվել են որպես ստուգիչ խումբ: Հետազոտությունների ընթացքում կլինիկական դրսևորում և ՑՄՎ IgM (դրական) ունեցող 5 բուժառուները ստացել են համապատասխան հակավիրուսային բուժում: Բուժումն ավարտելուց հետո կատարված հետազոտության ժամանակ ՑՄՎ-վարակին բնորոշ կառուցվածքային տարրեր չեն հայտնաբերվել:

Եզրակացություն. Այսպիսով, կատարված հետազոտությունների արդյունքները թույլ են տալիս առաջարկվող մոդիֆիկացիան կիրառել ՑՄՎ-վարակի ախտորոշման համար, եթե չկա հնարավորություն որոշելու իմունոգլոբուլինները: Այն թույլ է տալիս կատարել հիվանդության վաղ ախտորոշում և իրականացնել արդյունավետ ստացիոնար բուժում, ինչը աշխատանքային խմբի հիմնական նպատակն է:

0288 Հայաստանում կլիմայի փոփոխության և առողջության խոցելիության գնահատում
Climate change and health vulnerability assessment in Armenia

Անաստաս Աղազարյան, Դիանա Անդրեասյան, Շուշանիկ Իսահակյան
ՀՀ ԱՆ Առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան

Anastas Aghazarian, Diana Andreasyan, Shushanik Isahakyan
National Institute of Health, MoH RA, Yerevan, Armenia

Ժամանակակից աշխարհի խնդիրներից է կլիմայի փոփոխությունը, որն իրական սպառնալիք է ինչպես մարդկության, այնպես էլ բոլոր էկոհամակարգերի և ողջ բուսական ու կենդանական աշխարհի համար: Առողջապահության ոլորտում կլիմայի փոփոխության հակազդման նպատակով իրականացվել է Հայաստանում կլիմայի փոփոխության նկատմամբ առողջության խոցելիության գնահատում: Միջազգային մեթոդական ուղեցույցները, գործելակերպերը, տեղական ուսումնասիրությունները և այլ փաստաթղթերը հիմք են հանդիսացել կլիմայի փոփոխության և առողջության խոցելիության գնահատման համար: Կլիմայի փոփոխության և առողջության խոցելիության և հարմարվողականության պլանավորման ընդհանուր մեթոդաբանական մոտեցումը համահունչ է ԱՀԿ-ի «Պահպանել առողջությունը կլիմայի փոփոխությունից» (2013) ուղեցույցի պահանջներին: Հետազոտության տեղեկատվության աղբյուրներ են հանդիսացել Առողջապահության ազգային ինստիտուտի տվյալների հրապարակումները, ՀՀ Վիճակագրական կոմիտեի հրապարակումները, Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի տվյալները վարակիչ հիվանդությունների տարածվածության և դինամիկայի վերաբերյալ, ՄԱԶԾ և ՀՀ ՇՄՆ հրապարակումները՝ մասնավորապես կլիմայի փոփոխության մասին Հայաստանի ազգային հաղորդագրությունները, ջերմոցային գազերի գույքագրման հաշվետվությունները, «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի հրապարակումները, Առողջապահության համաշխարհային կազմակերպության մեթոդական ուղեցույցներն ու այլ հրապարակումները: Առողջության վրա կլիմայի փոփոխության ազդեցության հիմնական ռիսկերից դիտարկվել են ջերմաստիճանի և եղանակային պայմանների փոփոխությունը, օդի աղտոտվածությունը

և տարատեսակ վարակիչ հիվանդությունների տարածմանը նպաստող գործոնները:

Վերլուծության համար ընտրվել են հիվանդությունների հետևյալ տեսակները.

► Արյան շրջանառության համակարգի հիվանդություններ (I00 – I99)
- Գերճնշումային հիվանդություններ (I10 – I13)
- Սրտի իշեմիկ հիվանդություններ (I20 – I25)
- Ուղեղի անոթային հիվանդություններ (I60 – I69)

► Մթնոլորտային օդի աղտոտումից ազդակիր հիվանդություններ

► Մելանոմա և մաշկի այլ չարորակ նորագոյացություններ (C43 և C44)

► Վարակիչ հիվանդություններ:

Հետազոտության շրջանակում դիտարկվել են կլիմայի փոփոխության ազդեցության հետևյալ ուղիները և հետևանքները.

► Ջերմաստիճանի աճը, ջերմային ալիքների սեզոնային քանակն ու տևողությունը,

► Օդի որակի վատթարացումը,

► Ջրի և սննդի որակի վատթարացումը,

► Էկոհամակարգերի փոփոխությունը և դրանով պայմանավորված՝ կրծողների և վարակիչ հիվանդություններ փոխանցողների պոպուլյացիայի, տարածվածության ու վարակվածության մակարդակի փոփոխությունը:

► Առողջության համար հետևյալ հետևանքներ՝
- Հիվանդացություն
- Մահացություն
- Հոսպիտալացման դեպքերի փոփոխություն
- Շտապ բժշկական օգնության կանչերի թվի փոփոխություն:

Հետազոտության արդյունքում արձանագրվել է՝

► Ջերմաստիճանի միջին տարեկան արժեքների և ԱՇՀՀ հիվանդացության և մահացության դեպքերի աճ,

► Մահերի մեծ մասը բաժին է ընկնում վաղ գարնան, ուշ աշնան և ձմեռային ամիսներին:

Այլ գործոնների ազդեցության բացառման դեպքում առկա է նշանակալի կոռելյացիոն կապ, բոլոր գործոնների համալիր ազդեցության դեպքում ռեգրեսիոն ոչ նշանակալի կապ (բացառությամբ մաշկի մելանոմայի): Մահացության և լրացուցիչ ծայրահեղ (անոմալ) շոգ օրվա միջև կապն ավելի նշանակալի է, քան մահացության և լրացուցիչ ծայրահեղ ցուրտ օրվա միջև եղած կապը: Արձանագրվել է շտապ օգնության կանչերի և մահվան դեպքերի աճ ջերմային ալիքների օրերին:

0302 Տուբերկուլյոզ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ և Կովիդ-19 հիվանդությունների բեռը և տնտեսական, սոցիալական ու ժողովրդագրական հետևանքները
Tuberculosis, HIV/AIDS and Covid-19 disease burden and economic, social and demographic consequences

Անաստաս Աղազարյան, Դիանա Անդրեասյան
Առողջապահության Ազգային Ինստիտուտ, Երևան, Հայաստան

Anastas Aghazaryan, Diana Andreasyan
National Institute of Health, Yerevan, Armenia

Ներածություն. 2010 թվականին Առողջության ցուցանիշների և գնահատականների ինստիտուտի (IHME) կողմից կատարվել է մահացության և հիվանդություններից ու վնասվածքներից մահվան և հաշմանդամության պատճառների գնահատում, ինչը պատկերացում տվեց աշխարհում հիվանդությունների բեռի տարածվածության մասին, հստակեցրեց 291 հիվանդությունների և վնասվածքների 67 ռիսկի գործոն և համակցություն: Կայուն զարգացման նպատակների առողջապահության զարգացման ազգային ռազմավարության համատեքստում, Հայաստանում գնահատվել է ինչպես մի շարք վարակիչ հիվանդությունների բեռը, այնպես էլ՝ վաղաժամ մահացության և անաշխատունակության տնտեսական, սոցիալական ու ժողովրդագրական հետևանքները:

Եղանակներ. Վարակիչ հիվանդությունների բեռը գնահատվել է Համաշխարհային բանկի կողմից Առողջապահության համաշխարհային կազմակերպության հետ համատեղ մշակված «ոչ բավարար առողջությամբ ուղեկցվող տարիների թվի, կյանքի կորսված տարիների, հաշմանդամությամբ կամ ոչ լիարժեք առողջությամբ ճշգրտված կյանքի տարիների» (DALY) ինդեքսի հաշվարկման մեթոդով, իսկ տնտեսական հետևանքները և առողջապահական համակարգի ծախսարդյունքայնության վերլուծությունն իրականացվել է նկարագրական վիճակագրության և կորելյացիոն և ռեգրեսիոն կախվածությունների վերլուծական մեթոդներով: Հետազոտության համար օգտագործվել են պաշտոնական վիճակագրության և վարչական վիճակագրության տվյալները:

Արդյունքներ. Հետազոտությունն ընդգրկում է 2008-2018 թվականների համադրելի ժամանակահատվածը: Հիվանդության տնտեսական բեռը հաշվարկվում է որպես առողջապահական ծախսերի, սոցիալական օժանդակության և հիվանդության ու հաշմանդամության պատճառով բաց թողնված տնտեսական օգուտի հանրագումար: Նոր կորոնավիրուսային համավարակի սոցիալական հետևանքները դրսևորվեցին բնակչության կյանքի որակի և կենսապայմանների վատթարացման տեսքով: Ուսումնական հաստատությունների փակվելն ու հեռավար դասավանդման պրակտիկայի ներդրումը բացասաբար անդրադարձան ուսումնառության որակի վրա կրթության բոլոր մակարդակներում: Վատթարացավ բնակչության առողջական վիճակը, ինչի վկայությունը դարձավ հիվանդացության և մահացության ցուցանիշների աճը: Տնտեսական սահմանափակումների և հարկադիր պարապուրդում գտնվելու հետևանքով, կրճատվեցին բնակչության եկամուտները: Որոշակիորեն վատթարացավ երկրի ժողովրդագրական վիճակը:

Եզրակացություն. Հիվանդությունների բեռի և ծախսարդյունքայնության վերլուծությունը կարևորում է երկրում առողջապահական համընդհանուր ծածկույթի և համապիտանի ֆինանսավորման ապահովման անհրաժեշտությունը:

0303 Կլինիկական օրդինատուրայի վերանայումը Հայաստանում
Clinical residency review in Armenia

Գոհար Երիմյան[1], Լենա Նանուշյան[2], Ալեքսանդր Բազարչյան[1]
[1]ՀՀ ԱՆ Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան
[2]ՀՀ Առողջապահության նախարարություն, Երևան, Հայաստան

Gohar Erimyan[1], Lena Nanushyan[2], Alexander Bazarchyan[1]
[1]National Institute of Health, MoH RA, Yerevan, Armenia
[2]Ministry of Health of RA, Yerevan, Armenia

Ներածություն. Առողջապահական աշխատաշուկա որակյալ կադրային ներուժի մուտքն ապահովող առաջին նախապայմանը որակյալ բժշկական կրթությունն է: Բժշկական հետբուհական կրթությունը մասնագիտացման մի փուլ է, որը հաջորդում է բուհին և որի ավարտին ձևավորվում է ինքնուրույն մասնագիտական գործունեություն իրականացնելու պատրաստ մասնագետ: Բժշկական կրթության միջազգային ֆեդերացիան (WFME) տարիներ շարունակ զբաղվում է բժշկական կրթական ստանդարտների մշակմամբ, որոնց վրա են հիմնվում աշխարհի առաջատար բժշկական կրթական հաստատությունները: Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026թթ. միջոցառումների ծրագրում ներառվել է կլինիկական ռեզիդենտուրայի պիլոտային ծրագրի իրականացումը, որի նպատակն է իրականացնել ընդունված միջազգային ստանդարտներին և հետբուհական կրթական մոդելներին համապատասխան կրթական ծրագիր, ինչը թույլ կտա վերանայել հետբուհական կրթական գործընթացի կազմակերպաիրավական հիմքերը և մշակել համակարգի բարելավման ճանապարհային քարտեզը:

Եղանակներ. Միջազգային ստանդարտների և առկա մոդելների ուսումնասիրմամբ և համեմատական մեթոդի կիրառմամբ, Հայաստանի բժշկական հետբուհական կրթության համակարգը համեմատվել է ԱՄՆ և Եվրոպական մի շարք երկրների կրթական համակարգերի հետ: Կազմակերպվել են նաև հանդիպումներ հետբուհական կրթության ոլորտում ներգրավված տեղական և սփյուռքահայ գործընկերների մասնակցությամբ, որոնց ընթացքում ևս ներկայացվել և համեմատվել են Հայաստանի և մի շարք զարգացած երկրների համապատասխան մոդելները:

Արդյունքներ. Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ բոլոր ուսումնասիրված երկրներում կրթական ծրագրերը ստանդարտացված ու միօրինականացված են և առավելապես հիմնված են հմտությունների վրա (յուրաքանչյուր տարվա համար սահմանված են բժշկական միջամտությունների քանակություններ, որոնք ենթակա են պարտադիր կատարման): Հայաստանում հետբուհական մասնագիտացում անցնող բժիշկների թվաքանակի սահմանափակումներ չկան: Ընդունելության շեմը հաղթահարած բոլոր ուսանողները կարող են անցնել կլինիկական օրդինատուրա՝ վճարովի հիմունքներով, ինչը համադրելի չէ Եվրոպայում կամ ԱՄՆ-ում առկա մասնագիտացման գործող համակարգերի հետ: Այդ երկրներում այս բաղադրիչը ևս չափելի ու ստանդարտացված է: Կրթական ծրագրերով սահմանված են տվյալ մասնագիտությամբ անհրաժեշտ գործնական հմտությունների թվաքանակը, որոնք ռեզիդենտը պետք է կատարի իր ղեկավարի հսկողությամբ և ինքնուրույն: Այդ հաշվարկները համադրված են նաև երկրում առկա կլինիկական դեպքերի թվաքանակի հետ, ինչպես նաև, թափուր աշխատատեղերի թվաքանակի հետ: Ի տարբերություն մի շարք երկրների, Հայաստանում կլինիկական օրդինատորը իր ուսումնառության բազա հանդիսացող կլինիկայի աշխատակից չէ: Մինչդեռ ռեզիդենտները հանդիսանում են համալսարանական կլինիկայի աշխատակիցներ և վարձատրվում են իրենց ռեզիդենտուրայի ընթացքում: Որակի վերահսկման համակարգի առկայությունը կրթական գործընթացի կազմակերպման անբաժանելի մասն է կազմում: Ռեզիդենտների համար այդ վերահսկումը ամենօրյա բնույթ է կրում, քանի որ խիստ զարգացած է հետադարձ կապի համակարգը:

Եզրակացություն. Կլինիկական ռեզիդենտուրայի պիլոտային ծրագրի իրականացումը թույլ կտա գործնականում գնահատել բոլոր նշված մոտեցումների ու ստանդարտների կիրառման և նոր մոդելի ներդրման հնարավորությունները Հայաստանում:

0304 Հայաստանի Հանրապետությունում Ծխախոտային օրենքի կիրառումն ապահովելու նպատակով իրականացված մշտադիտարկման արդյունավետության գնահատում
Assessment of the effectiveness of monitoring implemented in order to ensure the enforcement of the Tobacco Law in the Republic of Armenia

Արևիկ Թորոսյան[1], Կարինե Աբրահամյան[1], Մարիամ Մնացականյան[2], Ալեքսանդր Բազարչյան[1], Լենա Նանուշյան[2], Արսեն Թորոսյան[3]
[1]ՀՀ ԱՆ Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան
[2]ՀՀ Առողջապահության նախարարություն, Երևան, Հայաստան
[3]ՀՀ Ազգային Ժողով, Երևան, Հայաստան

Arevik Torosyan[1], Karine Abrahamyan[1], Mariam Mnatsakanyan[2], Alexander Bazarchyan[1], Lena Nanushyan[2], Arsen Torosyan[3]
[1]National Institute of Health, MoH RA, Yerevan, Armenia
[2]Ministry of Health of RA, Yerevan, Armenia
[3]National Assembly of RA, Yerevan, Armenia

Նպատակ. «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի կիրառումը ապահովելու նպատակով ձևավորել մշտադիտարկման խումբ և աշ-

խատանքներն իրականացնել բնակչության և վերահսկողություն իրականացնող պետական մարմինների համագործակցության շնորհիվ: ԱՀԿ ԾՊԾԿ քարտուղարության աջակցությամբ համեմատել տարբեր երկրների լավագույն փորձը և ներդրել լավագույնը մեր երկրում:

Եղանակներ. Մշտադիտարկման աշխատանքներն իրականացվել են Երևան քաղաքում և ՀՀ 10 մարզերում՝ երեք ուղղությամբ ծխախոտային արտադրատեսակների, դրանց պատկանելիքների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների իրացման, գովազդի, վաճառքի խթանման և հովանավորության արգելքների ու սահմանափակումների նկատմամբ: Մշտադիտարկումն իրականացվել է տեսազննման եղանակով, յուրաքանչյուր օբյեկտի պատասխանատուին տրամադրվել է օրենքով նախատեսված սահմանափակումների վերաբերյալ իրազեկ թերթիկ, ինչպես նաև իրականացվել են իրազեկման աշխատանքներ: Օրենքի դրույթների խախտման հայտնաբերման դեպքում կազմվել է խախտման վերաբերյալ ձևաթուղթ, որը ստորագրվել է օբյեկտի պատասխանատու անձի կողմից: Մշտադիտարկումը և տվյալների արձանագրումը իրականացվել է էլեկտրոնային հարցաշարերի միջոցով: Մշտադիտարկման արդյունքները ամփոփ կերպով ներկայացվել են ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին և, այնուհետև, դրանք տրամադրվել են վերահսկողություն իրականացնող տեսչական մարմիններին:

Արդյունքներ. 2021-2022թթ. ժամանակահատվածում իրականացվել է թվով 3252 օբյեկտի մշտադիտարկում, որից՝ 77.9% օգտագործման, 75.7% գովազդի և 100.7% իրացման վերաբերյալ: Արդյունքում հայտնաբերվել են հետևյալ խախտումները. իրացման՝ թվով 996, օգտագործման՝ թվով 522 և գովազդի՝ թվով 832 խախտումներ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի դրույթների կրկնակի ստուգումների ժամանակ արձանագրվել են կրկնակի խախտումներ, որի արդյունքում կիրառվել են սույն օրենսգրքով նախատեսված տուգանքներ:

0305 Բուժաշխատողների անհատական լիցենզավորման համակարգի ներդնումը Հայաստանի Հանրապետությունում

Introducing the individual licensing system of medical professionals in the Republic of Armenia

Կարինե Աբրահամյան[1], Լենա Նանուշյան[2], Գոհար Երիմյան[1]
[1]ՀՀ ԱՆ Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան
[2]ՀՀ Առողջապահության նախարարություն, Երևան, Հայաստան

Karine Abrahamyan[1], Lena Nanushyan[2], Gohar Erimyan[1]
[1]National Institute of Health, MoH RA, Yerevan, Armenia
[2]Ministry of Health of RA, Yerevan, Armenia

Ներածություն. Մարդկային ներուժն առողջապահական համակարգի կառուցվածքի հենասյուներից է, որն իր անմիջական ներգործությունն ունի նաև առողջապահական ծառայությունների որակի վրա: Բուժաշխատողների գիտելիքներն ու հմտությունները, դրանց շարունակական բարելավումը նպաստում են նրանց հմտությունների պահպանմանն ու բարելավմանը, ինչի հետևանքով բարձրանում է մատուցվող առողջապահական ծառայությունների որակը, որն էլ անմիջականորեն արտացոլվում է բնակչության առողջության վրա: Այս ամենը հաշվի առնելով՝ ՀՀ կառավարության 2021-2026թթ. միջոցառումների ծրագրով նախատեսված է ներդնել բուժաշխատողների անհատական լիցենզավորման համակարգ, որի հիմնական նպատակն է բարձրացնել բժշկական օգնության և սպասարկման որակը՝ առողջապահության ոլորտի կադրային ներուժի որակի բարձրացման հաշվին և բուժաշխատողի համար սահմանել անհատական պատասխանատվություն՝ իր կողմից կատարված խախտումների համար ինքնուրույն պատասխանատվություն կրելու եղանակով:

Եղանակներ. Միջազգային փորձի ուսումնասիրության և համեմատական մեթոդի հիման վրա (ուսումնասիրվել են ԱՄՆ, Կանադայի, եվրոպական մի շարք երկրների համակարգերը) կատարվել է բուժաշխատողների անհատական լիցենզավորման համակարգերի ուսումնասիրություն, որի արդյունքում վերահաստատվել է վերջինիս գործնական կիրառելիության կարևորությունն ու ՀՀ-ում դրա ներդրման անհրաժեշտությունը:

Արդյունքներ. Հայաստանում բժշկական կադրային ներուժի կազմավորման ոչ մի փուլում որակի մշտական վերահսկողություն պետության կամ անկախ մարմինների կողմից չի իրականացվում: Սա հնարավորություն չի տալիս գնահատել կադրային ներուժի ձևավորման գործընթացը, ժամանակին գտնել բացերն ու առաջարկել դրանց հնարավոր լուծումները, ինչը բացասաբար է անդրադառնում որակի վերահսկման ու կառավարման գործընթացների վրա: Ներկայումս գործում է շարունակական մասնագիտական զարգացման (ՇՄԶ) ինստիտուտը, որը մարդկային ներուժի որակի բարելավման խնդիրն ամբողջությամբ չի լուծում, քանզի կադրերի ներուժի որակի մասին ամբողջական որակական գնահատական չի տալիս և հիմնականում գործընթացն իրականացվում է փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա:

Եզրակացություն. Քննարկվող համակարգի ներդրման արդյունքում ՇՄԶ գործընթացը կհամարվի լիցենզավորման գործընթացի բաղադրիչ և ՇՄԶ հավաստագիրը հիմք կհանդիսանա անհատական լիցենզիայի երկարաձգման համար: Համակարգի ներդրման արդյունքում ակնկալվում է.

1. Հանրային բժշկական օգնության և սպասարկման ոլորտում՝ փորձառու և սկսնակ բուժաշխատողների ներուժի որակի գնահատում՝ կանոնակարգված տեղեկատվության հավաքագրման միջոցով
2. Բուժաշխատողների մասնագիտական գործունեության ինքնուրույնության ապահովում, մոտիվացիայի խթանում և մասնագիտական գործունեության նկատմամբ վերահսկողության սահմանում
3. Բուժաշխատողի կողմից թույլ տրված սխալի, այդ

թվում էթիկական նորմերի խախտման դեպքում վերջինիս գործունեության սահմանափակում՝ լիցենզիան կասեցնելու կամ դադարեցնելու միջոցով
4. Կլինիկական օրդինատորների (ռեզիդենտների) կողմից կատարած աշխատանքի ծավալի սահմանում և դրա դիմաց օրինական վճարման հնարավորության ընձեռում
5. Լիցենզավորող հանձնաժողովին լիազորել քննելու նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից բուժաշխատողի գործունեության որակի վերաբերյալ բողոքները՝ լիազոր մարմնի սահմանված կարգով
6. Բժիշկների շարժունակության ապահովում և միջազգային ստանդարտներին մոտեցում՝ արտերկրներում լիցենզիայի ճանաչման պայմանով:

0309 Հայաստանի Հանրապետությունում Առողջապահության համաշխարհային կազմակերպության Ծխախոտի դեմ պայքարի շրջանակային կոնվենցիայի (ԱՀԿ ԾՊՇԿ) իրականացման ներդրումային հետազոտության արդյունքների գնահատում

Assessment of the results of the investment research on the implementation of the World Health Organization Tobacco Status Project (WHO SUՊ) in the Republic of Armenia

Ալեքսանդր Բազարչյան[1], Լենա Նանուշյան[2], Արսեն Թորոսյան[3]
[1]ՀՀ ԱՆ Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան
[2]ՀՀ Առողջապահության նախարարություն, Երևան, Հայաստան
[3]ՀՀ Ազգային Ժողով, Երևան, Հայաստան

Alexander Bazarchyan[1], Lena Nanushyan[2], Arsen Torosyan[3]
[1]National Institute of Health, MoH RA, Yerevan, Armenia
[2]Ministry of Health of RA, Yerevan, Armenia
[3]National Assembly of RA, Yerevan, Armenia

Նպատակ. Ծխախոտի օգտագործումը առողջապահության և կայուն զարգացման խնդիրներից մեկն է: Ծխախոտի սպառումը և արտադրությունը հանգեցնում են վաղ մահվան դեպքերի, հիվանդությունների առաջացման, առողջապահական մեծ ծախսերի և տնտեսական կորուստների, խորացնում են սոցիալ-տնտեսական անհավասարությունը և խոչընդոտում կայուն զարգացման նպատակների առաջընթացը: Հետազոտության նպատակն է գնահատել Հայաստանում ծխախոտի օգտագործման ներկայիս առողջապահական և տնտեսական բեռը և գնահատել, թե ինչպիսին կլինի ծխախոտի դեմ պայքարի նոր միջոցառումների իրականացման ազդեցությունը այդ բեռը նվազեցնելու վրա:

Եղանակներ. Գնահատվել է ծխախոտին վերագրվող հիվանդություններից մահացությունը և հիվանդացությունը, ԱՀԿ ԾՊՇԿ ծխախոտի դեմ պայքարի դրույթների ազդեցությունը ծխելու տարածվածության վրա, ծխելու տարածվածության փոփոխությունների ազդեցությունը ծխախոտին վերագրվող արդյունքների և տնտեսական ծախսերի վրա, ինչպես նաև ծխախոտի դեմ պայքարի դրույթների ծախսերը:

Արդյունքներ. Ներդրումային հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ առաջիկա 15 տարիների ընթացքում ԾՊՇԿ ծխախոտի դեմ պայքարի յոթ ապացուցված միջոցառումների (ծխախոտի հարկերի բարձրացում, ծխելու՝հասարակական վայրերում արգելք, առողջությանը սպառնացող վտանգների նախազգուշացումների՝ ծխախոտի տուփի մակերեսի առնվազն 50 տոկոսի կազմում, միատեսակ փաթեթավորման իրականացում, հասարակության իրազեկման ապահովում, ծխախոտի գովազդի, իրացման խթանման և հովանավորության բոլոր ձևերի համակողմանի արգելք, ծխախոտից կախվածության նվազեցմանը և ծխելը դադարեցման՝ առողջապաության ոլորտի մասնագետների վերապատրաստում և խորհրդատվության տրամադրում) ընդունումն ու իրականացումը թույլ կտա խուսափել 889.1 միլիարդ դրամի տնտեսական վնասներից, ապահովել ծխախոտի հետ կապված առողջապահական ծախսերից խուսափելու միջոցով լրացուցիչ 246.4 միլիարդ դրամի խնայողություն, փրկել 23,245 կյանք և նվազեցնել հիվանդացությունը, ապահովել տնտեսական օգուտ (889.1 միլիարդ դրամի), որն էապես կգերակշռի ԱՀԿ ԾՊՇԿ 7 միջոցառումների իրականացման ծախսերը (10.4 միլիարդ դրամ):

0314 Էլեկտրոնային առողջապահության համակարգի ներդնումը Հայաստանի Հանրապետությունում

Introduction of the Electronic Healthcare System in the Republic of Armenia

Քրիստինա Սարգսյան[1,2], Արմինե Սարգսյան[1], Արմինե Լուլեջյան[3], Թամարա Գալոյան[4]
[1]Առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան
[2]Գլասբո կլինիկա, Երևան, Հայաստան
[3]Հարավային Կալիֆորնիայի համալսարան, Կեկի բուժական ֆակուլտետ, Լոս Անջելես, ԱՄՆ
[4]Դրեքսելի համալսարան, Լոս Անջելեսի մանկական հիվանդանոց, Լոս Անջելես, ԱՄՆ

Kristina Sargsyan[1,2], Armine Sargsyan[1], Armine Lulejian[3], Tamara Galoyan[4]
[1]National Institute of Health, Yervan, Armenia
[2]Glasbo clinic, Yerevan, Armenia
[3]University of Southern California, Keck School of Medicine, Los Angeles, USA
[4]PhD School of Education, Drexel, Children's Hospital of Los Angeles, USA

Ներածություն. Թվային առողջապահությունը տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների, համակարգչային գիտության և տվյալների համակարգված կիրառումն է՝ աջակցելու անհատներին, առողջապահական աշխատուժի և առողջապահական համակարգերի կողմից որոշումների կայացմանը՝ ամրապնդելու հիվանդությունների նկատմամբ կայունությունը և բարելավելու առողջությունը և բարեկեցությունը: Աշխարհում ընթացող թվային փոխակերպումների գործընթացներում ամենամեծ մարտահրավերը առողջապահության թվայնացումն է, որը ամբողջ առողջապահական համակարգի տվյալների թվայնացում է, դրանց կառավարման, փոխանակման ամբողջական ավտոմատացումը: Թվային առողջապահական գործիքները կարող են հետևել և գեներացնել տեղեկատվությունը և դրանք ձևավորել այնպես, որ տվյալների ելքը ազդի ծրագրային որոշումների և հանրային առողջության արդյունքների վրա: Բավարար տվյալների առկայությունը միշտ կարող է հանգեցնել ավելի ճշգրիտ որոշումների կայացմանը: Թվային առողջապահությունը ապահովում է մատչելիություն, ծառայությունների մատուցման բարելավում, հաշվետվողականության, որակի բարձրացում և արդյունավետություն, առողջության ապահովագրություն: 2017 թվականին Հայաստանի Հանրապետությունում մեկնարկվել է էլեկտրոնային առողջապահության համակարգի ներդրումը, որի զարգացման և սպասարկման գործառույթները Կառավարությունը պատվիրակել է էլեկտրոնային առողջապահության օպերատորին: Էլեկտրոնային առողջապահության ներդրման նպատակը հանրային ծառայությունների մատուցման բարելավումն է: Ունենալով հավաքագրված թվային որակյալ տվյալներ՝ երաշխավորում ենք պացիենտին որակյալ ծառայություն, բժշկին՝ որակյալ ծառայության մատուցում, առողջապահության կազմակերպիչներին՝ վերլուծելու, կանխատեսելու, որոշելու քաղաքականություն՝ հնարավորություն տալով ապահովել առողջապահական գլոբալ ծածկույթ, անկախ սոցիալ-տնտեսական վիճակից՝ մատչելի և հասանելի առողջապահական ծառայություններ: Մեթոդաբանություն. Էլեկտրոնային առողջապահության համակարգի մեկնարկին իրավական կարգավորումների բացակայության պատճառով սկզբնական շրջանում ապահովվում էր հիմնականում անվճար և արտոնյալ պայմաններով մատուցվող ծառայությունների մասին տվյալների հավաքագրման և ֆինանսավորման գործընթացը: 2020 թվականին իրականացվեցին օրենսդրական փոփոխություններ, մշակվեցին և հաստատվեցին էլեկտրոնային առողջապահության համակարգի գործունեության իրավական կարգավորումները, մասնավորապես՝ էլեկտրոնային առողջապահության համակարգի զարգացման միջոցառումների ծրագիրը, որը ներառում էր բժշկական փաստաթղթերի թվայնացումը, էլեկտրոնային դեղատոմսը, էլեկտրոնային ուղեգրերը, էլեկտրոնային անաշխատունակության թերթիկը, հիվանդությունների ռեգիստրները և այլ բաղադրիչներ: Ներդրման նպատակով Առողջապահության նախարարությունը բժշկական կազմակերպություններին ապահովեց համակարգիչներով և բժշկական անձնակազմի շարունակական վերապատրաստումներով:

Արդյունքներ. Ներկա պահին էլեկտրոնային առողջապահության համակարգը օգտագործվում է Հայաստանի Հանրապետության շուրջ 600 բժշկական կազմակերպություններում, որոնց թիվը շարունակաբար աճում է, և վեց ապահովագրական ընկերությունում: Էլեկտրոնային առողջապահության համակարգում արդեն իսկ ներդրվել են և շարունակում են ներդրվել բժշկական ստանդարտներ, որոնց միջոցով իրականացվում են կլինիկական տվյալների հավաքագրում: Համակարգի զարգացումը շարունակվում է ժամանակի մարտահրավերներին համընթաց: Օրինակ՝ համավարակի դեմ պայքարում համակարգում արագ լուծումների արդյունքում հնարավոր եղավ ավելի արդյունավետ կազմակերպել գործընթացները: Եզրակացություն. Թվային փոխակերպումների ժամանակաշրջանում կենսական է կառավարել առողջապահական տվյալները, նրանց հիման վրա անել կանխատեսումներ, մշակել քաղաքականություն՝ պահպանելով տվյալների պաշտպանվածությունը և անվտանգությունը: Այս ամենը միտված է հանրային առողջության բարելավմանը:

0335 Պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության հիմնախնդիրը Հայաստանում

The issue of gender biased sex selection in Armenia

Կարինե Սարիբեկյան[1], Զարուհի Տոնոյան[2], Կարեն Այվազյան[3]
[1]Առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան
[2]ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակ, Երևան, Հայաստան
[3]ՕքսԵՋեն հիմնադրամ, Երևան, Հայաստան

Karine Saribekyan[1], Zaruhi Tonoyan[2], Karen Ayvazyan[3]
[1]National Institute of Health, MoH RA, Yerevan, Armenia
[2] UN Population Fund Armenia Office, Yerevan, Armenia
[3] OxYGen Foundation, Yerevan, Armenia

Նախաբան. Պտղի սեռի խտրական ընտրության հիմնական դրսևորումը՝ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը, աշխարհի շատ երկրներում հանգեցրել է ժողովրդագրական ճգնաժամի և խորացրել գենդերային հավասարության հիմնախնդիրը: Ըստ 2021թ. Գենդերային ճեղքման գլոբալ զեկույցի՝ Հայաստանի նորածինների սեռերի անհամամասնության ցուցանիշը տարածաշրջանում ամենաբարձրն է. 153 երկրների մեջ Հայաստանը 98-րդ, Ադրբեջանը՝ 94-րդ, Վրաստանը՝ 74-րդ տեղում է: Խնդիրն այս Հայաստանի համար շարունակական մարտահրավեր է՝ սկսած 1990-ականներից: Մեզանում տղա երեխա ունենալուն ակնհայտ նախապատվություն է տրվում: Վերջինս, գումարվելով հղիության վաղ շրջանում պտղի սեռը պարզելու տեխնոլոգիաների մատչելիությանը, հանգեցրել է նորածինների սեռերի միջև բնական հավասարակշռության կոպիտ խախտման: Իրավիճակը ավելի է բարդացել ծնելիության անկման արդյունքում: Նորածինների սեռերի բնականոն հարաբերակցությունը կազմում է 102-106 տղա՝ 100 աղջկա հաշվով: Ըստ ՀՀ իճակագրական կոմիտեի

տվյալների՝ 2000-ականներին այն հասել է 120:100 հարաբերակցության: Ցուցանիշը կայունացել է 2010թ.՝ 114:100 մակարդակում: Այնուհետ այն բարելավվել է, 2021թ.ն՝ հասնելով 108,8:100 ցուցանիշի:

Եղանակներ. Հետազոտությունն իրականացվել է 2022 թվականին՝ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի կողմից՝ ՕքսԵՋեն հիմնադրամի հետ համագործակցությամբ: Հետազոտության փուլերն իրականացրել է Բրեվիս թիմը՝ քանակական և որակական մեթոդների համադրությամբ, կիրառելով տվյալների հավաքագրման 3 գործիքակազմ՝ փաստաթղթերի վերլուծություն, հեռախոսային հարցազրույցներ Հայաստանում բնակվող, երբևէ հղիություն ունեցած 18-49 տարեկան 1,920 կանանց հետ և 5 ֆոկուս խմբային քննարկում՝ բուժաշխատողների, փորձագետների և ամուսնացած կանանց ու տղամարդկանց մասնակցությամբ: Համեմատական վերլուծությունը հնարավոր դարձնելու համար կիրառվել է 2017թ. անցկացված նույնանուն հետազոտության մեթոդաբանությունը և ընտրանքի չափը:

Արդյունքներ. Հետազոտության արդյունքների համաձայն և՛ ընտանիքում, և՛ շրջապատում տղաներին նախապատվություն տվողների տեսակարար կշիռն աղջիկների համեմատ ավելի մեծ է: Նախորդ՝ 2017թ. հետազոտության համեմատ, երկու սեռին էլ հավասարապես վերաբերվողների տեսակարար կշիռը նվազել է, իսկ հղիության ընթացքում որևէ սեռի երեխային նախապատվություն տվողների տեսակարար կշիռը շուրջ 1,5 անգամ աճել է: Մասնավորապես, հարցվածների 53% կարծում է, որ իր շրջապատում նախապատվությունը տալիս են տղա երեխաներին (2017թ.՝ 38%), իսկ 18%-ը նշել է, որ իր ընտանիքում ևս նախապատվությունը տղաներին են տալիս (2017թ.՝ 13%): Հարցվածների ընդամենը 11%-ն է նշել, որ և՛ ընտանիքում և՛ շրջապատում նախապատվությունը տալիս են աղջիկներին:

Եզրակացություն. Հետազոտության արդյունքները փաստում են, որ, չնայած պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքարում արձանագրված առաջընթացին, 2022թ.-ին՝ ցուցանիշը վատացել է՝ հասնելով 111.9:100-ի: Այսպիսով, տղաների նախապատվությունը շարունակում է մնալ լրջագույն գենդերային հիմնախնդիր, և առաջիկա գործողությունները պետք է լինեն շարունակական, ուղղված խորքային պատճառների հաղթահարմանը ու իրականացվեն միջսեկտորալ համագործակցության պայմաններում:

0338 Մանկաբուժական ծառայության մարդկային ռեսուրսներով ապահովվածության հիմնախնդիրները առողջության առաջնային պահպանման համակարգում

Human resources security of pediatric service fundamental issues in primary health care

Կարինե Սարիբեկյան[1], Դավիթ Մելիք-Նուբարյան[2], Գոհար Երիմյան[1]
[1]Առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան
[2]Երևանի պետական բժշկական համալսարան, Երևան, Հայաստան

Karine Saribekyan[1], Davit Melik-Nubaryan[2], Gohar Erimyan[1]
[1]National Institute of Health, Yerevan, Armenia
[2]Yerevan State Medical University, Yerevan, Armenia

Նախաբան. Երեխաների և դեռահասների առողջության և զարգացման կարգավիճակը զգալի չափով կանխորոշում է հասարակության ապագա բարեկեցությունը, հանդիսանում տնտեսական և սոցիալական կայուն զարգացման գրավական, իսկ երեխայի առողջության պահպանման ոլորտում կատարվող ներդրումները դիտարկվում են որպես բարեկեցիկ ապագային ուղղված արդյունավետ ներդրումներ: Խորհրդային տարիներին առողջության առաջնային պահպանման համակարգում երեխաների բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացվում էին մանկաբույժների կողմից: 1990-ականների սկզբին երկրի առողջապահական համակարգում աշխատում էր շուրջ 2000 մանկաբույժ: Անկախացումից հետո ժառանգված առողջապահական համակարգի՝ ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության մանկաբույժներով հագեցված լինելու հանգամանքը և երեխաների հետ նրանց պատասխանատու աշխատանքը մեծ դեր խաղացին երկրում մանկական մահացության ցուցանիշի իջեցման գործընթացում (1990թ.՝ 18.6%, 2000թ.՝ 15.6%, 2010թ.՝ 11.6%, 2020թ.՝ 7.4%):

Եղանակներ. Սույն հետազոտությունը նպատակ ունի մանկաբուժական ծառայության կազմակերպման, մարդկային ռեսուրսներով ապահովվածության ներկայիս իրավիճակի ուսումնասիրության միջոցով վեր հանել այն հիմնախնդիրները, որոնց հաղթահարմանն ուղղված գործողությունները կարող են բարելավել երեխաների բուժսպասարկման որակը՝ առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակում: Կիրառվել են տվյալների հավաքագրման հետևյալ գործիքակազմերը՝ միջազգային փորձի և ոլորտը կանոնակարգող փաստաթղթերի ուսումնասիրություն, վիճակագրական տվյալների համեմատական վերլուծություն և զրույցներ առաջին կուրսի կլինիկական օրդինատորների հետ:

Արդյունքներ. Իրականացված համակարգային փոփոխությունների և մանկաբուժական ֆակուլտետի փակմամբ պայմանավորված, 2000-2020թթ. ընթացքում առաջնային օղակի մանկաբույժների թիվը շարունակաբար նվազել է 1990թ. համեմատ կրճատվելով երկու և ավելի անգամ (1990թ.՝ 2000, 2020թ.՝ 946): Պոլիկլինիկաներում արձանագրվում է երիտասարդ մասնագետների գնալով խորացող պակաս՝ գործող մանկաբուժական անձնակազմի շարունակական «ծերացման» ֆոնի վրա: 2017թ. մանկաբույժների ընդհանուր թվում 55 և բարձր տարիքի անձիք կազմել են 49%, 2021թ.՝ արդեն 61%: Վերջին տարիներին առաջնային օղակի մանկաբույժների թիվը տարեկան միջինում կրճատվում է 8-10 մասնագետով: Ստեղծված իրավիճակը բերում է թանկարժեք հիվանդանոցային բեռի զգալի աճի՝ ԱԱՊ համակարգի նկատմամբ վստահության նվազման և բուժաշխատողների մոտ մոտիվացիոն մեխանիզմների բացակայության ֆոնի վրա: Մանկաբուժական ծառայության մարդկային ռեսուրսների խնդիրը առավել ակտուալ է մարզերում, իսկ վերջին

տարիներին՝ նաև Երևանում: Միևնույն ժամանակ, բուհական և հետբուհական ծրագրերում մանկաբուժություն առարկային տրամադրվում է նվազագույն չափաքանակՄանկաբուժությունը չընտրելու պատճառների մեջ գրեթե բոլոր կլինիկական օրդինատորները նշել են պատասխանատու, թեև միևնույն ժամանակ ցածր վարձատրվող աշխատանքը:

Եզրակացություն. Մանկաբույժների և ընտանեկան բժիշկների հետդիպլոմային կրթական ծրագրերը վերանայման կարիք ունեն: ԱԱՊ օղակի համար անհրաժեշտ ընդհանուր պրակտիկայի մանկաբույժները կարող են պատրաստվել ավելի կարճաժամկետ ծրագրով, որի թեմաներում հիվանդ երեխային վերաբերող հարցերից շեշտադրումը պիտի տեղափոխվի առողջ երեխաների հսկողության, աճի և զարգացման գնահատման, կանխարգելիչ

0381 Հեռաառողջապահություն ներդնումը Հայաստանի Հանրապետությունում
Telemedicine introduction in the Republic of Armenia

Ծաղկանուշ Սարգսյան, Ռուզաննա Մովսեսյան
Առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան
Tsaghkanush Sargsyan, Ruzanna Movsesyan
National Institute of Health, Yerevan, Armenia

Ներածություն. Աշխարհում ընթացող թվային փոխակերպումների գործընթացներում մեծագույն մարտահրավեր է առողջապահության թվայնացումը, որը ամբողջ առողջապահական համակարգի տվյալների թվայնացումն է, դրանց կառավարման և փոխանակման ամբողջական ավտոմատացումը: Թվային առողջապահության կարևոր բաղադրիչ է հեռաառողջապահությունը: Հեռաառողջապահությունը առողջապահական ծառայությունների մատուցումն է առանց բժշկական հաստատություն այցելելու՝ օգտագործելով տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ ախտորոշման, բուժման, կանխարգելման, հետազոտման և գնահատման, ինչպես նաև շարունակական մասնագիտական զարգացման համար: Հեռաառողջապահությունը թվային առողջապահության առանցքային բաղադրիչ է, որը ապահովում է որակյալ, մատչելի և հասանելի բժշկական ծառայություններ՝ ապահովելով գլոբալ ծածկույթ: Բնակչության աճին համահունչ առողջապահական համակարգը ի զորու չէ ապահովել որակյալ բժշկական ծառայություններ յուրաքանչյուրին՝ անտեսելով նորարարական տեխնոլոգիական լուծումները: Հայաստանի Հանրապետության (ՀՀ) առողջապահության նախարարությունը իր կառավարման ոլորտում նույնպես ունի հեռաառողջապահական բաղադրիչների կիրառման մի քանի հաջողված փորձեր և նորերի ներդրման պահանջարկ:

Նպատակ. Հեռաառողջապահության ներդրումը խթանելու համար ստեղծել նպաստավոր պայմաններ, որը իրենից ենթադրում է իրավական կարգավորումներ և ռազմավարական գործողությունները կարգավորող փաստաթղթեր:

Մեթոդաբանություն. ՀՀ-ում հեռաառողջապահության ներդրման մենարկը տրվել է 2015թ., սակայն իրավական կարգավորումների և մշակույթի բացակայության պատճառով զարգացում չի ապրել: 2020թ. իրականացվեցին օրենսդրական փոփոխություններ, որից բխելով մշակվեց և հաստատվեց հեռաբժշկության փոխհարաբերությունները սահմանող կարգ՝ բժիշկ-բժիշկ և բժիշկ-պացիենտ: Առողջապահության նախարարությունը ոլորտը զարգացնելու նպատակով ազգային և միջազգային հանդիպումների և քննարկումների արդյունքում հավաքագրեց բավարար տեղեկատվություն Հայաստանի Հանրապետությունում հեռաբժշկության ներդրման տեսլականի ձևավորման համար: Դիտարկվեցին Հայաստանում չհաջողված և հաջողված բոլոր փորձերը, հստակեցվեցին ձախողման կամ հաջողման պատճառները, տրվեցին գնահատականներ, եզրահանգումներ: Հստակեցվեց մեթոդաբանություն՝ ռազմավարական գործողություններ, որոնցով պետք է առաջնորդվել ներդրման և զարգացման փուլերում:

Արդյունք. Մշակվեց և հաստատվեց ՀՀ առողջապահության նախարարի հրաման, որը սահմանում է հեռաբժշության կարգը՝ թիվ 42-Ն, 2022թ.: Առողջապահության առաջնային պահպանման բարելավման միջոցառումների ցանկում ներառվեց հեռաառողջապահության ներդրումը և զարգացումը, որը ենթադրում է հեռաառողջապահության ռազմավարության և ճանապարհային քարտեզի նախագծի մշակումը՝ անհրաժեշտ մասնագետների ներգրավմամբ:

Եզրակացություն. Հեռաբժշկությունը հնարավորություն կտա գյուղական վայրերում հասանելի դարձնել որակյալ բուժօգնություն՝ ապահովելով ժամանակի և ֆինանսական խնայողություններ: Հեռաբժշկության տարր հանդիսացող կրելի սարքերի միջոցով հնարավոր կլինի տարբեր սքրինինգային հետազոտությունների իրականացում, որի արդյունքում ինքնաշխատ կհավաքվի իրական ժամանակում վստահելի տեղեկատվություն մարդու առողջական վիճակի վերաբերյալ, որը թույլ կտա բժշկին կանխարգելել, վերահսկել, ուժեղացնել գործիքակազմերը՝ բեռնաթափելով հիվանդանոցային օղակը, նպաստել որակյալ և ժամանակին խնդիրների լուծմանը: Հավաքված բժշկական տեղեկատվության հիման վրա կկատարվեն կանխատեսումներ հետագա առողջապահական ռազմավարական ուղղությունները քաղաքականության մեջ ընդգրկելու համար:

0384 Բուժաշխատողների ռեգիստրի ներդնում
Introduction to the Register of Medical Professionals

Ծաղկանուշ Սարգսյան, Դիանա Անդրեասյան
ՀՀ ԱՆ Ակադ. Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան
Tsaghkanush Sargsyan, Diana Andreasyan
National Institute of Health MoH RA, Yerevan, Armenia

Ներածություն. Բուժաշխատողների ազգային ռեգիստրը երկրի հանրային առողջության կառավարման առանցքային գործիք է, որի ճշգրիտ և անընդհատ թարմացվող տվյալները հիմք են աշխատուժի պատշաճ պլանավորման, բժշկական անձնակազմի նպատակային ուսուցման, շարունակական մասնագիտական զարգացման և առողջապահական մասնագետների հավատարմագրման գործընթացների կազմակերպման ոլորտներում կիրառման համար: Ընդունելով մարտահրավերները՝ Հայաստանի Հանրապետությունը՝ Ասիական Զարգացման Բանկի հետ համատեղ 2021թ. նախաձեռնել է ռեգիստրի ներդնումը:

Նպատակը. Ներդնել բժշկական անձնակազմի հավաստի տվյալներով համապարփակ համակարգ՝ բացառելով անճշտությունները, կրկնությունները, որը կծառայի ռեսուրսների կառավարմանը, բուժաշխատողների հագեցվածության ապահովմանը՝ կանխատեսման և պլանավորման հնարավորությամբ:

Եղանակներ. Ռեգիստրի նախագծումն սկսվել է Ասիական Զարգացման Բանկի և Առողջապահության ազգային ինստիտուտի կողմից բիզնես պրոցեսների վերլուծությամբ, կատարվել է տվյալների քարտեզագրում և տեխնիկական առաջադրանքի կազմում: ՀՀ կառավարության որոշումով հաստատվել է ռեգիստրի վարման կարգը: Մրցույթով հաղթած կազմակերպությունը, ստեղծված աշխատանքային խմբի հետ մեկտեղ, պարբերական հանդիպումների ընթացքում փուլային իրականացրել է սահմանված պահանջները: Երեք բժշկական կազմակերպությունների աշխատակիցների հետ իրականացվել են դասընթացներ և ռեգիստրի փորձարկում: Մշակվում է օգտատերերի համար տվյալների մուտքագրման մեթոդաբանություն՝ ապահովելու հավաստի տվյալների արագ հավաքագրումը:

Արդյունք. Ռեգիստրը փորձարկված է և առկա են բուժաշխատողների՝ հազարից ավել գրառումներ: Առողջապահության ազգային ինստիտուտում ստեղծվել է ստորաբաժանում, որը պատասխանատու է ռեգիստրի ներդրման, տվյալների հավաստիության, ամբողջականության և կառավարման համար:

Եզրակացություն. Թվային փոխակերպումների և առկա մարտահրավերների ժամանակաշրջանում, ինչպիսիք էին համավարակը և պատերազմը, թվային իրատեսական տվյալների վրա հենված բուժաշխատողների ռեգիստրը թույլ է տալիս գնահատել բուժաշխատողների ներուժը՝ ձևավորելով պահանջարկ, ապահովում է մասնագետների ռեսուրսի արդյունավետ բաշխումը՝ խնայելով ժամանակը: Զարգանալով և ինտեգրվելով այլ համակարգերի հետ, ինչպիսիք են ոսումնական և աշխատանքի տեղեկատվական համակարգերը, այն կարող է փոխակերպվել աշխատաշուկայի, որտեղ առկա տվյալները գործատուներին հասանելի կդարձնեն անհրաժեշտ մասնագետների ներգարվումը, որը կբարձրացնի ղեկավարման հաշվետվողականությունը և թափանցիկությունը:

0425 Covid-19. քաղված դասեր
Covid-19: lessons learned

Արսեն Թորոսյան
ՀՀ Ազգային Ժողով, Երևան, Հայաստան

Arsen Torosyan
National Assembly of the Republic of Armenia,
Yerevan, Armenia

Նոր կորոնավիրուսային համաճարակը (Covid-19) աննկարագրելի ազդեցություն է ունեցել միլիոնավոր մարդկանց վրա և խլել բազմաթիվ կյանքեր: Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Առողջապահության նախարարությունը (ԱՆ) նախաձեռնել է մի շարք արդյունավետ միջոցառումներ, որոնց նպատակն էր կանխարգելել Covid-19-ի ներթափանցումը Հայաստան՝ սահմանելով Covid-19-ի նմուշառման, լաբորատոր հետազոտության, կանխարգելման կարգը, իսկ բացահայտման դեպքում պացիենտի խնամքի իրականացումը, վարակակիրների մեկուսացումը և բուժումը: Բոլոր սահմանային անցակետերում երկիր ժամանող բոլոր քաղաքացիների նկատմամբ սահմանվել էր խստացված հակահամաճարակային հսկողություն: ՀՀ-ում սահմանվել էր արտակարգ իրավիճակ, իսկ որոշ ժամանակ խիստ կարանտինային հսկողություն և սահմանափակվել բոլոր քաղաքացիների տեղաշարժը, դադարեցվել հանրային տրանսպորտի աշխատանքները, տնտեսական գործունեության գրեթե բոլոր տեսակները, իրականացվել պատվաստումներ բուժհաստություններում և շրջիկ կայաններում: Սակայն, ինչպես և ցանկացած երկրի դեպքում հնարավոր չեղավ կանխել Covid-19-ի ներթափանցումը և արագ տարածումը ՀՀ-ում: Համաճարակը ցույց տվեց, որ երկրների առողջապահական համակարգերը ունեն թույլ կողմեր: Covid-19 համաճարակի դեմ ՀՀ-ում իրականացված միջոցառումների արդյունքում քաղվել են հետևյալ դասերը.

► Շատ կարևոր է դեպքերի արագ հայտնաբերումը և արագ արձագանքումը: Արագ արձագանքման համար անհրաժեշտ է ներդրումներ կատարել հսկողության համակարգերում՝ ապագայում ավելի լավ պատրաստված լինելու համար:

► Առողջապահական համակարգը պետք է ավելի ճկուն լինի: Համաճարակի ընթացքում ունեցել ենք բժշկական պարագաների, սարքավորումների և բուժաշխատողների պակաս: Հետևաբար պետք է ներդրումներ կատարել առողջապահական ենթակառուցվածքներում, հիվանդանոցներում, պոլիկլինիկաներում, լաբորատորիաներում և ապահովել կարևոր բժշկական սարքավորումների և պարագաների համապատասխան մատակարարում:

► Անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել բուժաշխատողների վերապատրաստում ապագա ճգնաժամերին պատրաստվելու համար:

► Շատ կարևոր է, որ ԱՆ-ն կենտրոնանա համայնքի ներգրավվածության ռազմավարությունների վրա և սերտորեն համագործակցի համայնքի ղեկավարների հետ, ինչպես նաև առավել արդյունավետ ներկայացվեն հանրային առողջության հաղորդագրությունները:

► Առողջապահության ոլորտում պետք է մշակել հիվանդների խնամքի նոր տեխնոլոգիաներ և մոտեցումներ, ինչպիսիք են հեռաբժշկությունը, թվային առողջության գործիքները և արհեստական ինտելեկտը, որպեսզի բարելավենք մատուցվող առողջապահական ծառայությունները:

► Համաճարակը ցույց տվեց, որ երկրները պետք է համագործակցեն և կիսեն գիտելիքները՝ վարակիչ հիվանդությունների տարածումն արդյունավետ կերպով զսպելու համար:

Միջազգային կազմակերպությունները, օրինակ Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունն արդյունավետ կերպով իրականացրեց ռեսուրսների մոբիլիզացիա և վիրուսի դեմ պայքարի համակարգում: Հետևաբար, ԱՆ-ն պետք է առաջնահերթություն տա միջազգային կազմակերպությունների և այլ երկրների հետ համագործակցությանը՝ ստեղծելու գլոբալ համակարգ, որը կարող է արդյունավետ արձագանքել ապագա ճգնաժամերին: Եզրափակելով՝ Covid-19 համաճարակից քաղված դասերը մենք պետք է ներդրումներ իրականացնենք պատրաստվածության, ճկունության, նորարարության, համայնքի ներգրավվածության և գլոբալ համագործակցության մեջ՝ ավելի ամուր և արդյունավետ առողջապահական համակարգ կառուցելու համար, որը կարող է ավելի լավ պաշտպանել բնակչության առողջությունն ու բարեկեցությունը:

0426 Օստեոպորոզի կանխատեսման համակարգ՝ հիմնված արհեստական բանականության մեթոդների վրա
Osteoporosis prediction system based on methods of artificial intelligence

Տաթև Հովակիմյան[1], Աննա Հովակիմյան[2], Անի Բադալյան[2]
[1]ԱլտՄեդ բժշկական կենտրոն, Երևան, Հայաստան
[2]Երևանի պետական համալսարան, Երևան, Հայաստան

Tatev Hovakimyan[1], Anna Hovakimyan[2], Ani Badalayn[2]
[1]AltMed medical center, Yerevan, Armenia
[2]Yerevan State University, Yerevan, Armenia

Օստեոպորոզի միջազգային հիմնադրամի տվյալներով՝ աշխարհում մոտավորապես 200 միլիոն մարդ ունի օստեոպորոզ: Օստեոպորոզն ավելի հաճախ հանդիպում է կանանց, քան տղամարդկանց մոտ: Բժշկական տվյալների ճիշտ վերլուծությունը մեծ դեր է խաղում հիվանդության կանխատեսման, ախտորոշման և բուժման գործընթացներում: Այսօր այս խնդիրների լուծման համար բժշկին օգնության է գալիս արհեստական բանականությունը: Համակարգչային տեխնիկայի բուռն զարգացումը հանգեցրել է բազմաթիվ ալգորիթմների, մոդելների և տեղեկատվական տեխնոլոգիաների մշակմանը և կիրառմանը, որոնք ապահովում են ճշգրտություն և հուսալիություն տվյալների վերլուծության խնդիրներում: Բժշկական տվյալների վերլուծության ոլորտում մեքենայական ուսուցման մեթոդների և հզոր համակարգչային տեխնիկայի կիրառումն ունեցավ հեղափոխական ազդեցություն: Այնուամենայնիվ, գոյություն ունեն մի շարք կլինիկական խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ են որոշումների կայացման ճշգրիտ, հուսալի, արագագործ, արդյունավետ մոդելներ: Բժշկական հետազոտությունների տվյալները հաճախ պարունակում են ավելցուկային, ոչ լրիվ տեղեկատվություն, ինչը կարող է վատացնել մաթեմատիկական մոդելի կանխատեսման ունակությունը: Ուստի անհրաժեշտ է հավաքագրել որակյալ բժշկական տվյալներ և ընտրել համապատասխան մեթոդներ խնդրի լուծման համար: Ներկայումս բժշկական ախտորոշիչ գործընթացներ իրականացնող համակարգչային տեխնոլոգիաները Հայաստանում խիստ սակավ են կիրառվում: ԱլտՄեդ բժշկական կենտրոնում (www.altmed.am) STRATOS սարքի միջոցով դենսիտոմետրիկ հետազոտության արդյունքում մեծ քանակությամբ տվյալներ են կուտակվում, որոնց մշակման համար ցանկալի է ունենալ ծրագրային գործիքներ: Մենք ներկայացնում ենք արհեստական բանականության մեթոդների կիրառմամբ ստեղծած ծրագրային համակարգ հիմնված ԱլտՄեդ բժշկական կենտրոնում դենսիտոմետրիկ չափումների արդյունքների վրա: Ընտրվել են մեքենայական ուսուցման DecisionTree և Random Forest մոդելները: Համակարգում տվյալների վերլուծությունը կատարվում է ըստ հիվանդների տարիքային խմբերի, սեռի, BMI ինդեքսի բաշխվածության: Համակարգն օժտված է նաև դենսիտոմետրիկ հետազոտության արդյունքում ստացված տարբեր ցուցանիշների միջև առկա կապերի հայտնաբերման հնարավորությամբ: Համակարգն ունի բժիշկ-օգտվողի համար պարզ միջոցներ: Մշակվել է ծրագրային համակարգ, որը հնարավորություն է տալիս ավտոմատացնելու օստեոպորոզի ախտորոշումը: Մարզված լինելով բժշկական հետազոտությունների որակյալ արդյունքների բավարար քանակի վրա՝ համակարգը կարող է բավականին ճիշտ ախտորոշել հիվանդությունը: Համակարգը ներառում է բաժիններ վիճակագրական վերլուծությունների, հետազոտությունների տվյալների միջև նոր կապեր և կախվածություններ գտնելու համար: Համակարգը միջոցով բժիշկը կարող է տեսնել օստեոպորոզի առաջացման պատճառներն ու առաջարկել լրացուցիչ հետազոտություններ՝ վահանաձև գեղձի, շաքարային դիաբետի, գենետիկ, ինչպես նաև ներբեռնել հետազոտությունների արդյունքներ այլ սարքերից՝ հիմնվելով մարմնի միայն մի հատվածի հետազոտության արդյունքների և բացահայտած կապերի վրա, կանխատեսել մնացած հատվածներում հիվանդության հնարավոր տարածվածության և ախտահարման աստիճանը:

A019 Տարեցների մոտ հիշողության խնդիրների վաղ հայտնաբերման սքրինինգ Հայաստանում
Screening for early detection of memory problems in the elderly in Armenia

Ջեյն Մահաքյան, Սոնա Մխիթարյան
Ալցհայմերի խնամք Հայաստան, Երևան, Հայաստան

Jane Mahakian, Sona Mkhitaryan
Alzheimer's Care Armenia, Yerevan, Armenia

Նկարագրություն. Հետազոտողները ուսումնասիրել են ճանաչողական խանգարումների տարածվածությունը՝ օգտագործելով հիշողության խնդիրների հայտնաբերման մոբայլ սքրինինգ թեստ Հայաստանում՝ 4000 մարդու գնահատման համար: Հայաստանում թուլամտության տարածվածության նման ուսումնասիրություն առաջին անգամ է իրականացվել: Թիմը հետևել է Հայկական Ակնաբուժական Ծրագրի (Armenian EyeCare Project-ի)

շարժական հիվանդանոցին Հայաստանում և կատարել վաղ հայտնաբերման հիշողության սքրինինգ Մոնրեալի գնահատման թեստի միջոցով (MoCA):

Առողջ Ուղեղի Հայկական Ծրագիրը (ԱՈՒՀԾ) կբարձրացնի պատշաճ ախտորոշումը, ինչպես նաև Ալցհայմերի հիվանդության մասին տեղեկացվածությունը և տեսանելիությունը, որը կօգնի նվազեցնել հիվանդության մասին առասպելներն ու վախերը:

Նախապատմություն. Առողջապահության նախարարության հավանությանը արժանացած այս ծրագիրը կմեծացնի ճանաչողական սքրինինգի, ինչպես նաև դեմենցիա ունեցող անձի խնամքի կարևորությունը, ինչպես նաև կլինի նշանակալի ծրագիր երկրի դեմենցիայի ազգային պլանի համար:

Եղանակներ. ԱՈՒՀԾ-ի շարժական կլինիկան կհասնի նախնական տրամադրման նպատակին՝ իրականացնելով ճանաչողական զննումներ՝ համագործակցելով Հայկական ակնաբուժության ծրագրի հետ և գնահատելով ծրագրի շահառու հիվանդների ճանաչողական կարողությունները: Թիրախային խումբ են հանդիսանում խոցելի մեծահասակները, որոնք բնակվում են Հայաստանի մարզերում՝ խոշոր քաղաքներից հեռու: Թիմը հետագա հսկողություն է իրականացնում MoCA դրական անձանց նկատմամբ և տրամադրում ռեսուրսներ և խնամակալների կրթություն:

Արդյունքներ. 2022թ. հունիսի 1-ից մեկնարկել է ԱՈՒՀԾ-ի առաջին փուլը: Այն Հայաստանում առաջին շարժական ծրագիրն է՝ ուղղված հիշողության խանգարումների վաղաժամ հայտնաբեմանը և Ալցհայմերի հիվանդության մասին ուսուցմանը: Մինչ օրս հետազոտված 4000 մարդկանցից 35.7%-ը դրսևորել է որոշակի աստիճանի ճանաչողական խանգարում:

Եզրակացություն. ԱՈՒՀԾ-ն բացահայտում է Ալցհայմերի հիվանդության իրական տարածվածությունը և դեմենցիայով ապրող անձանց և նրանց խնամակալների վերապատրաստման և ուսուցման կարիքները: Բացի դրանից՝ ծրագիրը ստացել է արձագանք նաև ընտանեկան խնամակալներից: MoCA թեստերը ապահովում են ճանաչողական ֆունկցիայի օբյեկտիվ չափում և հանդիսանում են ճանաչողական խանգարումներով հիվանդի գնահատման առաջին քայլը: Սքրինինգները նպաստում են ճանաչողական անկման վաղ հայտնաբերմանը և բուժմանը: ԱՈՒՀԾ-ն նորարարական մոտեցում է Հայաստանում վաղ հայտնաբերման ճանաչողական սքրինինգի, ինչպես նաև դեմենցիա ունեցող անձի ընդհանուր առողջության պահպանման անհրաժեշտությունը լուծելու համար:

0146 Перспективы внедрения объективного структурированного клинического экзамена в постдипломное обучение по специальности ортодонтия

Perspectives for the implementation of an objective structured clinical examination in postgraduate orthodontic education

Микаел Налбандян, Грант Тер-Погосян, Элеонора Казарян
Ереванский государственный медицинский университет, Ереван, Армения

Mikayel Nalbandyan, Hrant Ter-Poghosyan, Eleonora Ghazaryan
Yerevan State Medical University, Yerevan, Armenia

Введение: Современная система медицинского образования требует использования объективных методов оценки клинической компетентности специалистов. Проведение текущей и итоговой аттестации для ординаторов с помощью объективного структурированного клинического экзамена (ОСКЭ) позволяет составить более полную картину клинической компетентности будущего специалиста. На сегодняшний день ОСКЭ в той или иной его модификации, используют в качестве средства оценки при переводных и выпускных экзаменах в большинстве медицинских школ мира. В основе данной методики заложена комплексная оценка с определенным количеством оценочных станций, моделирующих различные аспекты клинической компетентности.

Методы: В настоящее время профессиональная подготовка специалистов на кафедре детской стоматологии и ортодонтии Ереванского государственного медицинского университета направлена на совершенствование системы аттестации обучающихся на этапах до- и постдипломного образования. ОСКЭ как метод оценки клинической компетентности обладает преимуществом по сравнению с другими методами, поскольку дает возможность оценить профессиональную компетентность планомерно и структурированно.

Результаты: Проведение ОСКЭ обеспечивает наибольшую объективность вследствие исключения субъективного подхода экзаменатора; создания для всех экзаменуемых стандартных условий; универсальности в оценочных подходах; одинакового спектра заданий; компетентностного подхода в оценке результатов. В то же время используется он и в качестве средства получения обратной связи для коррекции процесса обучения, результаты ОСКЭ позволяют правильно изменять и адаптировать учебный план для достижения поставленных академических задач. Результаты исследований, проведенных Аккредитационным советом по последипломному медицинскому образованию США (ACGME), указывают, что добиться необходимой степени надежности можно при внедрении ОСКЭ, состоящего из 20 практических испытаний. Тем не менее, данная методика не заменяет других средств оценки знаний и не является универсальной для удовлетворения всех потребностей в оценке уровня компетенции в рамках программ обучения, и ее следует использовать в сочетании с другими методами оценки.

Выводы: Резюмируя вышеизложенное, на наш взгляд внедрение ОСКЭ в постдипломный образовательный процесс по специальности ортодонтия, будет способствовать: совершенствованию системы аттестации клинических ординаторов, повышению профессиональной компетентности преподавателей, и как следствие, повышению качества образовательного процесса и уровня сформированных профессиональных умений и навыков будущих врачей ортодонтов.

0339 Особенности управления качеством медицинской помощи в многопрофильном хирургическом центре
Features of quality management of medical care in a multidisciplinary surgical center

Амиран Ревишвили, Баграт Алекян, Фёдор Семёнов, Игорь Карапетян
ФГБУ НМИЦ Хирургии им. А.В.Вишневского, Москва, Россия

Amiran Revishvili, Bagrat Alekyan, Fyodor Semyonov, Igor Karapetyan
National Medical Research Center of Surgery named after A.V. Vishnevsky, Moscow, Russia

Введение: Развитие высоких технологий вывело хирургию на небывало высокий уровень, однако это не решило в полной мере вопросы хирургической безопасности. Хирургия остается одной из самых рискованных дисциплин. Развитие многопрофильных национальных хирургических центров позволило изменить вектор хирургической методологии и применить концепцию единого хирургического пространства, позволившую значительно повысить уровень хирургической безопасности.

Методы: С 2017 года в ФГБУ НМИЦ «хирургии им.А.В.Вишневского» (далее Центр) работают три постоянно действующих консилиума: сердечно-сосудистый, абдоминальный и онкологический. Большое внимание в Центре придается развитию современных технологий, таких как симультанные и гибридные операции. Обычной стала практика стентирования коронарных артерий и в тот же день выполнение обширных резекционных вмешательств на органах пищеварения или мочевыводящей системы, сердечно-сосудистые хирурги одновременно выполняют шунтирующие или протезирующие операции на сердце и операции по коррекции сердечного ритма, при поражении артерий конечностей широко сочетаются рентгенэндоваскулярные и открытые методы лечения, выполняются операции по удалению почки с экстракцией опухолевого тромба из сердца в условиях искусственного кровообращения. Такие операции в 2016 году были единичными в то время как 2022 году выполнено 75 симультанных операций. Динамично развивается малоинвазивная хирургия, так роботических операций в 2016 году было выполнено 17, а в 2022 уже 118.

Результаты: Число сотрудников Центра на сегодняшний день сократилось на 338 человек по сравнению с 2016г., при этом больных пролечено на 2162 больше, число проведенных операций превышено на 1620. Процент послеоперационных осложнений снизился в два раза, средний койко-день на 1.3, а летальность на 0.3 процента.

Выводы: Управление качеством медицинской помощи с непрерывным повышением качества путем совершенствования технологии лечебно-диагностического процесса (индустриальная модель) в условиях многопрофильного хирургического центра значительно улучшает критерии качества хирургической помощи. Интеграция инновационных технологий и мультидисциплинарного подхода является приоритетным вектором развития многопрофильных хирургических центров.

A002 Эффективность реализации политики противодействия потреблению табака в России: уроки для настоящего и будущего
Effects of implementation of tobacco control policy in Russia: Lessons for the present and for the future

Маринэ Гамбарян
Национальный медицинский исследовательский центр терапии и профилактической медицины МЗ РФ, Москва, Россия

Marine Gambaryan
National Medical Research Center for Therapy and Preventive Medicine MoH RF, Moscow, Russia

Введение: Антитабачная политика в России направлена в рамках ратификации рамочной конвенции ВОЗ по борьбе против табака, на снижение распространённости курения, постепенный вывод табачной продукции из гражданского оборота и снижение заболеваемости и смертности от болезней, связанных с курением, что большой вероятностью зависит от реализации антитабачных законодательных норм.

Цель: Оценить реализацию мер антитабачного закона (Закон) в регионах Российской Федерации (РФ) и их эффективность в отношении снижения распространенности курения, заболеваемости и смертности от отдельных болезней, связанных с курением.

Методы: Реализацию исполнения законодательных норм мы оценивали с помощью социологического репрезентативного опроса взрослого населения в 10 регионах РФ среди 11625 респондентов (при использовании данных ЭПОХА-РФ). Эффективность реализации этих мер в отношении динамики распространенности курения оценивалась с помощью корреляционного и многомерного регрессионного анализа данных ЭПОХА-РФ и данных о распространенности курения выборочных наблюдений Росстата за 2013 и 2018 гг.; а в отношении снижения заболеваемости и смертности от отдельных болезней, связанных с курением – с помощью анализа данных ежегодных госпитализаций по поводу стенокардии, инфаркта миокарда (ИМ) и пневмонии с 2005 по 2019 гг. методом прерванных временных рядов.

Результаты: В России наблюдается снижение распространенности курения, и оно связано с полнотой реализации антитабачного закона в субъектах РФ: чем полнее реализация антитабачных мер – тем ниже распространенность курения в 2018г. (rsp=–0,564; p=0,03), и более выражена ее динамика (rsp=0,627; p=0,02). Выявлено снижение, после внедрения закона, тренда уровня госпитализаций стенокардией на 16,6%: RR = 0,829, p=0,001; ИМ на 3,5%: RR=0,962, p=0,019,

пневмонией - на 14,3%: RR=0,88, p=0,011. Эта динамика также ассоциировалась с полнотой реализации антитабачных норм в субъектах РФ. Чем полнее реализация антитабачных мер – тем более выражено снижение тренда уровня госпитализаций стенокардией (rsp=–0,636 p=0,005), ИМ (rsp=–0,793 p<0,001) и пневмонией (rsp=–0,55 p=0,042). Снижение уровня госпитализаций ИМ ассоциировано с реализацией запрета курения в общественных местах (β=-4,26; p=0,031) и помощи в отказе от курения (β= -3,21 p=0,039); снижение уровня госпитализаций пневмонией - с реализацией помощи в отказе от курения (β = -4,21; p= 0,02).

Выводы: Достижение снижения распространенности курения и ущерба, связанного с потреблением табака возможно только при исполнении антитабачных норм. Задача общественного здравоохранения – обеспечить правоприменеие действующего закона и защитить общественное здоровье от новых угроз в виде новой никотинсодержащей продукции, а антитабачную политику – от коммерческих интересов табачной индустрии.

0015 Health care seeking behavior, experience, and practices among Armenian teens: issues and strategies for improving primary health care services

Yeva Movsesyan, Marina Melkumova
Arabkir MC, Yerevan, Armenia

Adolescence brings many challenges in a child's life. Different studies show that despite having different health and behavioral issues, teens skip visiting healthcare providers and seek answers in non-reliable sources. Aiming to assess youth-friendly health care at the PHC level, focus groups with PHC providers and adolescents were held to explore existing practices. 40 care providers and 83 adolescents were surveyed in 2021. A qualitative analysis of the responses was conducted. Data from the Health Behavior in School-aged Children 2017/18 survey, covering 4717 11-15-year-olds and 1175 17-year-old students was analyzed to assess care-seeking practice. Teens were asked about psychosomatic complaints, the last visit to the PHC provider. Data analysis was performed using the SPSS 20; criteria for statistical significance were applied. About half of the teens had multiple health complaints - headache, stomachache, sleep difficulties, feeling low, and irritability. From 18% to 31% of girls reported "feeling sad". Girls and Yerevan inhabitants reported significantly poorer mental health. Despite the abovementioned complaints, the usage of health services as the indicator of their accessibility for adolescents was low: only 44% of 11-15-year-olds visited their family doctor/pediatrician within the past 12 months. Significantly more girls, older teens, and urban inhabitants visited their PHC provider. 60% of 11-15-year-olds have never visited an adolescent doctor in the past 2 years. Health-seeking practices improved with age. Many obstacles for teens to use PHC services were noticed: absence of privacy and confidentiality, and work overload of health staff. Existing PHC services lack adolescent-friendly approaches; reproductive and mental health problems are not addressed. Care providers lack motivation, are concentrated on screenings, and formal paperwork, and do not provide counseling. PHC services are accessible in all communities, and nurses are present in the majority of schools, however existing services do not address the needs. The role of prevention is underestimated. The PHC system lacks mechanisms of monitoring, supportive supervision, and quality control; there are no incentives for consultancy work. The study revealed several priority areas that require proper attention and further interventions. Among them are the implementation of sustainable models of youth-friendly care and services at the PHC level, improving information sharing and communication.

0018-2 The role of Medical Affairs in the pharmaceutical industry: 2030 perspectives

Bagrat Lalayan
Eisai US, New York, USA

Aim: To synthesize the views of senior global Medical Affairs leaders across different pharmaceutical and biotech companies to provide a unified vision for the future of Medical Affairs (MA).

Methods: This document represents the first consensus position by MA executives of our evolving roles, activities, and value in society, industry, teams, and as individuals.

Results: The biopharmaceutical and MedTech industries have been traditionally dominated by two functions: Research & Development (R&D) and Commercial. R&D's primary responsibility is the discovery, development, and registration of innovative new drugs and medical devices, whereas the commercial function markets and sells them. Approximately 30 years ago, driven largely by healthcare providers' need for scientific information and guidance surrounding the use of increasingly complex novel treatments coupled with new regulatory standards for pharma's interactions with external stakeholders. MA emerged as the function scientifically supporting the post-registration period for new therapies. By 2030, MA will solidify its transition from execution to strategy, and the function will come to represent the voice of the patient within the industry. We will not only disseminate evidence but also lead evidence-generation activities that inform the real-world use of marketed and emerging treatments. Also in this timeframe, we will solidify the role of MA as the industry's external earpiece, gleaning insights from our interactions with the healthcare ecosystem that drive understanding of patient, payer, and provider needs and opinions. Throughout this evolution, the true north of MA remains the same: to ensure that our science and technologies benefit patients.

Conclusion: This paper provides a vision for the future of the MA function in which the mission of MA comes to represent the mission of the industry as a whole: to benefit patients and society.

0021 Effects of national tobacco control law on hospitalization rates for angina, myocardial infarction and pneumonia: when enforcement matters

Marine Gambaryan
National Medical Research Center for Therapy and Preventive Medicine, Moscow, Russia

Introduction: Number of studies reported a reduction in hospital admission (HA) rates for cardiovascular and respiratory diseases after the adoption of smoking regulations. However very few have estimated the impact of Tobacco Control Laws (TCL) at both national and regional levels, and none has done so in relation to compliance with Tobacco Control (TC) regulations.

Aim: To evaluate the effects of Russian TCL on hospital admission (HA) rates for Angina, Myocardial infarction (MI) and Pneumonia countrywide and in 10 Russian regions, as well as the magnitude of these effects in relation with the compliance to TCL.

Methods: We analyzed HA rates for Angina, MI and Pneumonia before and after TCL in 2013, adjusting for possible confounders and long-term trends. Models were based on time-series of annual HA in the RF and 10 Russian regions during the years 2005-2019. We used interrupted time-series design and Poisson regression model with calculation of risk ratio (RR) and 95% Confidence Intervals (CI). Comparison of 10 regions of Russia was carried out using the TCL Implementation Scale (TCIS) developed on the basis of the results of a study evaluating the TC policy in these regions (n = 11,625 respondents). We analyzed the relationship between TCIS scores and RR of HA reduction for Angina, MI and Pneumonia using Spearman's rank correlation and linear regression models.

Results: demonstrated a 16.6% reduction in the rates of HA for Angina (RR 0.83; p=0.001), 3.5% – for MI (RR 0.96 p=0.019) and 14.3% for Pneumonia (RR 0.88; p=0.01) after the adoption of TCL in Russia with significant long-term effect after 2013: (RR 0.83, p=0.003; RR 0.97 p=0.049; RR 0.86, p=0.006, respectively). Regions with better enforcement of TCL exhibited greater reductions in Angina, MI and Pneumonia HA rates (rsp=–0.627, p=0.004); (rsp=–0.793, p=0.001 (rsp=–0.55, p=0.04) respectively, also confirmed by linear regression analysis: for MI (β=-4.26; p=0.031) and pneumonia (β =–4.21; p=0.02).

Conclusions: TCL resulted in a sustained reduction in HA for Angina, MI and Pneumonia. Hence, it should be considered as a prevention strategy at the population level. These effects, varying by region, may be due to both the adoption of the TCL and the scale of its enforcement.

0027 Correlates and gender differences of tobacco and alcohol consumption behaviors in Armenian immigrant population in the United States

Loucine M. Daderian-Huckabay
California State University, Long Beach, CA, USA

Introduction: United States (U.S.) has over 1.5 million Armenian immigrants (AI) with majority living in California. Immigration is a major stress producing event in one's life. Smoking and drinking behaviors are maladaptive coping mechanisms to deal with acculturative stress, and have adverse health consequences. Very few studies have investigated the problematic nature of smoking and alcohol consumption in AIs.

Aim: To investigate the correlates of tobacco and alcohol consumption in AI in the U.S.

Method: A descriptive survey design was used to gather data from 432 AI to the U.S. (male/female: 204/228) with the mean age of 56 years (range: 19-92). Participants were from Armenia, and Middle East. Variables investigated were smoking tobacco, alcohol consumption, country of origin, incidences of acute and chronic illnesses, depression, social support and locus of control, and demographics. Data was collected using the Health Status Questionnaire, Beck Depression Scale and Rotter's Locus of Control (LOC) measure. Data was analyzed using two-way analysis of variance, Chi Square and spearman rank correlations, as appropriate.

Results: Of the 432 participants, 68 (male/female: 41/27) were smokers, 199 (male/female: 136/63) were alcohol drinkers. Results showed that AI men from Armenia smoked tobacco and drank alcohol significantly more than AI men from other countries. Smoking was positively and significantly related to depression, incidences of acute illnesses and to external LOC. Gender differences showed men smoking and drinking significantly more than women. Comparison of life time smoking of 100 cigarettes with country of origin and gender showed Armenian women from Turkey (40%) and Lebanon (31.6%) smoked significantly more than women from other countries. Women from Armenia consumed significantly more alcohol than women from other countries. For the group as a whole, alcohol consumption was positively related with depression and external LOC and inversely related to belonging to social support groups.

Conclusion: Results were interpreted in light of acculturative stress and coping. Implications were made for health promotion education programs and for using social support systems as coping mechanism for handling depression and acculturative stress.

0046 Ethical issues that physicians faced in Armenia during the peak of the COVID-19 pandemic

Pasas Perera
Yerevan State Medical University, Yerevan, Armenia

Ethics is a dynamic subject and ethical issues are complex. The COVID-19 pandemic took over the world since 2019, and brought upon several ethical issues into the light. Armenia unfortunately had more than just a pandemic, as a full-fledged war was declared. Thus the Armenian physicians were tasked with handling health care for both COVID-19 patients and war casualties which amassed in large numbers. When the available resources do not fulfill the requirements

Methods: We present a unique clinical case of early prenatal genetic diagnosis at 22-23 weeks of gestation using a direct automated sequencing method. This method was used to search for pathogenic variants in the TCOF1 gene in a fetal DNA sample obtained from amniotic fluid. TCS was supposed based on ultrasound signs including polyhydramnios, microphthalmia, micrognathia, bilateral downslanting palpebral fissures, rudimentary auricles, and absence of external meatus.

Results: We identified the c.2962C>T (9p.R988*;NM_001135243.2) nonsense heterozygous variant. This sequence change creates a premature translational stop signal (p.Arg988*) in the TCOF1 gene, which is expected to result in an absent or disrupted protein product. Loss-of-function variants in TCOF1 are known to be pathogenic (PMID: 8894686, 22317976). This premature translational stop signal has been observed in individual(s) with Treacher-Collins syndrome. Due to the known severity of the craniofacial abnormalities and poor prognosis, the parents decided to terminate the pregnancy after thorough genetic counselling.

Conclusion: Ultrasound imaging can clearly demonstrate the phenotype in some genetic syndromes, providing a more understandable visualization of signs for specialists, and allowing the choice of the optimal tactics for genetic testing. Targeted genetic tests are necessary to contribute to the accurate prenatal diagnosis in such cases. Our findings highlight the value of combination of imagination/imaging and science in the prenatal diagnosis of craniofacial malformation-related diseases, and more.

0364 Outpatient computed tomography centers for COVID–19: local experience from MIBS, Yerevan, Armenia

Kalina Kirakosyan[1], Diana Sahakyan[1], Elen Hovhannisyan[1], Natalia Berezina[2], Mikhail Cherkashin[2], Hovhannes Hovhannisyan[1]
[1]Medical Institute named after Dr. Berezin Sergey (MIBS), Yerevan, Armenia
[2]MIBS, Saint Petersburg, Russia

Introduction: Severe acute respiratory syndrome coronavirus-2 (SARS-CoV-2) infections impart an enormous burden on healthcare systems worldwide. During the first wave of the coronavirus disease 2019 (COVID-19) pandemic in early 2022, the caseload was devastating, and clinical decisions were restricted by health system capacity. Chest low-dose computed tomography is a high-sensitive imaging modality to diagnose viral pneumonia and might be an acceptable option for fast diagnosis verification. At the start of the pandemic, fast results from polymerase chain reaction assays were rare, and in some countries, several hospitals started CT-based triage at the ED level.

Aim: To discuss a real world experience in organizing a stand-alone outpatient CT-based triage emergency center.

Methods: We used the local radiology pneumonia severity classification on a scale of 1 to 4 points. A CT score of 1 indicates that up to 25% of the patient's lungs are involved; a score of 2 indicates 25% to 50% lung involvement; 3 indicates 50% to 75% lung involvement; a score of 4 indicates 75% or more lung involvement. Patients with CT scores of 1 to 2 points and good clinical performance were discharged home for observation by ambulatory physicians. Patients with CT scores of 3 to 4 points and dyspnea were indicated for hospitalization.

Results: From 09.06.2020 to 16.12.2022, there were a total of 2587 symptomatic, laboratory-tested COVID-19 patients and asymptomatic patients. Within 30 months, all patients were diagnosed with COVID-19 pneumonia. CT score of 1-2 – 2465 (95.17%), CT score of 3-4 – 95 (3.67%) and fibrosis after COVID-19 – 27 (1.0%). Among these patients: women – 1498 (58%), men – 1089 (42%).

Conclusion: CT-based triage is a rapid tool for supporting clinical decisions.

0366 Implementation of the magnetic resonance imaging of temporomandibular joint in Armenia. Patients overview

Diana Sahakyan[1], Elen Hovhannisyan[1], Kalina Kirakosyan[1], Natalia Berezina[2] Mikhail Cherkashin[2], Hovhannes Hovhannisyan[1],

[1]Medical Institute named after Dr. Berezin Sergey (MIBS), Yerevan, Armenia
[2]MIBS, Saint Petersburg, Russia

Introduction: Temporomandibular disorder (TMD) is a common condition that causes pain and disability for patients and mainly impacts young women, which increases an economic burden on the healthcare system. The most common cause of TMD is internal derangement, mainly provoked by articular disc displacement. Nowadays, MRI is considered to be the modality of choice for evaluation of the TMJ.

Aim: To discuss the implementation of the MRI of TMJ in Armenia and analyze the TMJ disorder findings.

Methods: Starting from 2013 to 2022 we have performed 220 (total 440 joints) MRI exams of TMJ for 212 patients in our clinic: 181 women (85,4%) and 31 men (14,6%). The youngest patient was 11 y/o and the oldest was 72 y/o, with a higher prevalence in young adults aged 20-40 years. The images were taken with 1.5T and 3 T imaging units. The images were taken in the closed, maximally opened mouth positions and dynamic MRI to detect disc displacements. All the radiologists, who evaluated and interpreted the images, underwent the same trainings.

Results: We analyzed 5 characteristics: temporomandibular joint anterior disc displacement with or without reduction (ADDwR / ADDwoR) /75%/, joint effusion (JE) /78.6%/, disc degeneration (DDeg) /82.7%/, osteoarthritis (OA) /56.4%/, and mandibular condyle abnormal translation/70,9%/. In addition, we have found 8 cases of posterior disc displacement (one on both sides) /3.6%/, 11 cases of disc perforation /5%/, 23 cases of disc bilaminar zone fibrosis (five on both sides) /10.5%/, 12 cases of disc adhesion (3 on both sides) /5,45%/, 41 cases of condyle hypoplasia (15 on both sides) /18.6%/, 1 case of tumor (osteochondroma) /0.45%/, 1 case of condyle head fracture/0.45%/, 1 case of Landouzy-Dejerine muscular dystrophy/0.45%/, 1 case of TMJ immobility due to intracerebral hemorrhage/0.45%/.

0369 Contribution of perfusion imaging and magnetic resonance spectroscopy in the diagnosis of cerebral lymphoma

Hampar Kayayan, Emmanuel Irles, Samy Behar, Anael Rieu
Radiology and medical imaging department, L.Hussel Hospital, Vienne, France

Introduction: The brain lymphoma, also known as primary cerebral lymphoma or primary central nervous system lymphoma is a rare, highly aggressive non-Hodgkin cancer with an incidence of 0.5/100,000 inhabitants per year. If detected early, it can be treated or even cured.

Aim: To present a case of histologically confirmed large B-cell lymphoma.

Methods: The diagnosis was strongly suspected through perfusion magnetic resonance imaging (MRI) and magnetic resonance spectroscopy (MRS).

Discussion: Primary cerebral lymphomas have specific characteristics on perfusion MRI and MRS, such as:

- typical appearance of blood-brain barrier rupture with a rise of the baseline in perfusion
- no arguments for neo-angiogenesis with the study of cerebral blood volume
- spectroscopic profile with an increase of the choline/N-acetyl aspartate and choline/creatinine ratio, also a lipid-lactate peak.

Conclusion: The contribution of MRI and more particularly perfusion MRI and MRS seems obvious in the diagnosis of brain tumors and lymphoma specifically. In this case, the MRI report suggested a diagnosis of cerebral lymphoma, allowing physicians to prepare in advance, to treat this potential affection. Radiology is no longer limited to an anatomical study but allows a functional approach. The radiological data could have a sufficient specificity to make a biopsy obsolete. In the meantime, with the arrival and the improvement of new radiological tools (such as the spectral computed tomography), radiologists will try to find the best anatomical and functional imaging markers in order to improve patient care.

0416 Hyperspectral imaging of coronary atherosclerotic plaques

Ani Avetisyan[1], Daniel Polianczyk[1], Narine LeFevre[2], Narine Sarvazyan[1,3]
[1]Orbeli Institute of Physiology, Yerevan, Armenia
[2]George Washington University, Washington, DC, USA
[3]American University of Armenia, Yerevan, Armenia

Introduction: Despite major advances in the treatment of coronary heart disease, current screening and diagnostic methods are insufficient to identify individuals at risk before the occurrence of a thrombotic event. This is mainly because current intravascular imaging techniques have limited ability to evaluate atherosclerotic plaque pathobiology, preventing them from accurately identifying high-risk plaques. This calls for complementary imaging techniques to better evaluate plaque morphology and pathobiology. Methods: Two modalities of the hyperspectral imaging (HSI) approach were tested for their ability to delineate the surface composition of human coronary vessels. HSI collects spectral information from each individual pixel of an image, resulting in a 3D HSI cube with two spatial dimensions and one spectral dimension. HSI data were collected from freshly dissected human coronary arteries obtained from explanted diseased hearts procured on-ice from the Washington Regional Transplant Community. For reflectance-based HSI (Ref-HSI), samples were illuminated with Mightex Cool White LED, while for autofluorescence-based HSI (Auf-HSI) Mightex 365nm UV LED was used. Each HSI cube consisted of 32 spectral bands that were acquired by the PerkinElmer NuanceFX HSI system using 420-720/10nm step settings. A total of 12 coronary plaques from three aged individuals have been analyzed.

Results: Comparative analysis of the two modalities revealed the superiority of Auf-HSI for the identification of key components of atherosclerotic plaques. Within the same modality similar visualization outcomes were obtained when using three different post-processing algorithms, including I) pre-acquired spectral libraries from labeled samples, II) principal component analysis, and III) use of individual spectra of lipid, collagen, and calcium deposits.

Conclusion: The results support the use of Auf-HSI as a dye-free, minimally invasive tool to characterize the inner surfaces of coronary vessels. By incorporating HSI capabilities into existing intravascular ultrasound- or optical coherence tomography-based percutaneous catheters, new means for quantifying the burden of atherosclerosis can be developed.

ԹԵՐԱՊԵՎՏԻԿ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ТЕРАПЕВТИЧЕСКИЕ СПЕЦИАЛЬНОСТИ
THERAPEUTIC SPECIALTIES

0114 Քնի օբստրուկտիվ ապնոէ համախտանիշի տարբեր կլինիկական դրսևորումները
Different clinical features of obstructive sleep apnea syndrome

Մարինե Պետրոսյան
Իզմիրլյան ԲԿ, Երևան, Հայաստան
Ազգային առողջապահության ինստիտուտ, Ներքին հիվանդությունների ամբիոն, Երևան, Հայաստան

Marine Petrosyan
Izmirlian MC, Yerevan, Armenia
National Institute of Health, Department of Internal Medicine, Yerevan, Armenia

Ներածություն. Քնի օբստրուկտիվ ապնոէ համախտանիշը (ՔՕԱՀ) տարածված հիվանդություն է, որը չբուժելու դեպքում զգալիորեն նվազեցնում է կյանքի որակը և առաջացնում բարդություններ գրեթե բոլոր օրգան-համակարգերում: ՔՕԱՀ-ը բազմածին հիվանդություն է՝ բարդ ախտաֆիզիոլոգիական մեխանիզմներով, ինչի հետևանքով այն կարող է ունենալ տարբեր կլինիկական դրսևորումներ:

Նպատակ. Հայտնաբերել, նկարագրել և խմբավորել ՔՕԱՀ-ի տարբեր դրսևորումները՝ համադրելով կլինիկական պատկերը և գործիքային հետազոտության արդյունքը:

Եղանակներ. Հետազոտվել է 344 անձ՝ 297 տղամարդ և 47 կին, միջին տարիքը 49.9±11.9 տարեկան: Կատարվել է ռեսպիրատոր պոլիգրաֆիա՝ ApneaLink, ResMed, SOMNOtouch Resp և SOMNOmedics սարքերի միջոցով: ՔՕԱՀ-ի ծանրության աստիճանը գնահատվել է ընդունված կարգով՝ ըստ ապնոէ/հիպոպնոէ ինդեքսի (ԱՀԻ): Հետազոտվողները ենթարկվել են կլինիկական զննման, փաստագրվել են նրանց գանգատները, ցերեկային քնկոտության կամ անքնության, քրոնիկ հիվանդությունների առկայությունը, դեղերի ընդունումը: Չափվել է մարմնի զանգվածի գործակիցը (ՄԶԳ), պարանոցի շրջագիծը (ՊՇ) և քնկոտության աստիճանն ըստ Էպվորֆ քնկոտության սանդղակի (ԷՔՍ):

Արդյունքներ. Համադրելով կլինիկական պատկերները և ռեսպիրատոր պոլիգրաֆիայի արդյունքները՝ հետազոտվողները բաժանվել են հետևյալ խմբերի. խումբ 1՝ «ցայտուն սիմպտոմատիկ ծանր ապնոէ» (157 անձ, 45.6%), խումբ 2՝ «ծանր ոչ սիմպտոմատիկ ապնոէ» (43 անձ, 12.5%), խումբ 3՝ «խանգարված քուն» (83 անձ, 24.1%): «Ցայտուն սիմպտոմատիկ ծանր ապնոէ» խմբին բնորոշ են բարձր ԱՀԻ (67.3±25.2), ծանր հիպօքսեմիա քնի ընթացքում (SpO2min 63.6±25.2), ցերեկային արտահայտված քնկոտություն (ԷՔՍ 20.5±5.8) և քրոնիկ՝ հիմնականում սիրտ-անոթային և մետաբոլիկ հիվանդությունների առկայություն: Այդ խմբի հիվանդների 70.4% (94 անձ) ստանում է երկարատև շնչուղիների մշտական դրական ճնշումային (continuous positive airway pressure, CPAP) թերապիա: «Ծանր ոչ սիմպտոմատիկ ապնոէ» խմբում ԱՀԻ-ը ևս եղել է բարձր (43.9±19.0), սակայն, ցերեկային գանգատները և քրոնիկ հիվանդությունների հաճախականությունը եղել են ցածր: Այդ խմբում CPAP թերապիա ստացել է 11 անձ (8.3%): «Խանգարված քուն» խմբում ԱՀԻ-ը կազմել է 17.2±11.3, հիմնական գանգատները եղել են արթնացումները շնչահեղձության զգացումով: CPAP թերապիա այդ խմբում ստանում է 5 անձ (3.8%):

Եզրակացություն. ՔՕԱՀ-ը կարող է ունենալ տարբեր դրսևորումներ: Թեպետ քնի լաբորատորիա դիմող հիվանդների մեծ մասը կազմում են դասական ՔՕԱՀ՝ «ծանր սիմպտոմատիկ ապնոէ» ունեցող անձինք, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ՔՕԱՀ-ը կարող է ունենալ նաև այլ դրսևորումներ, մասնավորապես կարող է լինել ծանր՝ ըստ գործիքային հետազոտության, սակայն, քիչ սիմպտոմատիկ՝ ըստ հիվանդի գանգատների: Թե ինչու բարձր ԱՀԻ-ի դեպքում ոմանք ունենում են բազմաթիվ գանգատներ, իսկ ոմանք ոչ՝ մնում է անհայտ: ՔՕԱՀ-ը կարող է նաև դրսևորվել միայն որպես անհանգիստ քուն: Պետք է տեղեկացված լինել ՔՕԱՀ-ի տարբեր դրսևորումների մասին՝ այն ժամանակին ախտորոշելու և բուժելու համար:

0116 Ճարպակալման հիպովենտիլյացիոն համախտանիշի ախտորոշումը և բուժումը
Diagnosis and management of obesity hypoventilation syndrome

Մարինե Պետրոսյան
Իզմիրլյան ԲԿ, Երևան, Հայաստան
Ազգային առողջապահության ինստիտուտ, Ներքին հիվանդությունների ամբիոն, Երևան, Հայաստան

Marine Petrosyan
Izmirlian MC, Yerevan, Armenia
National Institute of Health, Department of Internal Medicine, Yerevan, Armenia

Ներածություն. Ճարպակալման հիպովենտիլյացիոն համախտանիշը (ՃՀՀ) թերախտորոշված և թերագնահատված երևույթ է մեր իրականության մեջ: Մինչդեռ այդ համախտանիշի տարածվածությունն ակնհայտ է՝ հաշվի առնելով ճարպակալման մակարդակը ժամանակակից աշխարհում: Չախտորոշված և չբուժված ՃՀՀ-ն առաջացնում է բազմաթիվ բարդություններ՝ մասնավորապես սուր և քրոնիկ շնչառական անբավարարություն: Այդ հիվանդները հաճախ ինտենսիվ թերապիայի կարիք են ունենում և մեծ բեռ են դառնում առողջապահական համակարգի համար: Ժամանակին կատարված ախտորոշումը և բուժումը կանխում է բարդությունները և զգալիորեն բարելավում հիվանդի կյանքի որակը:

Եղանակներ. ՃՀՀ-ն ախտորոշվում է հետևյալ տվյալների առկայության դեպքում. մարմնի զանգվածի ցուցիչը (ՄԶՑ) > 30կգ/մ2, ցերեկային հիպերկապնիա (PaCO2 > 45 մմ ս.ս.), շնչառության խանգարումներ քնի ընթացքում (ապնոէ/հիպոպնոէ ինդեքս [ԱՀԻ] > 5/ժ) և երբ բացառվում են հիպովենտիլյացիա առաջացնող այլ պատճառները: ՃՀՀ-ն ախտորոշելու նպատակով կատարվել են անտրոպոմետրիկ չափումներ, ռեսպիրատոր պոլիգրաֆիա ApneaLink, ResMed և SOMNOtouch Resp, SOMNOmedics սարքերի միջոցով, զարկերակային արյան գազերի հետազոտություն և սպիրոմետրիա:

Արդյունքներ. Հետազոտված 344 անձից ՃՀՀ-ն ախտորոշվել է 31 անձի՝ 27 տղամարդու և 4 կնոջ մոտ, որոնք ունեցել են հետևյալ տվյալները՝ միջին տարիք՝ 50.8±9.0 տարեկան, ՄԶՑ՝ 46.8±7.6 կգ/մ2, PaCO2՝ 62±13.2 մմ ս.ս., պարանոցի շրջագիծ՝ 51.1±4.1 սմ, քնկոտության աստիճանն ըստ Էպվորֆի սանդղակի՝ 21.3±3.4, ԱՀԻ՝ 69.3±32.2/ժ, միջին սատուրացիա ցերեկվա ընթացքում՝ 86.0±8.5%, նվազագույն սատուրացիա քնի ընթացքում 52.1±2.8%: Բոլոր 31 անձինք բազմիցս ստացել են դեղորայքային բուժում ստացիոնար պայմաններում, իսկ 22 անձ անամնեզում ունեցել է սուր շնչառական անբավարարություն: Հետազոտված անձանցից 29-ը (93.5%) ունեցել են սիրտանոթային հիվանդություններ, այդ թվում թոքային հիպերտենզիա և աջփորոքային անբավարարություն և 22-ը (70.9%)՝ էնդոկրին հիվանդություններ: Ոչ ինվազիվ վենտիլյացիա իրականացնել համաձայնվել է 31 անձից 24-ը, որից երկարատև ոչ ինվազիվ վենտիլյացիա՝ BiPAP/CPAP (biphasic positive airway pressure/continuous positive airway pressure) թերապիա ստանում է 18 հիվանդ:

Եզրակացություն. ՃՀՀ ունեցող հիվանդները կազմել են քնի լաբորատորիա դիմած անձանց 9%-ը: Բոլոր հիվանդների մոտ հայտնաբերվել է ծանր աստիճանի քնի օբստրուկտիվ ապնոէի համախտանիշ: Ցերեկվա ժամերին հիվանդները ունեցել են հիպերկապնիա և հիպօքսեմիա, իսկ քնի ընթացքում՝ խորը և երկարատև դեսատուրացիա: Ծանր աստիճանի ՃՀՀ ունեցող անձանց տեսքը շատ խոսուն է՝ վերջիններս գեր, ցիանոտիկ, այտուցված, արտահայտված ցերեկային քնկոտությամբ, սիրտանոթային, մետաբոլիկ և այլ հիվանդություններ ունեցող անձինք են, որոնք ստանում են բազմազան դեղորայքային բուժում: Առողջապահական համակարգի մասնագետները պետք է տեղեկացված լինեն ՃՀՀ-ի մասին՝ այդ հիվանդներին վաղ հայտնաբերելու և ճիշտ բուժելու համար: ՃՀՀ-ի բուժումը պահանջում է շնչառական աջակցություն՝ ոչ ինվազիվ վենտիլյացիա BiPAP կամ CPAP թերապիայի միջոցով:

0200 Բյուրականում աճող նարդես կոշտավուն (*Ferula rigidula*) բուսատեսակից մթերված հումքի ամինաթթվային կազմը

Amino acid composition of the raw materials collected from *Ferula rigidul*a herb growing in Byurakan, Armenia

Արշալույս Ղազարյան[1], Ավետիս Ծատուրյան[2], Գայանե Պողոսյան[1], Կարինե Դումանյան[1], Նաիրա Բ. Չիչոյան[1]
[1]ԵՊԲՀ, Երևան, Հայաստան
[2]ՀՀ ԳԱԱ Հայկենսատեխնոլոգիա ԳԱԿ, Երևան, Հայաստան

Arshaluys Ghazaryan[1], Avetis Tsaturyan[2], Gayane Poghosyan[1], Karine Dumanyan[1], Naira Chichoyan[1]
[1]YSMU, Yerevan, Armenia
[2]Armbiotechnology Scientific and Production Center, Yerevan, Armenia

Ներածություն. Նարդես կոշտավունը նեխուրազգիների (Apiaceae) ընտանիքի բազմամյա խոտաբույս է: Հայտնի է բույսի մոտ 140 տեսակ: Տարածված է Արագածոտնի, Կոտայքի, Սյունիքի նախալեռնային շրջաններում: Ըստ դեղատու բույսերի բառարանի (Լ.Վ. Ռևազովա, Մ.Ս. Մուսայելյան, 1997)՝ գիտական և ավանդական բժշկության մեջ կիրառվում է բույսի 11 տեսակ՝ այդ թվում F. badrakema (նարդես բադրա-կեմա), F. foetida (ն.գարշահոտ), F. pyramidata (ն.բուրգանման), F. gumosa (ն. կամեդային), F. sumbul (ն.մշկային), F. narthex (ն.նարդես) և այլ տեսակները: Գիտական աղբյուրներից հայտնի է, որ բույսի տարբեր հատվածները պարունակում են եթերայուղեր, խեժանյութեր (արմատներում), ֆենոլային միացություններ: Միջազգային գիտագրական աղբյուրները հաճախ են անդրադառնում բույսի մեկ այլ տեսակի՝ Ferula caspica M. Bieb. քիմիական բաղադրության և կենսաբանական ակտիվության (հակամանրէային, հակաօքսիդանտային) ուսումնասիրություններին, որոնց համաձայն՝ բուսահումքը պարունակում է կումարիններ, ֆենիլպրոպանոիդային գլիկոզիդներ, ֆլավանոիդներ, ստերինային բնույթի նյութեր և այլն: Հայաստանի ֆլորայում առկա են բուսահումքի բավարար պաշարներ, ինչը խթան կարող է հանդիսանալ բուսահումքի բաղադրության և կենսաբանական ակտիվության ուսումնասիրության համար՝ բժշկադեղագիտական ոլորտում կիրառման հնարավորությունները դիտարկելու և գնահատելու տեսանկյունից: Նկատի առնելով ֆիտոպատրաստուկներում, ինչպես նաև սննդի կենսաակտիվ հավելումներում բուսահումքերը ներառելու միտումը՝ բարձր է գնահատվում նաև անփոխարինելի ամինաթթուների առկայությունը:

Նպատակ. Ուսումնասիրել Հայաստանի ֆլորայում աճող նարդես կոշտավունից մթերված հումքի ամինաթթվային կազմը:

Եղանակներ. Հետազոտության նյութեր են ծառայել մայիս-հունիս ամիսներին Արագածոտնի մարզի Բյուրական գյուղում աճող՝ ծաղկման փուլում նարդես կոշտավուն բուսատեսակից հավաքված խոտը և արմատները: Մթերման և չորացման գործընթացը կազմակերպվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուղեցույցների համաձայն: Օդաչոր հումքից սպիրտային չոր լուծամզվածքը ստացվել է ըստ ՕՓԸ. 1.5.3.0006.15 ֆարմակոպեական հոդվածի (ՀՓ XIII): Նմուշում ամինաթթուների կազմի որակական և քանակական հետազոտությունն իրականացվել է «Shimadzu Nexeria X2» ամինաթթվային անալիզատորի կիրառմամբ նախասաշտարակային դերիվատիզացման եղանակով:

Արդյունքներ. Ինչպես ցույց տվեցին բարձրարդյունավետ հեղուկային քրոմատոգրաֆիայի արդյունքները, բույսից մթերված խոտի էթանոլային չոր հանուկը պարունակում է պայմանական անփոխարինելի L-սերին (0.037մգ/մլ) և L-հիստիդին (0.021մգ/մլ), ինչպես նաև անփոխարինելի ամինաթթուներ՝ գլյուտամին (0.0092մգ/մլ), գլիցին (0.010մգ/մլ), ֆենիլալանին (0.039մգ/մլ), L-իզոլեյցին (0.022մգ/մլ), L-լեյցին (0.039մգ/մլ): Արմատի էթանոլային չոր հանուկում հայտնաբերվեցին L-ասպարագին (0.005մգ/մլ), L-հիստիդին (0.008մգ/մլ) պայմանական անփոխարինելի և գլիցին (0.006մգ/մլ) ու գլյուտամին (0.020 մգ/մլ) անփոխարինելի ամինաթթուները:

Եզրակացություն. Հետազոտության արդյունքների համաձայն՝ Բյուրականից հավաքված նարդես կոշտավունի հումքը (herba Ferulae rigidulae) հարուստ է կենսական կարևոր ամինաթթուներով, որոնք որոշակի նշանակություն կարող են ունենալ հումքի դեղաբանական հատկությունների դրսևորման մեջ:

0331 Երիկամների սուր ախտահարմամբ երեխաների երիկամ փոխարինող բուժման արդյունքները. Հայաստանի Հանրապետությունում մանկական երիկամաբանության ռեֆերենս կենտրոնի տվյալներ

The results of kidney replacement therapy in children with acute kidney injury data from the childrens nephrology reference center in the Republic of Armenia

Աննա Շեգունց, Աշոտ Սարգսյան,
Հելեն Նազարյան, Միլենա Ոսկանյան
Արաբկիր ԲՀ, Երևան, Հայաստան

Anna Shegunts , Ashot Sarkissian, Helen Nazaryan,
Milena Voskanyan
Arabkir MC, Yerevan, Armenia

Ներածություն. Երիկամների սուր ախտահարման (ԵՍԱ) դեպքերը հոսպիտալացված երեխաների շրջանում տարեցտարի աճում են ողջ աշխարհում:

Նպատակ. Ներկայացնել վիճակագրական տվյալներ Արաբկիր բժշկական համալիրում (ԱԲՀ) 2011-2022թթ. ԵՍԱ-ի կապակցությամբ բուժում ստացած երեխաների շրջանում:

Եղանակներ. ԵՍԱ-ն ախտորոշվել է ըստ pRIFLE (Pediatric Risk, Injury, Failure, Loss, End Stage Renal Disease) չափանիշների: Երիկամին փոխարինող բուժման տեսակի ընտրությունը՝ պերիտոնեալ դիալիզ կամ հեմոդիալիզ, իրականացվել է՝ ելնելով երեխայի տարիքից՝ ընդունված բժշկական ցուցումների հիման վրա: Հեմոդիալիզի սխեման, հեպարինացումը, տևողությունը և հաճախականությունն ընտրվել են անհատական մոտեցմամբ: Ատիպիկ հեմոլիտիկ-ուրեմիկ համախտանիշով պացիենտներին, հեմոդիալիզից զատ, իրականացվել են նաև պլազմաֆերեզի սեանսներ: Արդյունքներ. ԱԲՀ-ում 2011-2022թթ. ժամանակահատվածում ԵՍԱ դեպքերը կազմել են ընդհանուր հոսպիտալացված դեպքերի 0.6%-ը: ԵՍԱ-ով 1032 դեպքերի 15.3%-ը եղել է հեմոլիտիկ-ուրեմիկ համախտանիշ (158 երեխա), որից 5-ի մոտ ախտորոշվել է ատիպիկ հեմոլիտիկ-ուրեմիկ համախտանիշ (Ա-ՀՈՒՀ): ԵՍԱ-ով 1032 երեխաներից հեմոդիալիզի կարիք են ունեցել 84-ը (8.1%), իսկ պերիտոնեալ դիալիզ իրականացվել է 90-ին (8.7%), մնացած հիվանդները ստացել են կոնսերվատիվ բուժում: Հեմոդիալիզ ստացած երեխաների 53.2%-ը եղել են արական սեռի: Հիվանդների միջին տարիքը եղել է 9.5±2.4 տարեկան (միջակայք՝ 1-18): Ընդհանուր առմամբ իրականացվել է հեմոդիալիզի 1201 սեանս, մեկ հիվանդին իրականացված սեանսների միջին թիվը՝ 14.5: Չորս դեպքում պերիտոնեալ դիալիզը փոխարինվել է հեմոդիալիզով (4.4%) պերիտոնիտի զարգացման և/կամ պերիտոնեալ դիալիզի ցածր արդյունավետության պատճառով: Ա-ՀՈՒՀ-ով 4 երեխայի իրականացվել է նաև պլազմաֆերեզի 35 սեանս, որոնց արդյունքում դիտվել է կայուն ռեմիսիա: Հեմոդիալիզով բուժում ստացող երեխաների շրջանում դիտվել են հետևյալ բարդությունները. արյունահոսություն (n=6, 7.1%), կենտրոնական կաթետերի թրոմբոզ կամ թերֆունկցիա (n=15, 17.8%): Հեմոդիալիզով բուժում ստացած երեխաներից 77-ի (91.6%) շրջանում դիտվել է երիկամի ֆունկցիայի լավացում, 4-ի բուժումը շարունակվել է քրոնիկ հեմոդիալիզով, 3 երեխա մահացել է հիմնական հիվանդության պատճառով (սուր լեյկոզ՝ 1, կարդիոմիոպաթիա՝ 2):

Եզրակացություն. ԱԲՀ-ում երեխաների շրջանում հասանելի են ԵՍԱ-ի բուժման բոլոր հնարավոր մեթոդները՝ պահպանողական բուժում, հեմոդիալիզ և պերիտոնեալ դիալիզ: Երիկամ փոխարինող թերապիայի հասանելիության, հիմնական հիվանդության հստակ ախտորոշման, բուժման սխեմաների ճիշտ ընտրության դեպքում հնարավոր է զգալի բարելավել ԵՍԱ-ի ելքը երեխաների շրջանում, այդ թվում նաև ատիպիկ հեմոլիտիկ-ուրեմիկ համախտանիշի դեպքում:

A020 Անոթազարկով ախտորոշման համակարգչային VedaPulse համալիրը բուժառուի առաջին այցի ժամանակ առողջության համապարփակ գնահատման համար
VedaPulse computerized radial pulse diagnostic complex for a comprehensive health assessment at the patients first visit

Մկրտիչ Ավագյան[1], Վարդան Աբովյան[2], Արեգ Թադևոսյան[3], Լուսինե Վարդանյան[1], Անուշ Քուրդօղլյան[1], Տաթևիկ Հովակիմյան[1]
[1]ԱլտՄեդ վերականգնողական, կանխարգելիչ և ավանդական բժշկության կենտրոն, Երևան, Հայաստան
[2]Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան
[3]«Միջմշակութային հետազոտություններ և զարգացում» հասարակական կազմակերպություն, Երևան, Հայաստան

Mkrtich Avagyan[1], Vardan Abovyan[2], Areg Tadevosyan[3], Lusine Vardanyan[1], Anush Kurdoghlian[1], Tatevik Hovakimyan[1]
[1]AltMed MC, Yerevan, Armenia
[2]State Institute of Physical Culture and Sports of Armenia, Yerevan, Armenia
[3]"Intercultural Research and Development" NGO, Yerevan, Armenia

Ներածություն. Անոթազարկով ախտորոշումը կարևոր գործիք է դարձել ոչ միայն ավանդական չինական բժշկության (ԱՉԲ) պրակտիկանտների, այլ նաև արևմտյան բժշկության մի շարք ոլորտների համար: Նախկինում չինացի բժիշկները հիմնվում էին իրենց կուտակած փորձի և ինտուիցիայի վրա, իսկ ներկայումս բժշկական փորձաքննության և թվային ազդանշանի մշակման տեխնոլոգիաների համակցությամբ ԱՉԲ անոթազարկի չափման գործիքները ոչ միայն մեծապես բարելավում են վերարտադրելիությունը, այլև անմիջապես վերլուծում են չափված իմպուլսի պրոֆիլը: Մեր պրակտիկայում անոթազարկի միջով ախտորոշման համար կիրառել ենք VedaPulse պրոֆեսիոնալ իմպուլսային ախտորոշման համակարգչային համալիրը: Սրտի հաճախականության փոփոխականության վերլուծության մեթոդը, որը հանդիսանում է VedaPulse համակարգի ալգորիթմների հիմքը, առաջարկվել է Սրտաբանության եվրոպական ընկերության և Հյուսիսային Ամերիկայի Սրտաբանության և Էլեկտրաֆիզիոլոգիայի միության կողմից:

Եղանակներ. ԱլտՄեդ վերականգնողական, կանխարգելիչ և ավանդական բժշկության կենտրոնում պացիենտներ ախտորոշման և բուժման գործընթացում մենք կիրառում ենք VedaPulse անոթազարկով ախտորոշման համակարգչային համալիրը, որի ծրագրային վերլուծությունն իր տեսակի մեջ առաջինն է, որը միավորում է ժամանակակից բժշկության մոտեցումները Հնդկաստանի Այուրվեդիկ և ԱՉԲ-ի հետ: Մենք կիրառել ենք VedaPulse-ը պացիենտի առաջին այցի ժամանակ առողջության համապարփակ գնահատման համար և տրամադրել ենք առաջարկություններ առողջության պահպանման և վերականգնման համար: VedaPulse-ի միջոցով կատարել ենք մարմնի ֆունկցիոնալ վիճակի էքսպրես թեստ, գնահատել սթրեսի մակարդակը, օրգան համակարգերի ֆուկցիոնալ վիճակը (էներգիայի մակարդակը) և ամբողջական օրգանիզմի վերականգնողական պոտենցիալը, այնուհետև տրամադրել ենք անհատական առաջարկներ՝ վերականգնիչ սննդակարգով, ֆիզիկական ակտիվության պարզաբանմամբ և ապրելակերպի շտկմամբ: Կրկնակի հետազոտությունը կատարվել է երեք ամիս անց, իսկ յոգայի խմբում հետազոտությունը իրականացվել է դասընթացի ավարտից հետո՝ 28 օր անց:

Արդյունքներ. VedaPulse անոթազարկով ախտորոշման համակարգչային համալիրը հետազոտվել են 24-53 տարեկան 81 բուժառուներ, որոնցից բոլորի համար կազմվել է անհատական առաջարկությունների փաթեթ: Բուժառուների որոշ մասը ստացել է նաև այլ բուժումներ՝ ռեֆլեքսոթերապիա (39, 48.1%), ֆիզիոթերապիա (24, 29.6%), հիդրոթերապիա (14, 17.2%), իսկ 18-ը մասնակցել են յոգայի դասընթացների (18, 22.2%): Կրկնակի հետազոտությանը ներկայացել է առաջին հետազոտությանը մասնակցած բուժառուներից 59-ը (72.8%), որոնցից 41-ի մոտ (69.5%) գրանցվել է վերականգնողական պոտենցիալի վերականգնում և սթրեսի մակարդակի նվազում:Միայն 1 դեպքում անփոփոխ վերականգնողական պոտենցիալի պայմաններում գրացվել է սթրեսի մակարդակի բարձրացում:

Եզրակացություն. ԱլտՄեդ վերականգնողական, կանխարգելիչ և ավանդական բժշկության կենտրոնում VedaPulse անոթազարկով ախտորոշման համակարգչային համալիրը դաձել է բուժառուների համալիր ախտորոշման և բուժման գործընթացի բաղկացուցիչ մաս: Գտնում ենք, որ անոթազարկով ախտորոշման VedaPulse համակարգչային համալիրը կարելի է արդյունավետ կիրառել բուժառուի ֆուկցիոնալ ախտորոշման, առողջության պահպանման և վերականգնման գործընթացում:

0041 Տուբերկուլյոզի ազդեցությունը պացիենտների կյանքի որակի վրա
Impact of tuberculosis on the quality of life of patients

Լյուբով Նիկոլայան
Թոքաբանության ազգային կենտրոն, Աբովյան, Հայաստան

Lyubov Nikolayan
National Center of Pulmonology, Abovyan, Armenia

Ներածություն. Կյանքի որակն անհատի ընկալումն է իր ապրած կյանքում մշակույթի ու արժեհամակարգի համատեքստում՝ դիրքի, նպատակների, ակնկալիքների, ստանդարտների ու հոգսերի համադրությամբ:

Նպատակ. Տուբերկուլյոզի ազդեցության ուսումնասիրություն պացիենտների կյանքի որակի վրա:

Եղանակներ. Հետազոտությանը մասնակցել է Թոքաբանության ազգային կենտրոնում բուժվող 80 պացիենտ: Կյանքի որակը բնութագրող գործիքը P.Y. Hugenholts-ի և R.A.M. Erdman-ի կողմից (1995) մշակած էքսպրես-հարցաթերթիկն է (New Assessment and Information form to Measure Quality of Life – NAIF), որով գնահատվում են հարցվողի կյանքի որակն ու դրա առանձին ոլորտ-ենթաոլորտները: Հարցաթերթիկի պա-

տասխանների հանրագումարից հաշվվում է կյանքի որակի գումարային ցուցանիշ, որի ընկալումը դյուրին դարձնելու համար այն վերածվում է տոկոսների: Ըստ սույն մեթոդի՝ իր կյանքի բոլոր ոլորտներից բավարարված անձի հիշյալ ցուցանիշը 100 է. դրա նվազումը մինչև 75% համարվում է աննշան, մինչև 50%՝ չափավոր, 25%-ից ցածր՝ խիստ արտահայտված իջած:

Արդյունքներ. Պացիենտների 88,6%-ն արական սեռի, միջին տարիքի (15-44) են՝ տուբերկուլյոզի թոքային (82,5%) և արտաթոքային (17,5 %) տեղակայմամբ՝ ներսփռանքային տուբերկուլյոզի գերակշռությամբ (78,8%): Ֆիզիկական շարժունության նվազումը կազմել է 55,8%, սեռականը՝ 69,7%, սոցիալականը՝ 56%, ճանաչողականը՝ 72,9%: Այսինքն՝ հիշյալ ցուցանիշները նվազած են եղել չափավոր: Հուզական վիճակի ցուցանիշը կազմել է 68%, ինչը էական չի կարելի համարել տուբերկուլյոզով անձանց համար, մինչդեռ տնտեսական կեցության ցուցանիշը զգալիորեն նվազած է՝ 48,4%: Ընդհանուր առմամբ, գումարային ցուցանիշը կազմել է 62,3%, այսինքն՝ չափավոր իջած:

Եզրակացություն. Տուբերկուլոզը, որպես օրգանիզմի քրոնիկ ախտահարում, բացասաբար է անդրադառնում կյանքի որակի վրա՝ զգալիորեն իջեցնելով տնտեսական վիճակի ցուցանիշը, չափավոր՝ ֆիզիկական շարժունակությունը, սոցիալական, ճանաչողական, սեռական ցուցանիշները: Կյանքի որակի ցուցանիշների արդյունքների հաշվառումը կարող է, ի թիվս կլինիկառենտգենամանրէաբանական տվյալների, նպաստել տուբերկուլյոզով պացիենտների ֆիզիկական, սոցիալ-հոգեբանական վերականգնման գործընթացին:

0231 Հակամանրէային դեղերի ռացիոնալ կիրառման համակարգի ներդրման և վերահսկման անհրաժեշտությունը Հայաստանում

The necessity of antimicrobial stewardship program implementation and monitoring in Armenia

Նարինա Սարգսյանց, Հերմինե Հովակիմյան, Աստղիկ Դավիդյան
Առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան

Narina Sargsyants, Hermine Hovakimyan, Astghik Davidyan
National Institute of Health, Yerevan, Armenia

Ներածություն. Ամբողջ աշխարհում հակամանրէային դեղերի նկատմամբ կայունությունը (ՀՄԴԿ) բարձրանում է մինչև տագնապալի բարձր մակարդակների: Հակամանրէային դեղերը՝ ներառյալ հակաբիոտիկները, հակավիրուսայինները, հակասնկայինները, հակամակաբուծայինները, օգտագործվում են մարդկանց, կենդանիների և բույսերի վարակների կանխարգելման և բուժման համար: Հակաբիոտիկների արդյունավետության նվազման պատճառով բազմաթիվ վարակների՝ թոքաբորբեր, արյան հոսքի վարակներ, տուբերկուլոզ, գոնորեա, աղիքային վարակներ և այլն, բուժումը դառնում է դժվար կամ անհնարին: Հայաստանում ՀՄԴԿ առաջացմանը և տարածմանը նպաստող գործոնները բազմաթիվ են՝ բուժաշխատողների և բնակչության ցածր իրազեկվածությունը, հակամանրէային դեղերի հասանելիությունը՝ առանց դեղատոմսի, դրանց ցածր որակը, չհիմնավորված, ոչ ռացիոնալ՝ սխալ դեղաչափերով նշանակումը, կիրառումը և համակցությունները, բուժման ռեժիմի խախտումը կամ ընդհատումը, վարակի անբավարար վերահսկումը:

Եղանակներ. Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) 2017թ. մշակել է առաջնահերթ ախտածինների ցանկ՝ նոր հակամանրէային նյութերի հետազոտությունն ու մշակումը ուղղորդելու համար: Այն կթարմացվի 2023 թվականին: Հայաստանում 10.06.2019թ. առողջապահության նախարարի 1529-Լ հրամանով հաստատվել են հիմնական հակաբիոտիկների խմբերի դասակարգումը և ընտրության առաջնահերթության չափանիշները: 2021թ. ԱՀԿ փորձագիտական աջակցությամբ մշակվել են առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակում մեծահասակների միզուղիների, շնչառական ուղիների սուր վարակային հիվանդությունների, ֆարինգիտի, արտահիվանդանոցային թոքաբորբի, COVID-19-ի բուժման, երեխաների, նաև միջին ականջի բորբոքման հակամանրէային դեղերի պատշաճ նշանակման եվ վարման վերաբերյալ ուղեցույցներ: 25.10.2022թ. ԱՀԿ-ն հրապարակել է զեկույց, որը ներկայացնում է բարձր առաջնահերթություն ունեցող սնկային ախտածինների աշխարհում առաջին ցուցակը՝ 19 սնկերի գրացուցակ, որոնք ամենամեծ վտանգն են ներկայացնում հանրային առողջության համար: Ինվազիվ սնկային վարակներով վարակվելու ամենամեծ վտանգի տակ են քաղցկեղով, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով, օրգանների փոխպատվաստմամբ, շնչառական քրոնիկ հիվանդություններով, տուբերկուլոզային վարակով բուժառուները: COVID-19-ով հիվանդանոցային բուժառուների շրջանում գրանցվել է ինվազիվ սնկային վարակի դեպքերի զգալի աճ: Հակավիրուսային դեղերի երկարատև կայունությունը ձևավորվում է վիրուսի շարունակական վերարտադրության և կայուն շտամների սելեկցիայի արդյունքում:

Արդյունքներ. ԱՀԿ-ի փորձագիտական աջակցությամբ Հայաստանում իրականացվել է ՀՄԴԿ հսկողության և կանխարգելման ազգային ռազմավարության և 2023-2027թթ. միջգերատեսչական միջոցառումների ծրագրի մշակում: ԱՀԿ-ի և վարակաբանի կողմից որպես կարևոր ռազմավարության հիմնական ուղղություն նշվել է հակամանրէային դեղերի ռացիոնալ կիրառման համակարգի ներդնումը և վերահսկումը: Այդ նպատակով Առողջապահության ազգային ինստիտուտի ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնը առաջարկել է մշակել հակամանրէային դեղերի ռացիոնալ կիրառման համակարգի վերաբերյալ ուղեցույց/գործելակարգ, որը կհաստատվի առողջապահության նախարարի հրամանով, ինչպես նաև բուժաշխատողների շրջանում կազմակերպել հակամանրէային դեղերի ռացիոնալ կիրառման համակարգի վերաբերյալ դասընթացներ, տրամադրել կրթական նյութեր, կազմակերպել սոցիալական գովազդներ, սահմանել պարտադիր վերապատրաստումներ:

Եզրակացություն. Անհրաժեշտ է ներդնել հակամանրէային դեղերի ռացիոնալ կիրառման և վերահսկման համակարգ «Մեկ առողջություն» գաղափարի շրջանակում: Կարևոր է հիվանդանոցներում և ԱԱՊ-ում հակամանրէային դեղերի նշանակման պրակտիկայի կանոնավոր մշտադիտարկման իրականացումը:

0307 Հակառետրովիրուսային բուժման մոտեցումների փոփոխությունները Հայաստանի Հանրապետությունում
Changes in antiretroviral treatment approaches in the Republic of Armenia

Հերմինե Հովակիմյան[1,2], Նարինա Սարգսյանց[1], Աստղիկ Դավիդյան[1,2]
[1]Առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան
[2]Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն, Երևան, Հայաստան
Hermine Hovakimyan[1,2], Narina Sargsyants[1], Astghik Davidyan[1,2]
[1]National Institute of Health, Yerevan, Armenia
[2]National Center of Infectious Diseases, Yerevan, Armenia

Ներածություն. Հակառետրովիրուսային (ՀՌՎ) բուժումը զգալիորեն նվազեցնում է ընդհանուր մահացությունը մարդու իմունային անբավարարության վիրուսով (ՄԻԱՎ) ապրող մարդկանց շրջանում: ՀՌՎ բուժումը խորհուրդ է տրվում սկսել ՄԻԱՎ վարակով պացիենտների շրջանում՝ անկախ կլինիկական փուլից և իմունային անբավարարության աստիճանից՝ մեծահասակներ, հղի և կրծքով կերակրող կանայք, դեռահասներ, ՄԻԱՎ-ով ապրող երեխաներ 1-ից մինչև 10 տարեկան, կյանքի առաջին տարում ախտորոշված երեխաներ: Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) առաջարկների հիման վրա 2019թ. դեկտեմբերին ՀՀ-ում ՀՌՎ բուժման կլինիկական ուղեցույցի փոփոխությամբ ՀՌՎ բուժման առաջին և երկրորդ շարքում հետադարձ տրանսկրիպտազի նուկլեոզիդային արգելակիչների հենքի հետ որպես երրորդ նախընտրելի պրեպարատ դարձավ ինտեգրազի արգելակիչ դոլուտեգրավիրը (DTG): Նախկինում 1-ին շարքում երրորդ նախընտրելի դեղն էր իֆավիրենցը (EFV), իսկ 2-րդ շարքում՝ պրոտեազի արգելակիչները:

Եղանակներ. Համաձայն նոր ՀՌՎ բուժման կլինիկական ուղեցույցի, հաստատված ՀՀ առողջապահության նախարարի՝ 23.03.2023 թվականի թիվ 1488-Լ հրամանով, ՀՌՎ բուժումը անհրաժեշտ է սկսել տուբերկուլյոզի ժամանակ (բացառությամբ տուբերկուլյոզային մենինգիտը), հակատուբերկուլոզային բուժման մեկնարկից 2 շաբաթվա ընթացքում՝ անկախ CD4+ լիմֆոցիտների քանակից, իսկ կրիպտոկոկային մենինգիտով պացիենտների մոտ՝ հակասնկային բուժման մեկնարկից 4-6 շաբաթանց: Փոփոխվել են նաև ՀՌՎ-ի առաջարկները երեխաների շրջանում DTG-ի ներառմամբ և բուժման մշտադիտարկման մոտեցումները՝ կախված վիրուսային ծանրաբեռնվածությունից: 2020թ. Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնում մեծահասակների շրջանում մեկնարկեց աստիճանաբար անցումը DTG պարունակող ՀՌՎ բուժման սխեմաներին: 2023թ. համար ՀՌՎ դեղերի նախապես պլանավորվող պատվերներում՝ համաձայն նոր ՀՌՎ բուժման կլինիկական ուղեցույցի, ներառվել է DTG-ի հատուկ դեղաչափ՝ 10 մգ դեղահատ երեխաների համար: Արդյունքներ. 2020թ.-ի հունվարի դրությամբ ՀՀ-ում ՀՌՎ բուժում էր ստանում 2214 ՄԻԱՎ-ով ապրող անձ, որոնցից միայն 646-ն (29.2%) էր ստանում DTG պարունակող սխեմաներ: 2021թ. վերջին 2677 ՀՌՎ բուժման վրա գտնվող պացիենտներից, արդեն իսկ 2603-ը (97.2%) ստանում էր DTG, իսկ 30.12.2022թ.՝ 3189 պացիենտներից՝ 3105-ը (97.3%): Նախկինում այլ դեղեր ստացած, այժմ DTG-ի վրա գտնվող պացիենտների մոտ նվազել է դեղային տոքսիկությունը, նվազագույն են դարձել դեղային փոխազդեցությունները, հարմարավետ է դարձել դեղի ընդունումը՝ մասնավորապես ֆիքսված դեղաչափերով համակցված տարբերակների առկայության հետ կապված: ՀՀ-ում 30.12.2022թ. մինչև 18 տարեկան 55 ՄԻԱՎ-ով ապրող անձ ստանում էր ՀՌՎ բուժում, որից DTG պարունակող սխեմաներ ստանում էր 12 տարեկանից բարձր 15 անձ (27.3%):

Եզրակացություն. ՀՀ-ում 2020-2021 թվականներին իրականացվեց ՀՌՎ բուժման հիմնական սխեմաների փոփոխություն՝ DTG-ի պարունակությամբ, որը բնութագրվում է կիրառման հարմարավետությամբ, բարձր գենետիկ պատնեշով և լավ տանելիությամբ: Անհրաժեշտ է DTG-ն ներառել նաև 4 շաբաթականից մեծ, 3 կգ-ից բարձր քաշ ունեցող երեխաների շրջանում:

0308 Կենտրոնական նյարդային համակարգի տուբերկուլյոզային ախտահարումը ՄԻԱՎ-վարակակիրների շրջանում
Tuberculosis disease of the central nervous system among HIV-infected people

Սվետլանա Գրիգորյան, Լյուբով Նիկոլայան, Լուսինե Եղիազարյան
Թոքաբանության ազգային կենտրոն, Աբովյան, Հայաստան

Svetlana Grigoryan, Lyubov Nikolayan, Lusine Eghiazaryan
National Center of Pulmonology, Abovyan, Armenia

Ներածություն. Տուբերկուլյոզային մենինգիտը (ՏՄ) տուբերկուլյոզի (ՏԲ) կլինիկական ամենածանր ձևերից է ՄԻԱՎ-ով վարակված անձանց շրջանում: Գրականության տվյալներով՝ մահացու ելքը ՏՄ դեպքում հակատուբերկուլոզային բուժման 6 ամսվա ընթացքում 21-43% է: Նյարդաբանական դրսևորումները հանդիպում են դեպքերի 50-90%-ում: Նոր, արդյունավետ, հակառետրովիրուսային դեղորայքի ներդրման պահից ի վեր դիտվում է ինչպես ՄԻԱՎ-ից, այնպես էլ այլ վարակներից մահացության նվազում, մասնավորապես, կենտրոնական նյարդային համակարգի (ԿՆՀ) ախտահարմամբ ուղեկցվող:

Եղանակներ. Հետազոտության մեջ է ընդգրկվել Թոքաբանության ազգային կենտրոնում 2018-2023թթ. բուժված 37 պացիենտ: ՄԻԱՎ-ի ախտորոշումը հաստատվել է Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնում: Դեպքերի 90%-ում ՄԻԱՎ-ն ախտորոշվել է ավելի վաղ, քան տուբերկուլյոզային ախտահարումը: Կիրառվել են ՏԲ ախտորոշման կլինիկալաբորատոր, գործիքային քննություններ՝ ներառյալ մենինգիտի ախտորոշման համար անհրաժեշտ ողնուղեղային հեղուկի քննությունները, գլխուղեղի համակարգչային շերտագրություն և մագնիսառեզոնանսային շերտագրություն:

Արդյունքներ. ՏՄ-ն առավելապես (33.7%) հանդիպում

է 45-55 տարեկան արական սեռի անձանց շրջանում: 0-15 տարեկանների շրջանում ՏՄ-ը կազմել է դեպքերի 25.9%-ը: ՏՄ-ով 37 պացիենտներից 27.0%-ն ունեցել են ՄԻԱՎ: Կլինիկական դրսևորումներից վտանգավոր (գանգուղեղային նյարդերի ախտահարում, կաթված, էնցեֆալիտ, փոքր կոնքի օրգանների գործառույթի խանգարում, կոմա) և միջին վտանգավորության (գլխացավ, ջերմություն, փսխում) նշաններ դիտվել են դեպքերի 90%-ում, վտանգ չներկայացնող նշաններ (պարանոցի մկանների կարկամություն, մարմնի զանգվածի նվազում, լուսավախություն)՝ դեպքերի 80%-ում: ՏՄ-ի բարդությունները՝ ուղեղի ջրգողության, կաթվածի, ոստայնենու բորբոքման տեսքով դիտվել են դեպքերի 20%-ում: Բուժառուների 95.3%-ը բուժվել են հակատուբերկուլոզային 1-ին շարքի դեղորայքով, 4.7%-ն ստացել է բազմադեղակայուն ՏԲ-բուժում: Հակառետրովիրուսային և հակատուբերկուլոզային բուժման արդյունքում բարեհաջող ելքերը կազմում են 80%: Մահվան ելք արձանագրվել է դեպքերի 33.3%-ում:

Եզրակացություն. ՏՄ առումով ՄԻԱՎ-ով անձանցից առավել խոցելի են արական սեռի, 45-55 տարիքի անձինք: Մեծամասամբ սկզբում ախտորոշվել է ՄԻԱՎ վարակը, այնուհետև՝ տուբերկուլոզային հիվանդությունը: Ժամանակին հայտնաբերման և վաղաժամ սկսած բուժման դեպքում, անգամ համավարակի պայմաններում, գերազանցում են բուժման բարեհաջող ելքերը՝ հակառետրովիրուսային և հակատուբերկուլոզային բուժում ստացածների 80%-ի շրջանում:

0332 ՄԻԱՎ-ի, սիֆիլիսի, հեպատիտ Բ-ի և Ց-ի թեստավորման բարելավված հասանելիության ապահովման պիլոտային ծրագիր

Pilot program to provide improved access to HIV, syphilis, hepatitis B and hepatitis C

Արևիկ Թորոսյան[1], Լուսինե Հովհաննիսյան[1], Արմինե Զոհրաբյան[2], Ռոզա Բաբայան[3]
[1]Առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան
[2]Երևանի քաղաքապետարան, Երևան, Հայաստան
[3]Միավորված ազգերի կազմակերպության ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագիր (UNAIDs), Երևան, Հայաստան

Arevik Torosyan[1], Lusine Hovhannisyan[1], Armine Zohrabyan[2], Roza Babayan[3]
[1]National Institute of Health, Yerevan, Armenia
[2]Yerevan Municipality, Yerevan, Armenia
[3] Joint United Nations Programme on HIV/AIDS (UNAIDs), Yerevan, Armenia

ՄԻԱՎ-ի, սիֆիլիսի, հեպատիտ Բ-ի և Ց-ի թեստավորման բարելավված հասանելիության ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության (ՀՀ ԱՆ) Առողջապահության ազգային ինստիտուտը Միացյալ ազգերի կազմակերպության ՄԻԱՎ/ՁԻԱՀ համատեղ ծրագրի շրջանակում ՀՀ ԱՆ և Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ իրականացրել է վարակների արագ թեստերի միջոցով թեստավորման ապակենտրոնացման պիլոտային ծրագիր: Ապակենտրոնացման առավելություններն են՝ ՄԻԱՎ-ի, սիֆիլիսի, հեպատիտ Բ-ի և Ց-ի թեստավորման բարելավված հասանելիությունը բնակչության համար, վարակների վաղ հայտնաբերման և բուժման ավելացումը, ինչպես նաև թեստավորման հետ կապված խարանի և խտրականության նվազեցումը: Թեստավորումն իրականացվել է Երևանի 23 պոլիկլինիկաներում՝ օգտագործելով ՄԻԱՎ-ի, հեպատիտ Բ-ի, հեպատիտ Ց-ի և սիֆիլիսի՝ չորսը մեկում արագ թեստավորման փաթեթներ: Թեստավորումն իրականացվել է անվճար ու անանուն սկզբունքով: Այն ընդգրկել է 2020-2022թթ. ժամանակահատվածը: Բուժաշխատողների աշխատանքը հեշտացնելու համար մշակվել է հաշվետվողական ձևաթերթ: Թեստավորումն սկսելուց առաջ կազմակերպվել են դասընթացներ առաջնային օղակի բժիշկների համար, որոնց շրջանում ներկայացվել են ընդհանուր տեղեկություններ ՄԻԱՎ-ի, սիֆիլիսի, հեպատիտ Բ-ի և Ց-ի վերաբերյալ, թեստավորման գործընթացը, հաշվետվողական ձևաթերթերի լրացման կարգը: Բոլոր պոլիկլինիկաներում ծրագրի իրականացման թիմը հեռախոսահամար է տրամադրել կոնտակտային անձանց և մշտական կապ է պահպանել նրանց հետ՝ բոլոր հարցերն ու խնդիրները լուծելու համար: Թեստավորման խրախուսման նպատակով մշակվել է համապատասխան պաստառ, որը տրամադրվել է թեստավորում իրականացնող 23 պոլիկլինիկաներին: Մշակվել է նաև տեսանյութ, որն ավելի հստակ ցույց է տալիս թեստավորման հնարավորությունը Երևանի պոլիկլինիկաներում: Վերջիններիս հետ համագործակցելով՝ 4 տեսահոլովակ է պատրաստվել ընտանեկան բժիշկների մասնակցությամբ, որի շրջանակում բուժաշխատողները խրախուսում են բնակչությանը թեստավորվելու հարցում: Հաշվետվողական ձևաթերթերի միջոցով ամսական կտրվածքով իրականացվել է պոլիկլինիկաների աշխատանքների մշտադիտարկում և գնահատում: 2020թ. իրականացվել է 2,167 հետազոտություն, 2021թ.՝ 17,013, իսկ 2022թ.՝ 16,908: Ընդհանուր առմամբ պոլիկլինիկաներում կատարվել է 36,088 հետազոտություն, այդ թվում՝ 9,036 ՄԻԱՎ-ի, 9,017 սիֆիլիսի, 9,017 հեպատիտ Բ-ի, 9,017 հեպատիտ Ց-ի թեստ: Թեստավորման արդյունքում հայտնաբերված դեպքերը, ըստ տարիների, հետևյալն են.

- 2020թ.՝ 6 սիֆիլիս, 1 հետապիտ Բ, 33 հեպատիտ Ց, 2 ՄԻԱՎ:
- 2021թ.՝ 38 սիֆիլիս, 63 հետապիտ Բ, 183 հեպատիտ Ց, 17 ՄԻԱՎ:
- 2022թ.՝ 225 սիֆիլիս, 63 հետապիտ Բ, 181 հեպատիտ Ց, 27 ՄԻԱՎ:

Ընդհանուր թեստավորումների արդյունքում հայտնաբերվել է սիֆիլիսի 269, հեպատիտ Բ-ի 398, հեպատիտ Ց-ի 127 և ՄԻԱՎ-ի 46 դեպք: Որպես արդյունք՝ կարող ենք նշել, որ պոլիկլինիկաներում թեստավորման իրականացումը բնակչությանը հնարավորություն է տալիս արագ, անվճար, հասանելի և անանուն թեստավորվելու և վարակների առկայության դեպքում բուժումը ժամանակին սկսելու:

0410 Սպոնտան պնևմոմեդիաստինումը և սպոնտան պնևմոթորաքսը իբրև Կովիդ-19-ասոցացված թոքաբորբի բարդություններ

Spontaneous pneumomediastinum and spontaneous pneumothorax as complications of COVID-19 associated pneumonia

Ռուբեն Խաչատրյան, Արմինե Հովհաննիսյան, Սարգիս Ղազարյան
Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ, Երևան, Հայաստան
Ruben Khachatryan, Armine Hovhannisyan, Sargis Ghazaryan
Surb Grigor Lusavorich MC, Yerevan, Armenia

Ներածություն. Սպոնտան պնևմոմեդիաստինումը և սպոնտան պնևմոթորաքսը (ՍՊՍՊ) ոչ հաճախ հանդիպող, սակայն բարձր մահացությամբ ուղեկցվող բարդություններ են: Կովիդ-19 հաստատված պացիենտների մոտ ճառագայթաբանական հետազոտությունների ժամանակ ՍՊՍՊ հանդիպման հաճախականությունը մոտ 1% է, մահացությունը՝ մոտ 70%:

Եղանակներ. Վերլուծության են ենթարկվել 01.01.2021թ.-ից մինչև 19.10.2021թ. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոնում բուժվող Կովիդ-19-ով պացիենտների շարժական թվային ռենտգեն ապարատներով իրականացված թվային Ռ-նկարները: Ընդհանուր 10,830 պացիենտներից 4682-ին կատարվել է թվային Ռ-գրաֆիա՝ գերազանցապես ինտենսիվ խնամքի բաժանմունքում: Պացիենտների միջին տարիքը եղել է 66±12.8 տարեկան: Բոլորի մոտ նկարագրվել է երկկողմանի պոլիսեգմենտար Կովիդ-19-ասոցացված թոքաբորբ: ՍՊՍՊ համարվել են բոլոր այն դեպքերը, երբ պացիենտները միացված չեն եղել թոքերի օժանդակ օդափոխության սարքերին:

Արդյունքներ. ՍՊՍՊ ախտորոշվել է հիվանդների 0.3%-ի մոտ (n=15), որոնց 60%-ը (n=9) տղամարդիկ էին: Սպոնտան պնևմոմեդիաստինում ախտորոշվել է 73.3% (n=11), սպոնտան պնևմոթորաքս՝ 26.7% (n=4) դեպքերում: Մահացությունը կազմել է 80% (n=12):

Եզրակացություն. Վերլուծությունը վկայում է, որ Կովիդ-19 ասոցացված ծանր ընթացքով թոքերի ախտահարման ժամանակ ՍՊՍՊ-ն ոչ հաճախ հանդիպող, սակայն բարձր մահացությամբ ուղեկցվող բարդություն է:

0421 Ինտենսիվ խնամքի բաժանմունք ընդունված Կովիդ-19-ով պացիենտների բնութագրերը և ելքերը Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոնում

Characteristics and outcomes of patients with COVID-19 admitted to the intensive care unit at St. Grigor Lusavorich Medical Center

Սարգիս Ղազարյան, Արման Հովակիմյան, Գրիգոր Մանուչարյան, Հովհաննես Սարգսյան, Արշավիր Թորոսյան
Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ, Երևան, Հայաստան

Sargis Ghazaryan, Arman Hovakimyan, Grigor Manucharyan, Hovhannes Sargsyan, Arshavir Torosyan
Surb Grigor Lusavorich MC, Yerevan, Armenia

Ներածություն. Բազմաթիվ հետազոտություններ փաստում են ինտենսիվ խնամքի բաժանմունք (ԻԽԲ) ընդունված Կովիդ-19-ով պացիենտների բարձր մահացության մասին: Ներկայացնում ենք Հայաստանում Կովիդ-19 համավարակի դեմ ընդգրկված ամենախոշոր բազմապրոֆիլ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոնի ԻԽԲ (87 մահճակալ) ընդունված պացիենտների բնութագրերը և ելքերը:

Եղանակներ. Վերլուծության են ենթարկվել 01.04.2020թ.-ից մինչև 30.09.2021թ. ԻԽԲ ընդունված 3,135 պացիենտների բնութագրերը և ելքերը: Պացիենտների միջին տարիքը եղել է 66.4±13.9 տ., 48.4% (n=1518) կին, 51.6% (n=1617) տղամարդ: Ուղեկցող հիվանդություններ ունեցել են 92.3% (n=2893), որոնցից զարկերակային գերճնշում՝ 61% (n=1912), սրտի իշեմիկ հիվանդություն՝ 37.6% (n=1178), սրտի փականային հիվանդություններ՝ 21.3% (n=668), սրտի ռիթմի խանգարումներ՝ 20.6% (n=647), սրտային անբավարարություն՝ 20.1% (n=629), ցերեբրովասկուլյար հիվանդություններ՝ 5.3% (n=165), շնչառական համակարգի հիվանդություններ՝ 4.3% (n=136), շաքարային դիաբետ՝ 37.7% (n=1182), սուր և քրոնիկ երիկամային անբավարարություն՝ 8.6% (n=271), համակարգային հիվանդություններ՝ 3% (n=93), չարորակ նորագոյացություններ և արյան հիվանդություններ՝ 11.5% (n=361), հոգեբուժական պաթոլոգիա՝ 1.4% (n=43), այլ՝ 49.2% (n=1542):

Արդյունքներ. ԻԽԲ-ում բուժում ստացած 3,135 պացիենտներից 63.4% (n=1988) ընդունվել են անմիջապես այդ բաժանմունք, իսկ 36.6% (n=1147) տեղափոխվել են այլ բաժանմունքներից: Ներհիվանդանոցային բարդություններից արձանագրվել են՝ ուղեղի արյան շրջանառության սուր խանգարումներ՝ 4.2% (n=133), սրտամկանի սուր ինֆարկտ՝ 4.1% (n=129), արնահոսություն՝ 3.5% (n=109), թրոմբոէմբոլիկ բարդություններ՝ 9.3% (n=291), սուր երիկամային անբավարարություն՝ 5.8% (n=183), սուր պսիխոզ՝ 3.1% (n=96), պնևմոթորաքս և պնևմոմեդիաստինում՝ 3.6% (n=111), այլ՝ 15.1% (n=474): High Flow իրականացվել է 10.7% (n=337) պացիենտների մոտ 68.3 ժամ միջին տևողությամբ (0.3-864 ժամ), թոքերի ոչ ինվազիվ օդափոխություն՝ 27% (n=845) պացիենտների մոտ 112.6 ժամ միջին տևողությամբ (0.1-768 ժամ), ինվազիվ օդափոխություն՝ 21.2% (n=665) պացիենտների մոտ 112.6 ժամ միջին տևողությամբ (0.1-1740 ժամ): Վազոակտիվ դեղորայքի անհրաժեշտություն ունեցել է պացիենտների 28.4%-ը (n=891): Ներհիվանդանոցային մահացությունը կազմել է 55.9% (n=1753), մինչև 65 տարեկաններինը՝ 48.4% (n=619) իսկ ≥65 տարեկաններինը՝ 66.1% (n=1134): ԻԽԲ-ում գտնվելու միջին ժամանակը՝ 8.75 օր (0.1-125 օր), հիվանդանոցում գտնվելու միջին ժամանակը՝ 14.5 օր (0.1-126 օր):

Եզրակացություն. Մեր վերլուծությունը նույնպես վկայում է ԻԽԲ ընդունված Կովիդ-19-ով պացիենտների բարձր մահացության մասին: Հետազոտության ընթացքում հարաբերական բարձր մահացությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոնը համավարակի ողջ ընթացքում գործել է իբրև միակ բազմապրոֆիլ բժշկական հաստատություն և համավարակից դուրս շրջանում շարունակել է ընդունել Կովիդ-19-ով պացիենտներ ողջ հանրապետությունից, ինչպես նաև բոլոր ծանր, բարդացած ընթացքով պացիենտները հաճախ տեղափոխվել են մեր բժշկական կենտրոն:

0428 Սուրը քրոնիկի վրա լյարդային անբավարարության սահմանման բարելավումը
Toward a Better Definition of Acute-on-Chronic Liver Failure (ACLF)

Լուսինե Նավոյան, Նարինա Սարգսյանց
Առողջապահության ազգային ինստիտուտ, ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոն, Երևան, Հայաստան
Lusine Navoyan, Narina Sargsyants
National Institute of Health, Department of Infectious Diseases, Yerevan, Armenia

Ներածություն. Սուրը քրոնիկի վրա լյարդային անբավարարությունը (ՍՔԼԱ) ավելի լայն ճանաչում ստացող համախտանիշ է, որը ներառում է լյարդի ֆունկցիայի կտրուկ և կյանքին սպառնացող սուր վատթարացում, սովորաբար կապված հրահրող գործոնի հետ և հանգեցնում է մեկ կամ մի քանի օրգանների անբավարարության և կարճաժամկետ (28 օրվա ընթացքում) մահացության: ՍՔԼԱ-ն դիտվում է լյարդային սուր անբավարարությամբ հոսպիտալիզացվող հիվանդներիմոտ 30%-ի, իսկ ամբուլատոր հիվանդների25%-ի մոտ, և հանդիսանում է լյարդի ցիռոզի դեպքում մահացության հիմնական պատճառներից մեկը: Չնայած կատարվող շարունակական մեծածավալ աշխատանքների ՍՔԼԱ-ի սահմանման վերաբերյալ բանավեճերը շարունակվում են:

Նպատակ և եղանակներ. Մեր նպատակն է կրկին համեմատել վերջին տարիներին տարբեր սահմանումների և ախտորոշիչ չափանիշների առաջարկները միջազգային խոշոր գիտական ասոցիացիաներիկողմից ինչեցված, մասնավորապես Ասիական-Խաղաղօվկիանոսյան լյարդաբանական ասոցիացիայի (APASL) և Եվրոպական Լյարդաբանական ասոցիացիայի (EASL):

Արդյունքներ. Կովիդ-19-ասոցացված միջին և ծանր աստիճանի թոքաբորբով Աստղիկ ԲԿ ընդունված 567 պացիենտից 1.06%-ի մոտ (n = 6) առաջացել են թոքային խոռոչներ, ևս 17 պացիենտ դիմել է արդեն առկա խոռոչներով: Պացիենտներից 21-ն (91.3%) ունեցել են ուղեկցող հիվանդություն, բոլոր պացիենտների մոտ դիտվել է հիպօքսիա: Պացիենտներից 4-ի (17.4%) մոտ բարդություններ չեն դիտվել, 19 (82.6%) պացիենտների մոտ դիտվել են հետևյալ բարդությունները՝ պնևմոթորաքս (n=3՝ 13%), պիոպնևմոթորաքս (n=3՝ 13%), արյունահոսություն (n=2՝ 8.7%), աբսցեսավորում (n=11՝ 47.7%), ասպերգիլյոզ (n=4՝ 17.4%), էմպիեմա (n=2՝ 8.7%): 9 պացիենտի մոտ իրականացվել է կոնսերվատիվ բուժում (39.1%, այդ թվում 3 պացիենտի մոտ կատարվել է պլևրալ խոռոչի դրենավորում), 2-ը մահացել են (22.2%): Վիրահատվել են պացիենտներից 14-ը (60.9%): Վիրահատական բուժման ցուցումներն են եղել շարունակվող թոքային արյունահոսությունը, էմպիեմայի զարգացումը, կոնսերվատիվ բուժման ֆոնին պացիենտների հարաճուն ինտոքսիկացիան և խոռոչների չափսերի մեծացումը: 7 պացիենտի մոտ կատարվել է վիդեոթորակոսկոպիկ ատիպիկ ռեզեկցիա (միաժամանակ 4 պացիենտի մոտ կատարվել է թոքի դեկորտիկացիա)՝ լոբէկտոմիա՝ 5, իսկ սեգմենտէկտոմիա 2 պացիենտի մոտ: Վիրահատված պացիենտներից 3-ը (21.4%) մահացել են, մնացածի մոտ հետևակա բարդություններ չեն դիտվել: Հեռացված թոքային հյուսվածքի պաթոհյուսվածաբանական քննությամբ հայտնաբերվել է հյուսվածքների նեկրոզ, անոթների թրոմբոզ:

Եզրակացություն. Կովիդ-19-ասոցացված միջին և ծանր աստիճանի թոքաբորբով պացիենտների մոտ թոքերի խոռոչավորումը հազվադեպ չէ, այն շատ հաճախ ուղեկցվում է բարդություններով և բարձր մահացությամբ (21.7%): Թոքերում խոռոչների առաջացման հիմնական պատճառը թոքային անոթների թրոմբոզն է: Վիրահատական բուժումն ունի բարձր արդյունավետություն բարդությունների վերացման և կանխարգելման համար:

0132 Լյարդային վարկերակի ընտրողական թրոմբոլիզ կենդանի դոնորից լյարդի փոխպատվաստումից հետո. կլինիկական դեպք

Selective hepatic artery thrombolysis after living donor liver transplantation: a case report

Սերգեյ Ոսկանյան[1], Հայրապետ Բարսեղյան[2,3], Արայիկ Ոսկանյան[2], Հայկ Հարությունյան[2], Անահիտ Հախեյան[2], Էդուարդ Աղիյան[2], Արամայիս Գալումյան[2], Հայկ Անտոնյան[2], Նարինե Համբարձումյան[2], Վիոլետա Սարգսյան[2], Սոնա Սարգսյան[2]
[1]Բուռնազյանի անվան ՌԴ բժշկակենսաբանական կենտրոն, Մոսկվա, Ռուսաստան
[2]Աստղիկ ԲԿ, Երևան, Հայաստան
[3]Երևանի պետական բժշկական համալսարան, Ընդհանուր վիրաբուժության ամբիոն, Երևան, Հայաստան

Sergey Voskanyan[1], Hayrapet Barseghyan[2,3], Arayik Voskanyan[2], Hayk Harutyunyan[2], Anahit Hakheyan[2], Eduard Aghiyan[2], Aramayis Galumyan[2], Hayk Antonyan[2], Narine Hambardzumyan[2], Violeta Sargsyan2, Sona Sargsyan2
[1]Burnazyan Federal Medical Biophysical Center, Moscow, Russia
[2]Astghik MC, Yerevan, Armenia
[3]Yerevan State Medical University, Department of General Surgery, Yerevan, Armenia

Ներածություն. Լյարդային զարկերակի թրոմբոզը լյարդի փոխպատվաստումից հետո վաղ շրջանի տրանսպլանտի ձախողման և մահացության հիմնական պատճառներից մեկն է: Շտապ ռետրանսպլանտացիան համարվում է վերջնական բուժման ընտրության եղանակ, սակայն նույնիսկ ռետրանսպլանտացիայից հետո մահացությունը 50%-ից ավելի է:

Եղանակներ. Եզակի կլինիկաներում էնդովասկուլյար թերապիան, ներառյալ ներզարկերակային թրոմբոլիզը վերջին տարիներին հուսադրող արդյունքներ են գրանցել: Այնուամենայնիվ, դրանց օգտագործումը մնում է հակասական՝ արյունահոսության հնարավոր ռիսկի պատճառով: Ներկայացնում ենք կենդանի դոնորից լյարդի փոխպատվաստումից հետո լյարդային զարկերակի վաղ թրոմբոզի բուժման մեր հաջող փորձը կլինիկական դեպքի տեսքով, որն իրականացվել է ներվիրահատական, այնուհետև շարունակական ընտրողական կաթետրացումով և կաթետրային թրոմբոլիզով՝ օգտագործելով Ալտեպլազա դեղամիջոցը:

Արդյունքներ. Լյարդային զարկերակի բերանակցման ներվիրահատական ձևավորումից անմիջապես հետո դոպլեր սարքով զարկերակային հուն չի գրանցվել, զարկերակի թրոմբոզի պատճառով 4 անգամ կատարվել է վերաբերանակցում: Վերջին բերանակցման ձևավորումից առաջ զարկերակի լուսանցք է ներարկվել Ալտեպլազա դեղամիջոցը՝ անտեսելով արյունահոսության բարձր ռիսկը, որից հետո դոպլեր հետազոտությամբ հայտնաբերվել է լյարդային զարկերակում արյան հոսք: Սակայն փոխպատվաստումից 8 ժամ անց, դինամիկ հերթական ուլտրաձայնային հետազոտությամբ (ՈւՁՀ) կրկին ախտորոշվել է լյարդային զարկերակի թրոմբոզ: Անմիջապես քայլեր են ձեռնարկվել ռետրանսպլանտացիա իրականացնելու նպատակով, սակայն ազգականների մեջ համապատասխան դոնոր չի հայտնաբերվել, որոշվել է կատարել էնդովասկուլյար միջամտություն՝ հույս ունենալով իրականացնել թրոմբոլիզ՝ դրանով իսկ փրկելով հիվանդի փոխպատվաստված օրգանն ու կյանքը: Հետփոխպատվաստումային 1-ին օրը կատարվել է անգիոգրաֆիա, որը փոխպատվաստված լյարդում հայտնաբերել է թեթևակի կոնտրաստավորում: Միկրոկաթետրը տեղադրվել է լյարդային զարկերակի մերձադիր հատվածում, կատարվել է անոթալայնիչ դեղորայքի և 5մգ Ալտեպլազայի ներարկում, անգիոգրաֆիա, որից հետո դիտվել է լյարդի կոնտրաստավորման բարելավում: Սկսվել է Ալտեպլազայի ինֆուզիա 1մգ/ժ: Հետփոխպատվաստումային 2-րդ օրը կրկին կատարվել է անգիոգրաֆիա. փոխպատվաստված լյարդում դիտվել է թեթևակի կոնտրաստավորում, միկրոկաթետրը տեղադրվել է լյարդային զարկերակի մերձադիր հատվածում, կատարվել է անոթալայնիչ (նիտրոգլիցերին, պապավերին) դեղորայքի և 5մգ Ալտեպլազայի ներարկում, որից հետո դիտվել է լյարդի կոնտրաստավորման բարելավում: Շարունակվել է Ալտեպլազայի ինֆուզիան 1մգ/ժ: Հետփոխպատվաստումային 3-րդ օրը դարձյալ կատարվել է անգիոգրաֆիա, գնահատվել է բավարար արդյունք և ինտրոդյուսերը հեռացվել է:

Եզրակացություն. Կենդանի դոնորից լյարդի փոխպատվաստումից հետո լյարդային զարկերակի վաղ թրոմբոզի բուժման և կանխարգելման հարցում էնդովասկուլյար ընտրողական թրոմբոլիզը կարող է լինել ընտրության եղանակ, հատկապես այն դեպքերում, երբ ռետրանսպլանտացիան անհնար է: Պատվաստի ֆունկցիոնալ վիճակի գնահատման հարցում կարևոր ցուցանիշներ են հանդիսացել ոչ թե ՈՒՁՀ-ն և համակարգչային շերտագրությունը (որոնցով հնարավոր չի եղել հայտնաբերել լյարդային զարկերակային հոսք), այլ կենսաքիմիական ցուցանիշների (կաթնաթթու, Ց-ռեակտիվ սպիտակուց, ամոնիակ, լյարդային ֆերմենտներ) բարելավումը՝ ընտրողական թրոմբոլիզից հետո:

0219 Հակակպումային միջոցների կիրառումը աղիքային բերանակցումների դեպքում

Use of antiadhesive barriers in case of intestinal anastomosis

Սուրեն Ստեփանյան, Հայկ Սաֆարյան, Հայկ Եղիազարյան, Կարեն Փափազյան, Ռուդոլֆ Մուրադյան, Հարություն Վարդանյան, Ֆելիքս Մելքոնյան, Հակոբ Շմավոնյան, Աղասի Բաղդասարյան, Արամ Խաչատրյան
Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ, Երևան, Հայաստան
Suren Stepanyan, Hayk Safaryan, Hayk Yeghiazaryan,

Karen Papazyan, Rudolf Muradyan, Harutyun Vardanyan, Felix Melqonyan, Hakob Shmavonyan, Aghasi Baghdasaryan, Aram Khachatryan
Mikaelyan Institute of Surgery, Yerevan, Armenia

Ներածություն. Որովայնի կպումային հիվանդությունը (ԿՀ) բժշկագիտության արդիական խնդիրներից մեկն է, որի կլինիկական արտահայտություններն են կպումային աղիքային անանցանելիությունը, որովայնի քրոնիկ ցավը, անպտղությունը: ԿՀ բուժման համար առաջարկված մեթոդներից առավել արդյունավետը և նորարարականը բաց կամ լապարասկոպիկ ադհեզիոլիզի և հակակպումային միջոցի զուգակցումն է: Հակակպումային միջոցների մեծ մասի կիրառման սահմանափակումներից է աղիքային բերանակցումների առկայությունը:

Եղանակներ. Հետազոտման խմբում ընդգրկվել է 25 հիվանդ, որոնց բուժման ընթացքում կատարվել է Հարթմանի վիրահատություն: Կոլոստոմայի լիկվիդացիայի ժամանակ կատարվել է ներորովայնային տարբեր արտահայտվածության կպումների անջատում, կոլոկոլոանաստամոզի ձևավորում և կանթային իլեոստոմայի ձևավորում: Կոլոստոմայի լիկվիդացիայի վիրահատության ժամանակ որովայնի խոռոչը մշակվել է Պրոտեսկալ և Մեզոգել հակակպումային միջոցներով: Հետվիրահատական շրջանում գնահատվել է բերանակցման վիճակը: Կանթային իլեոստոմայի լիկվիդացիայի ժամանակ կատարվել է որովայնի կպումների գնահատում: Նույն հետազոտությունն իրականացվել է հսկիչ խմբում, որտեղ չեն կիրառվել հակակպումային միջոցներ:

Արդյունքներ. Վիրահատությունների ժամանակ արձանագրվել է կպումների նվազ արտահայտվածություն հակակպումային միջոցների կիրառումից հետո: Կոլոստոմայի լիկվիդացիայի և հակակպումային միջոցի վիրահատությունից հետո չեն դիտվել բերանակցման անբավարարության դեպքեր:

Եզրակացություն. Այս հարցում վերջնական եզրակացության գալու համար կարիք կա մեծաքանակ ռանդոմացված հետազոտության՝ տարբեր հակակպումային միջոցներով: Մեր հետազոտության արդյունքների հիման վրա կարող ենք արձանագրել, որ հակակպումային միջոցները կարող են կիրառվել աղիքային բերանակցումների դեպքում:

0222 Բարդացած վերքերի բուժումը բացասական ճնշման (VAC) թերապիայի միջոցով. մեր փորձը
Negative pressure wound (VAC) therapy in patients with complicated wounds: our experience

Հոլգեր Լիստլե[1], Անդրանիկ Ալեքսանյան[2], Անի Բաբայան[2], Արեգ Պետրոսյան[2], Վահե Հակոբյան[2], Ֆելիքս Մելքոնյան[2], Սիմոն Սարգսյան[2], Գևորգ Խաչատրյան[2], Տավրոս Տեփանյան[2], Գրիգոր Ավագյան[2]
[1]Մեմմինգեն կլինիկա, Մեմմինգեն , Գերմանիա
[2]Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ, Երևան, Հայաստան

Holger Listle[1], Andranik Alexanyan[2], Ani Babayan[2], Areg Petrosyan[2], Vahe Hakobyan[2], Felix Melkonyan[2], Simon Sargsyan[2], Gevorg Khachatryan[2], Tavros Tepanyan[2], Grigor Avagyan[2]
[1]Klinikum Memmingen, Memmingen, Germany
[2]Mikaelyan Institute of Surgery, Yerevan, Armenia

Ներածություն. Վակուումի օժանդակությամբ (VAC) թերապիան վերքերի բուժման մեթոդ է, որի ժամանակ օգտագործվում է բացասական ճնշում, որը թույլ է տալիս արագացնել վերքերի բուժման ընթացքը: Այն իրականացվում է հատուկ սարքավորումների օգնությամբ, որոնք ստեղծում են օպտիմալ բացասական ճնշում վերքային մակերեսի վրա: Վակուում ասպիրացիան թույլ է տալիս հեռացնել վերքային հեղուկը, իջեցնել վերքի այտուցը, բարելավել արյումատակարարումը:

Եղանակներ. Միքայելյան վիրաբուժության ինստիտուտում 2018թ.-ից իրականացվում է բարդացած վերքերի բուժում VAC-թերապիայի միջոցով: Օգտագործվում են Smith and Nephew ֆիրմայի ակտիվ ասպիրացիայի ապարատները և համապատասխան սպունգները:

Արդյունքներ. Մեր կլինիկայում նշված մեթոդով բուժվել է 45 հիվանդ: Այս մեթոդը կիրառվել է դիաբետիկ ոտնաթաթերի, երկրորդային ձգումով լավացող հետվիրահատական վերքերի, հրազենային վերքերի, մարմնի տարբեր հատվածներում տեղակայված թարախային վերքերի, բարդացած պառկելախոցերի, այրվածքային վերքերի բուժման ժամանակ: Ընդ որում, բուժումը հատկապես արդյունավետ է եղել մեծ վերքային մակերեսների և հրազենային վերքերի ժամանակ:

Եզրակացություն. Այսպիսով վերքերի բուժումը VAC-թերապիայի միջոցով հնարավորություն է տալիս մեխանիկորեն ակտիվացնել անգիոգենեզը արագացնելով գրանուլացիոն հյուսվածքի առաջացումը, իջեցնում է հյուսվածքների այտուցը, ադեկվատ հեռացնում է վերքային էքսուդատը և հնարավորություն է ստեղծում վերքերի ավելի արագ ապաքինման համար:

0232 Առաջնային հիպերպարաթիրեոզի բուժման բարձր տեխնոլոգիական մեթոդները
High-technology methods for the treatment of primary hyperparathyroidism

Մուշեղ Միրիջանյան[1], Արմեն Մելոյան[2], Գայանե Երիմյան[1], Լուսինե Մանուկյան[1], Ռոմիկ Նազարեթյան[2], Արման Գրիգորյան[2]
[1]Երևանի պետական բժշկական համալսարան, Վիրաբուժության թիվ 4 ամբիոն, Երևան, Հայաստան
[2]Իզմիրլյան ԲԿ, Երևան, Հայաստան

Mushegh Mirijanyan[1], Armen Meloyan[2], Gayane Erimyan[1], Lusine Manukyan[1], Romik Nazaretyan[2], Arman Grigoryan[2]
[1]Yerevan State Medical University, Department of Surgery N4, Yerevan, Armenia
[2]Izmirlyan MC, Yerevan, Armenia

Առաջնային հիպերպարաթիրեոզը (ԱՀՊԹ) ներզատական համակարգի առավել հաճախ հանդիպող ախտաբանություն է և ներզատական ախտաբանությունների շարքում գրավում է երրորդ տեղը: ԱՀՊԹ-ի տարածվածությունը ըստ տարբեր տվյալների 1,000 բնակչի հաշվով 34 դեպք է, իսկ տարեկան հիվանդացությունը՝ 10,000 բնակչի հաշվով 0.4-1.8 դեպք: Տվյալների այս տատանումը պայմանավորված է տարբեր երկրներում առողջապահության զարգացվածության տարբեր մակարդակով: Հայտնաբերման ցածր մակարդակը մեծ մասամբ կախված է ախտորոշման դժվարությունից՝ պայմանավորված այդ պաթոլոգիայի սիմպտոմատիկայի բազմազանության և պրակտիկ բժիշկների ոչ բավարար իմացության հետ: Հաշվի առնելով, որ ԱՀՊԹ-ն հիպերկալցեմիայի առավել հաճախ պատճառն է, կարելի է ենթադրել այս հիվանդության բարձր տարածվածությունը մեր երկրում: Ոչ բարենպաստ իրավիճակը պահանջում է համալիր միջոցառումների կիրառում հիվանդության վաղ փուլում ախտորոշման և ժամանակակից բժշկական օգնության համար: 2013 թվականից Երևանի պետական բժշկական համալսարանի թիվ 4 վիրաբուժության ամբիոնի հետ համատեղ հաստատվել է նոր գիտական ծրագիր, որի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) ԱՀՊԹ-ի տարածվածության ուսումնասիրությունը և այս ախտաբանության բուժման վիրահատական մեթոդների ներդրումը վիրաբուժական պրակտիկայում: ՀՀ-ում ԱՀՊԹ-ի համաճարակաբանական իրավիճակի ուսումնասիրության համար կիրառվել է իոնացված կալցիումի քանակի սքրինինգային հետազոտում. կլինիկայի բոլոր բաժանմունքներ ընդունված հիվանդների մոտ ստուգվել է իոնացված կալցիումի քանակը: Մեր հետազոտման արդյունքներով միայն վերջին տարում հայտնաբերվել է ԱՀՊԹ-ով 67 հիվանդ: Մեծ մասամբ ԱՀՊԹ-ն պայմանավորված է եղել սոլիտար ադենոմայով (90%), հազվադեպ՝ բազմակի ադենոմաներով (4%) և հիպերպլազիայով (6%): Հարվահանաձև գեղձի քաղցկեղ չի հանդիպել: 67 հիվանդներից 9-ը տարբեր պատճառներով հրաժարվել են վիրահատական բուժումից: 49 հիվանդի կատարվել է պարաթիրեոիդէկտոմիա ինչպես դասական, այնպես էլ փոքր կտրվածքներով: Մենք առաջարկում ենք հիպերպարաթիրեոզի բուժման՝ հարվահանաձև զարկերակի ռենտգենէնդովասկուլյար էմբոլիզացիայի մեթոդը: Այս մեթոդի ներդրման համար մեր կողմից կատարվել են անգիոգրաֆիկ հետազոտություններ, որոնց նպատակն է որոշել հիմնական սնուցող զարկերակից հեռացող զարկերակների քանակը, դրանց երկարությունը բաժանման տեղից մինչ հարվահանաձև գեղձը, տրամագիծը և դասավորությունը միմյանց նկատմամբ: 7 հիվանդ վիրահատվել է ռենտգենէնդովասկուլյար մեթոդով, որոնցից 2-ի մոտ ադենոման տեղակայված է եղել առաջային միջնորմում: Հաշվի առնելով, որ վահանաձև և հարվահանաձև գեղձերի ստորին զարկերակների տրամագիծը մեծ է, ռենտգենէնդովասկուլյար էմբոլիզացիայի համար ընտրվել են այնպիսի հիվանդներ, որոնց մոտ ադենոման տեղակայված է եղել ստորին հարվահանաձև գեղձերում: Վիրահատական միջամտության արմատականությունը որոշվում է ինտակտ պարաթիրինի քանակի իջեցման և գեղձում արյան հոսքի բացակայության ներվիրահատական որոշմամբ: Վիրահատական և հետվիրահատական բարդություններ չեն դիտվել: Բոլոր հիվանդները 2-րդ օրը դուրս են գրվել ամբուլատոր բուժման՝ նախապես որոշելով կալցիումի և վիտամին D-ի մակարդակները:

0236 Լապարոսկոպիայի հնարավորությունները օղակված աճուկային և վենտրալ ճողվածքների ախտորոշման և բուժման գործում

Laparoscopy in emergency groin and ventral hernia diagnostics and repair

Հակոբ Շմավոնյան, Սուրեն Ստեփանյան, Անի Բաբայան, Հայկ Եղիազարյան, Հայկ Սաֆարյան, Անդրանիկ Ալեքսանյան, Ֆելիքս Մելքոնյան, Հարություն Վարդանյան, Խաչիկ Այվազյան, Տավրոս Տեփանյան, Ռաֆայել Մեսրոպյան
Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ, Երևան, Հայաստան

Hakob Shmavonyan, Suren Stepanyan, Ani Babayan, Hayk Yeghiazaryan, Hayk Safaryan, Andranik Alexanyan, Felix Melkonyan, Harutyun Vardanyan, Xachik Ayvazyan, Tavros Tepanyan, Rafael Mesropyan
Mikaelyan Institute of Surgery, Yerevan, Armenia

Ներածություն. Աճուկային և վենտրալ ճողվածքների բուժման գործում լապարասկոպիկ վիրահատությունների առավելությունները պլանային վիրահատությունների դեպքում, ավանդական վիրահատությունների համեմատ, ապացուցված են բազմաթիվ հետազոտությունների արդյունքներով: Ճողվածքների լապարասկոպիկ վիրահատությունների առավելություններից է ցանցի տեղադրումը՝ բացառապես sublay եղանակով: Աճուկային ճողվածքների դեպքում հաճախ կիրառվող 15x10սմ չափով ցանցը հնարավորություն է տալիս փակել նաև ազդրային ճողվածքի մուտքը: Transabdominal PrePeritoneal (TAPP) պլաստիկայի դեպքում լապարասկոպիան հնարավորություն է տալիս կատարել որովայնի խոռոչի առավել մանրակրկիտ դիտարկում, հյուսվածքների նվազագույն տրավմատիզացիա և հետվիրահատական անհամեմատ ավելի քիչ ցավային համախտանիշով պայմանավորված մահճակալային օրերի կրճատում: Լապարասկոպիկ պլաստիկան ունի նաև արտահայտված կոսմետիկ առավելություն: Լապարասկոպիան հանդիսանում է կարևոր ախտորոշիչ և բուժական մեթոդ սուր վիրաբուժական պաթոլոգիաների՝ ինչպես, օրինակ՝ սուր ապենդիցիտի, սուր խոլեցիստիտի, ստամոքսի և տասներկումատնյա աղու թափածակված խոցի, սուր կպումային բարակ աղիքային անանցանելիությունների և այլ դեպքերում: Չնայած վերը նշված դիտարկումների՝ օղակված ճողվածքների ախտորոշման և բուժման գործում լապարասկոպիայի դերը և նշանակությունը դեռևս քննարկման առարկա է հանդիսանում:

Եղանակներ. 2019-2023թթ. Միքայելյան վիրաբուժության ինստիտուտում վիրահատվել է օղակված աճուկային և վենտրալ ճողվածքներով 12 հոգի, միջին տարիքը 60.5 տարեկան, 5 կին և 7 տղամարդ, այդ թվում՝ օղակված աճուկային ճողվածքի 7 դեպք, օղակված ռե-

ցիդիվային աճուկային ճողվածքի 1 դեպք, օղակված պորտային ճողվածքի 2 դեպք, օղակված շպիգելյան գծի ճողվածքի 1 դեպք, օղակված ազդրային ճողվածքի 1 դեպք:

Արդյունքներ. Բոլոր 12 հիվանդները վիրահատվել են լապարասկոպիկ TAPP մեթոդով, միջին մահճակալային օրերի թիվը՝ 3.8 օր: Օղակված ճողվածքների լապարասկոպիկ վիրահատության փուլերն էապես տարբերվում են ավանդական վիրահատությունների փուլերից, որոնք կարող են դեր ունենալ օղակված օրգանների ոչ հիմնավորված և անցանկալի մասնահատումներից խուսափելու գործում: Հարկ է նշել, որ լապարասկոպիկ վիրահատությունների խմբում բարակ և հաստ աղու, ինչպես նաև մեծ ճարպոնի մասնահատումների թիվը անհամեմատ քիչ է՝ համեմատած ավանդական վիրահատությունների հետ:

Եզրակացություն. Այսպիսով, լապարասկոպիկ TAPP պլաստիկան կարող է իր կիրառությունը գտնել որպես օղակված ճողվածքների բուժման և ախտորոշման կարևոր մեթոդ: Անհրաժեշտ է հետագա հետազոտություններով ստանդարտացնել լապարասկոպիկ TAPP պլաստիկայի փուլերը, լապարասկոպիայի կիրառման ցուցումները և հակացուցումները՝ օղակված աճուկային և վենտրալ ճողվածքների դեպքում, գտնել կապ լապարասկոպիայի կիրառման և օղակված օրգանների մասնահատումների թվաքանակի քչացման միջև՝ համեմատած ավանդական վիրահատությունների:

0415 Ենթաստամոքսային գեղձի մինիմալ ինվազիվ վիրաբուժություն
Minimally invasive surgery of the pancreas

Գրիգոր Պապոյան[1], Իգոր Անդրեյցև[2], Գառնիկ Սանասարյան[1], Դավիթ Մարգարյան[1]
[1]Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ, Երևան, Հայաստան
[2]Բոտկինի անվան քաղաքային կլինիկական հիվանդանոց, Մոսկվա, Ռուսաստան

Grigor Papoyan[1], Igor Andreicev[2], Garnik Sanasaryan[1], Davit Margaryan[1]
[1]Surb Grigor Lusavorich Medical Center, Yerevan, Armenia
[2]Botkin Hospital, Moscow, Russia

Ներածություն. Ենթաստամոքսային գեղձի (ԵՍԳ) վիրաբուժությունը որովայնային վիրաբուժության խիստ յուրահատուկ ճյուղ է: ԵՍԳ-ի վրա կատարվող վիրաբուժական միջամտությունների զգալի մասը պահանջում է օրգանի անատոմիական առանձնահատկությունների (առավելապես անոթային կառուցվածքի), վիրաբուժական հատուկ ունակությունների, վիրաբուժական թիմի պատրաստվածության, ինչպես նաև ԵՍԳ-ի ֆիզիոլոգիական և ախտաֆիզիոլոգիական ռեակցիաների իմացություն թե՛ վիրահատական միջամտության, թե՛ բուն ախտաբանության ժամանակ: Քիչ են այն բուժհաստատությունները, որտեղ կատարվում են ԵՍԳ-ի վիրահատական միջամտություններ, այդ թվում՝ արմատական՝ կապված սուր և քրոնիկական պանկրեատիտների, ինչպես նաև նորագոյացությունների հետ:

Եղանակներ. ԵՍԳ-ի վիրահատական միջամտությունները կատարվում են ինչպես ավանդական (լապարատոմիկ), այնպես էլ լապարասկոպիկ եղանակներով և ռոբոտ-ասիստենտի օգնությամբ: Կատարվում են ԵՍԳ-ի ռեզեկցիաներ, պանկրեատոդուոդենալ մասնահատումներ, ինչպես նաև պանկրեատէկտոմիաներ՝ կախված պաթոլոգիայից և դրա ծանրության աստիճանից:

Արդյունքներ. Վիրաբուժական թիմի կողմից մասնագիտական գործունեության ընթացքում արտերկրում ձեռք բերված հարուստ փորձը (կատարված 120-ից ավել մինիմալ ինվազիվ պանկրեատոդուոդենալ մասնահատումները, այդ թվում ռոբոտ-ասիստենտի օգնությամբ) ապահովում է միջազգային չափանիշներին համապատասխան վիրահատական ծավալը և հետվիրահատական բարդությունների նվազ քանակը (10 տեղում վերջին 6 ամիսներին կատարված նմանատիպ ոչ մեծ քանակով վիրահատություններից ստացված վաղ հետվիրահատական արդյունքները նույնպես դրական են և դրանք դինամիկայում վերագնահատվում են):

Եզրակացություն. Անհրաժեշտ ենք համարում Հայաստանում մեր կողմից ներդրված ԵՍԳ-ի ծավալային մինիմալ ինվազիվ վիրաբուժության շարունակական զարգացումը՝ այդ թվում ռոբոտ-ասիստենտի օգնությամբ միջամտությունների ներդրումը, միջազգային հավաստագրմամբ մասնագիտացված բաժանմունքների ստեղծումը, որտեղ կապահովվի հիշյալ պացիենտների բազմակենտրոն ախտորոշումը և վիրահատական բուժման մոդեռնիզացիան, ծավալային վիրաբուժության ենթակա հիվանդների ռեգիստրերի վարումը, որն էլ կհանգեցնի պաթոլոգիաների բուժման ստանդարտացման տարածմանը:

A015 Երրորդային պերիտոնիտներով հիվանդների վիրահատական բուժման որոշ արդյունքներ
Some results of surgical treatment of patients with tertiary peritonitis

Ասատրյան Ա.Ռ.[1], Գրիգորյան Ա.Կ.[2], Նազարեթյան Ռ.Ռ.[2]
[1]Երևանի պետական բժշկական համալսարան, Վիրաբուժության թիվ 3 ամբիոն, Երևան, Հայաստան
[2]Իզմիրլյան ԲԿ, Երևան, Հայաստան

Asatryan A.R.[1], Grigoryan A.K.[2], Nazaretyan R.R.[2]
[1]Yerevan State Medical University, Department of Surgery N 3, Yerevan, Armenia
[2]Izmirlian MC, Yerevan, Armenia

Ներածություն. Երրորդային պերիտոնիտները (ԵՊ) ներկայումս դիտվում են որպես աբդոմինալ սեպսիս և արագ կողմնորոշված նախնական ախտորոշման վիրաբուժական ճիշտ ընտրված տակտիկայի պայմաններում կարելի է հասնել բուժական նախընտրելի ու բավարար արդյունքների: Աշխատանքի նպատակն է, քննարկել այն գործոնները, որոնք հնարավորություն կտան մշակելու հետվիրահատական շրջանի ընթացքը կանխատեսող նախավիրահատական չափորոշիչներ:

Եղանակներ. Քննարկվել են Իզմիրլյան ԲԿ 2018-22թթ ընդունված ԵՊ-ով 35 հիվանդներ կապված պերիտոնիտների զարգացման ժամկետներից, հիվանդների տարիքից,ախտաբանության բնույթից: Հիվանդները

բաժանվել են երեք խմբերի: Առաջին խմբում ներառվել այն հիվանդները, որոնց մոտ ԵՊ զարգացել է ականապայթյունային պոլիտրավմաներից հետո որովայնային ախտաբանության զարգացման հետևանքով: Երկրորդ խմբի մեջ են ներառվել ծանր ընդհանուր վիճակում գտնվող հիվանդներ, որոնց մոտ ԵՊ հնարավոր զարգացումը կանխատեսնվել է և պահանջվել են բուժման առավել մեծ ջանքեր (կրկնակի որովայնահատում՝ ծրագրավորված և ըստ ցուցումի, լապարոստոմիա և այլն): Երրորդ խմբում ներառվել են պլանային կամ անհետաձգելի, բայց սահմանափակ պրոցեսները, հետվիրահատական բարդությունները (կարերի անբավարարություն, ձևավորվող աղիքային խուղակներ և այլն):

Արդյունքներ. Առաջին խմբի հիվանդները եղել են 4-ը, որոնց ընդհանուր առմամբ իրականացվել է 13 ռեսանացիոն որովայնահատումներ՝ էնտերոստոմիաներով (որոնք հետագայում վերականգնվել են)՝ բավարար արդյունքներով: Երկրորդ խմբի մեջ ներառվել են 14 հիվանդներ. 3-ը՝ սուր նեկրոտիկ պանկրեատիտով, 6-ը՝ օղակված ճողվածքներով՝ բարդացած աղիքի նեկրոզով , ճողվածքապարկի ու որովայնի պատի ֆլեգմոնայով, պերիտոնիտով, 2-ը՝ կպումային անանցանելիությամբ 1-ական դեպք դեստրուկտիվ ապենդիցիտով, բարակ աղու սեգմենտար թրոմբոզով, լեղային պերիտոնիտով : Այս խմբում մահացու ելքերը 2-ն են եղել: Երրորդ խմբում ներառված 17 հիվանդները հիմնականում ուռուցքաբանական էին՝ հետվիրահատական բարդություններով՝ բերանակցումների անբավարարությամբ. հեպատիկո-էնտերո՝ 4, 12մ աղու ճայրատ՝ 1, միջբարակաղիքային՝ 1, հաստ աղիքային՝ 6, բերանակցման հետ չկապված թափածակում՝ 4, թրոմբոզ՝ 1: Այս խմբում իրականացվել են 42 կրկնակի վիրահատությունները (1-ից 7); արձանագրվել է 6 մահ: Բարդությունների վերլուծություններում առաջին պլան են մղվում կրկնակի վիրահատության որոշման արագությունը, ուռուցքի փուլը:

Քննարկում. Ստացված տվյալները հաստատում են անամնեզի երկարատևության ենթադրական կապը բարդությունների հետ: Բուժման արդյունավետության կապը տարիքային տարբերությունների հետ չի հաստատվում: Երրորդ խմբի համար անհրաժեշտ է նշել, որ հետվիրահատական բարդությունների՝ շտկման որոշման կայացման ժամկետներն ու ծավալները խիստ որոշիչ են, սակայն մեր դեպքերի սակավաթվությունը հավաստի ամփոփումների հնարավորություն չի տալիս:

Եզրակացություն. ԵՊ բուժման արդյունավետություն որոշող կարևոր նախավիրահատական գործոններից են պերիտոնիտի զարգացման ժամկետները և հիվանդի ընդհանուր վիճակի ծանրությունը: Այսինքն, եթե ունենք պերիտոնիտի երկարատև անամնեզ, հետվիրահատական ներորովայնամզային հնարավոր շարունակական ախտոտման օջախ, հաստ աղու ծավալուն վնասումների փաստ, օրգանային ծանր անբավարարությամբ հիվանդ, առաջարկվում է հրաժարվել ավանդական վիրաբուժական տակտիկայից փակ մեթոդից, այլ պետք է առավելություն տալ կիսաբաց և բաց մեթոդներին (աղիքային խուղակադրումներ, լապարոստոմիաներ[a] հաճախակի ռելապարոսանացիաներով): Նույն մոտեցումն է պահանջվում նաև առաջին խմբի պացիենտների համար, որտեղ վիրաբույժը պարտավոր է գնահատել վնասվածքի ծանրությունը, ժամկետները, հիվանդանոցի տեղակայումը, կարգավիճակն ու հնարավորությունները:

A066 Խթաղիքի տեղային խորացած քաղցկեղի վիրահատական բուժման մեր փորձը

Surgical treatment of locally advanced colon cancer. Our experience

Արթուր Սահակյան, Անդրանիկ Ալեքսանյան, Հովհաննես Բատիկյան, Հմայակ Պետրոսյան, Արամ Մարտիրոսյան, Մուշեղ Սահակյան
Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ, Երևան, Հայաստան

Artur Sahakyan, Andranik Aleksanyan, Hovhannes Batikyan, Hmayak Petrosyan, Aram Martirosyan, Mushegh Sahakyan
Mikaelyan Institute of Surgery, Yerevan, Armenia

Ներածություն. Կոլոռեկտալ նորագոյացությունները, որոնց մեծ մասը կազմում է խթաղիքի քաղցկեղը, ըստ հաճախականության զբաղեցնում են 2-րդ տեղը՝ տղամարդկանց մոտ թոքի, իսկ կանանց մոտ կրծքագեղձի քաղցկեղներից հետո: Մոտ 15% դեպքերում այն հայտնաբերվում է հիվանդության զգալի տեղային տարածմամբ, ինչը բացասաբար է անդրադառնում բուժման արդյունավետության վրա: Նման հիվանդների ստանդարտ բուժումը մուլտիմոդալ է, որի կարևորագույն մասն է վիրաբուժությունը: Հաճախ նման միջամտությունները կրում են լայնածավալ ու տրավմատիկ բնույթ, բազմաօրգան մասնահատումներով:

Եղանակներ. Աշխատանքում վերլուծված են 2004-2018թթ. խթաղիքի տեղային խորացմամբ, մեկ բաժանմունքում վիրահատված 203 հիվանդների բուժման արդյունքները: Հիվանդները նեոադյուվանտ քիմիոթերապիա չեն ստացել, բոլորին կատարվել է D2 և ավելի ավշահատում, ադյուվանտ քիմիոթերապիա ստացել են 34.7%-ը: Կախված բազայում հիվանդների տվյալների լիարժեքությունից՝ բուժման անմիջական արդյունքները վերլուծվել են 195 հիվանդների մոտ, ռեցիդիվների վրա ազդող գործոնները՝ 118-ի, իսկ հիվանդության կանխատեսման գործոններն առանց մետաստազների՝ 133 հիվանդի մոտ:

Արդյունքներ. Խթաղու տեղային խորացած քաղցկեղը հանդիպում է 42.2% դեպքերում: Հետվիրահատական բարդությունները և մահացությունը հանդիպում են համապատասխանաբար 12.8% և 2.5% դեպքերում, առանց վիճակագրական հավաստի տարբերության, ստանդարտ և բազմաօրգան կոլէկտոմիաներից հետո: Հիվանդության կրկնություն՝ 52.5%-ի մոտ, որոնց նպաստող գործոն են հիվանդության T4b և N+ փուլերն ու ախտահարված ավշահանգույցների քանակը: T4 փուլի հիվանդների մոտ միագործոն վիճակագրական վերլուծությունով CA 19-9 ուռուցքային մարկերի նախավիրահատական մակարդակը, հիվանդության T4b և N+ փուլերը, ինչպես նաև ադյուվանտ քիմիաթերապիան հանդիսանում են կանխատեսման գործոններ: Եթե T4a ենթափուլի դեպքում անկախ կանխատեսման գործոն է CA 19-9 ուռուցքային մարկերի նախավիրահատական մակարդակը, ապա T4b-ի դեպքում այդպիսին է միայն ադյուվանտ քիմիաթերապիան:

Եզրակացություն. Խթաղու տեղային խորացած քաղցկեղով հիվանդների մոտ արմատական մասնահատումները (ստանդարտ և բազմաօրգան) ապահովում են բավարար անմիջական և հեռակա ապրելիության արդյունքներ: Որոշակի փորձի պայմաններում արդյունքների տարբերություն ստանդարտ և բազմաօրգանային մասնահատումներից հետո չի գրանցվում: Նման հիվանդների վիրահատական բուժումը արդյունավետ է իրականացնել մասնագիտացված բաժանմունքներում:

0129 Մենինգոէնցեֆալոցելեով ուղեկցվող յատրոգեն քթային լիքվոռեա
Iatrogenic nasal liquorrhea accompanied with meningoencephalocele

Արսեն Կոշտոյան, Լյուսի Պետրոսյան, Լեոնիդ Մովսիսյան, Յուրի Ղուկասյան, Անի Մկրտչյան
Աստղիկ ԲԿ, Երևան, Հայաստան

Arsen Koshtoyan, Lyusi Petrosyan, Leonid Movsisyan, Yuri Ghukasyan, Ani Mkrtchyan
Astghik Medical Center, Yerevan, Armenia

Ներածություն. Մենինգոէնցեֆալոցելեն (ՄԷՑ) հազվադեպ հանդիպող ախտաբանություն է, որն առաջանում է գանգափոսի դեֆեկտներից առաջացած՝ ուղեղի պարենքիմի ճողվածքի հետևանքով: Քթի խոռոչի, հարքթային ծոցերի և ենթաոստայնային տարածության միջև հարաբերակցության խախտման արդյունքում դիտվում է քթային լիքվոռեա՝ ուղեղ-ողնուղեղային հեղուկի արտահոսք: Այն կարող է առաջանալ ինքնաբուխ և ոչ ինքնաբուխ: Վերջինիս պատճառներն են գլխուղեղի տրավմաները, նորագոյացությունները, յատրոգեն վնասվածքները: Հիմնական կլինիկական դրսևորումներն են մշտական քթահոսությունը, օրթոստատիկ գլխացավը, աղի կամ մետաղական համը բերանում: Որպես առաջնային բարդություն կարող է դիտվել մենինգիտ, մենինգոէնցեֆալիտ:

Եղանակներ. Բուժման հիմքում ընկած է հաղորդակցության փակումը էնդոսկոպիկ վիրաբուժության միջոցով: 2 տարվա ընթացքում Աստղիկ ԲԿ-ում (Երևան) վիրահատական բուժում է ստացել 6 հոգի, որոնցից 2-ը՝ ինքնաբուխ, 1-ը՝ հիդրոցեֆալիայով պայմանավորված, 1-ը՝ գանգուղեղային գրճնշմամբ պայմանավորված, 1-ը՝ հիպոֆիզի ուռուցքով պայմանավորված, իսկ 1-ն էլ՝ յատրոգեն (տես ստորև): Բոլորին ախտորոշման նպատակով կատարվել է քթի արտադրության հետազոտություն, 4 դեպքում՝ հարքթային ծոցերի համակարգչային ցիստերնոգրաֆիա, 2 դեպքում համակարգչային շերտագրություն, որից մեկն ուներ կոնտրաստ նյութի կիրառման հակացուցում, մյուսի մոտ առկա էր ՄԷՑ՝ կոնտրաստ նյութի կիրառման կարիք չէր դիտվել:

Արդյունքներ. Նկարագրված 6 դեպքերում դիտվել է առողջացում: Հիվանդներից մեկի մոտ հետվիրահատական շրջանում դիտվել է ներգանգային ճնշման բարձրացում՝ հիդրոցեֆալիա. կատարվել է փորոքորովայնամզային շունտավորում:

Ստորև նկարագրված է յատրոգեն լիքվոռեայի կլինիկական դեպք:

Կլինիկա է դիմել 26 տարեկան օրիորդ շուրջ 4 տարի տևած քթահոսության, սաստիկ գլխացավերի գանգատներով: Անամնեզում սեպտոպլաստիկա (2018թ.), որից անմիջապես հետո դիտվել է քթահոսություն, գլխացավեր: Բազմիցս կատարվել են քթի մանրէաբանական քննություններ, գործիքային հետազոտություններ, նշանակվել է դեղորայքային բուժում, որոնք եղել են անարդյունավետ: 2021թ. ստացել է բուժում վերակենդանացման բաժանմունքում՝ սուր բակտերիալ մենինգիտի կապակցությամբ: 2023թ. ախտորոշվել է լիքվոռեա, մաղոսկրի ծակոտկեն թիթեղի դեֆեկտ, դեֆեկտից դեպի քթի խոռոչ արտանկած ՄԷՑ: Կատարվել է վիրահատություն՝ քիթ-ուղեղային խուղակի փակում էնդոսկոպիկ տրանսնազալ եղանակով: Նախապես երկու կողմից հատվել են միջին խեցու և միջնապատի միջև առկա կպումները, հեռացվել միջին խեցիների ոսկրային հատվածները: Վիզուալիզացվել է քթի միջնապատի թափածակումը, պրոլապսի ենթարկված գլխուղեղը: Գլխուղեղը կրճատվել է էլեկրոկոագուլյատորի միջոցով և հատվել: Դեֆեկտի եզրերից ներս տեղադրվել է արհեստական կարծրենի, որի վրա տեղադրվել է նախապես որովայնի գոտկային շրջանից հեռացված ենթամաշկային ճարպաբջջանք: Վերջինիս վրա տեղադրվել է հեմոստատիկ սպունգ: Այնուհետև միջին խեցիները շրջվել են դրված շերտերի վրա և ֆիքսվել կարի միջոցով միջնապատի հետ՝ փակելով քթի միջնապատի թափածակումը: Հետվիրահատական շրջանում նշանակվել է դեղորայքային բուժում, ցուցվել խիստ անկողնային ռեժիմ, ջրի սահմանափակում: Գանգուղեղային ճնշման բարձրացման նշաններ և գանգատներ չեն դիտվել:

Եզրակացություն. Այսպիսով, 10 օր շարունակ բուժման չենթարկվող լիքվոռեան պահանջում է անհապաղ վիրահատական բուժում՝ կյանքին վտանգ սպառնացող բարդությունները կանխելու նպատակով:

0139 Ռադիոալիքային վիրաբուժությունը որպես քրոնիկ ռինիտի բուժման եղանակ
Radiowave surgery as a treatment option for chronic rhinitis

Մարիամ Աշոտյան, Հասմիկ Գևորգյան, Նելլի Մոսեսովա
Արաբկիր ԲՀ, Երևան, Հայաստան

Mariam Ashotyan, Hasmik Gevorgyan, Nelly Mosesova
Arabkir MC, Yerevan, Armenia

Ներածություն. Ռինիտը (քթաբորբ) քթի խոռոչի լորձաթաղանթի բորբոքային հիվանդություն է, որն ուղեկցվում է քթից լորձային արտադրությամբ, քթային դժվարաշնչությամբ: Կապված հիվանդության լայն տարածման հետ՝ ռինիտը գտնվում է հետազոտողների ուշադրության կենտրոնում: Կլինիկական դրսևորումը զգալի նվազեցնում է հիվանդի կյանքի որակը՝ ազդելով ակտիվության, աշխատունակության, լիարժեք քնի վրա:

Քթային շնչառության երկարատև խանգարումը կարող է հանգեցնել մի շարք այլ հիվանդությունների առաջացման, այդ թվում սինուսիտների, օտիտների: Քրոնիկ ռինիտով հիվանդների մոտ վիրաբուժական միջամտության նպատակով նախկինում կիրառվել է ստորին խեցիների գալվանոկաուստիկա, ուլտրաձայնային դեզինտեգրացիա: Մինչ օրս կիրառվում է ստորին խեցիների ենթալորձաթաղանթային դեստրուկցիան՝ վազոտոմիան, սակայն հաշվի առնելով հետվիրահատական շրջանի բարդությունները՝ մասնավորապես արյունահոսության հավանականությունը, հետվիրահատական շրջանում սինեխիաների (կպումների) առաջացումը, Արաբկիր ԲՀ-ում ներդրվել և կիրառվում է առավել պահպանողական նվազագույն ինվազիվ եղանակ՝ բարձր հաճախականության ռադիոալիքային սարքը (ԲՀՌՍ), որի արդյունավետությունը գնահատելու նպատակով իրականացվել է սույնը հետազոտությունը:

Եղանակներ. Արաբկիր ԲՀ-ում ուսումնասիրվել են քրոնիկ հիպերտրոֆիկ ռինիտով 20 հոգու բուժման արդյունքները: 8 հիվանդի մոտ իրականացվել է ստորին խեցիների ենթալորձաթաղանթային դեստրուկցիա, իսկ մյուս 12-ի մոտ՝ ԲՀՌՍ (CELON OLYMPUS) կիրառում: Հիվանդները զննվել են նախավիրահատական շրջանում, վիրահատությունից 7 օր, 10 օր, 1 ամիս և 6 ամիս անց: Ուշադրություն է դարձվել հետևյալ ցուցանիշների վրա. գնահատվել է տեղային ռեակցիան հյուսվածքի վրա էնդոսկոպի միջոցով և շնչառական ֆունկցիան, որի սուբյեկտիվ գնահատման նպատակով կիրառվել է NOSE սանդղակը (Nasal Obstruction and Septoplasty Effectivness Scale):

Արդյունքներ. ԲՀՌՍ-ով վիրահատված բոլոր 20 հիվանդների մոտ դիտվել է դրական դինամիկա արդեն հետվիրահատական 7-10-րդ օրը, ինչը չի կարելի ասել ենթալորձաթաղանթային վազոտոմիայի դեպքում, երբ դրական արդյունքները գրանցվում են 20-րդ օրվանից սկսած:

Եզրակացություն. ԲՀՌՍ կիրառումը քրոնիկ ռինիտի դեպքում ցուցաբերել է բարձր արդյունավետություն: Այն խեցու հյուսվածքի վրա թողնում է նվազագույն վնասվածքներ, այրվածքները գրեթե բացակայում են, որի հետևանքով զարգանում է հյուսվածքի արագ ռեգեներացիա, շնչառական ֆունկցիայի արագ վերականգնում, ինչն էլ իր հերթին հանգեցնում է կյանքի որակի լավացման:

0164 Սուր միջին օտիտի ներ- և արտագանգային բարդությունների բուժման ժամանակակից մոտեցումները երեխաների մոտ
Contemporary approach to treatment of intra- and extra-cranial complications of acute otitis media in children

Գայանե Սարգսյան[1,2], Գայանե Թադևոսյան[1]
[1]Երևանի պետական բժշկական համալսարան, ԼՕՌ հիվանդությունների ամբիոն, Երևան, Հայաստան
[2]Արաբկիր ԲՀ, քիթ-կոկորդ-ականջաբանության և պլաստիկ վիրաբուժության բաժանմունք, Երևան, Հայաստան

Gayane Sargsyan[1,2], Gayane Tadevosyan[1]
[1]Yerevan State Medical Univerist, ENT Department, Yerevan, Armenia
[2]Arabkir MC, ENT and Plastic Surgery Department, Yerevan, Armenia

Ներածություն. Հետազոտության նպատակն է ռետրոսպեկտիվ վերլուծության միջոցով մշակել հայկական պոպուլյացիայի երեխաների մոտ սուր միջին օտիտի ներ- և արտագանգային բարդությունների ախտորոշման, բուժման ժամանակակից մոտեցումները:

Եղանակներ. Ռետրոսպեկտիվ վերլուծության են ենթարկվել 31 երեխաների հիվանդության պատմագրեր, որոնք բուժվել են Արաբկիր ԲՀ-ում 2019-2023թթ.: Երեխաների տարիքը եղել է 3 ամսականից մինչև 13 տարեկան: Բոլորի մոտ ախտորոշվել է սուր օտոմաստոիդիտ՝ ներ- և արտա-գանգային բարդություններով, այդ թվում՝ դեստրուկտիվ մաստոիդիտ ենթավերնոսկրային թարախակույտով՝ 10 (3 ատիպիկ), էքսուդատիվ մաստոիդիտ՝ 9, ուղեղային երակածոցերի թրոմբոզ՝ 5, օտոգեն մենինգոէնցեֆալիտ՝ 2, դիմային նյարդի ծայրամասային կաթված՝ 2, էքստրադուրալ թարախակույտ՝ 2, սուբդուրալ թարախակույտ՝ 1:

Արդյունքներ. Բոլոր երեխաների մոտ անամնեզում եղել է սուր միջին օտիտի մեկ կամ մի քանի դրվագ: Հիվանդության վաղեմությունը՝ 5-12 օր: Հիմնական գանգատները՝ ականջի ցավ, հետականջային այտուց՝ ծփումով, ֆեբրիլ ջերմություն, գլխացավ, քնկոտություն, լուսավախություն: Օտոմիկրոսկոպիայով հայտնաբերվել է թմբկաթաղանթի հիպերեմիա՝ արտափքումով, կողմնորոշիչ կետերի բացակայություն: Բոլորի մոտ հայտնաբերվել է արյան բորբոքային մարկերների խիստ բարձրացում: Ախտորոշումը հաստատվել է համակարգչային և մագնիսառեզոնանսային (ՄՌՇ) շերտագրություններով: 22 հոգու մոտ կատարվել է մաստոիդէկտոմիա միջին ականջի շունտավորումով, որոնցից 3-ի մոտ կողմնային երակածոցի ոսկրային պատի մերկացումով, 9-ի մոտ միայն միջին ականջի շունտավորում: Դեստրուկտիվ մաստոիդիտով 4-ի մոտ ախտաբանական երևույթների խորացման պատճառով շունտավորումից մի քանի օր անց կատարվել է մաստոիդէկտոմիա: Վիրահատվածների պտկաձև ելուններում հիմնականում հայտնաբերվել է հատիկավոր հյուսվածք aditus ad antrum-ի լրիվ պաշարումով, 4 դեպքում՝ թմբկախորշի թաղի, 3 դեպքում՝ սիգմայաձև ծոցի ոսկրային պատի քայքայում: Վիրահատական գտածոների մանրէաբանական հետազոտման արդյունքում 40% դեպքերում հայտնաբերվել է պնևմոկոկ: Բոլոր հիվանդները 6 շաբաթ ստացել են հակաբիոտիկաբուժում՝ 3-4-րդ սերնդի ցեֆալոսպորիններ, մետրոնիդազոլ, վանկոմիցին, մերոպենեմ՝ տարբեր համակցումներով: Ուղեղային երակածոցերի թրոմբոզով 5 հոգի 6 ամիս շարունակ ստացել է հակամակարդիչներ: Մահացու ելք չի արձանագրվել: Ներգանգային բարդություններով հիվանդները 1-4 ամիս անց ենթարկվել են ՄՌՇ հետազոտության: Հիվանդները գտնվել են ամբուլատոր հսկողության տակ 1 ամսից 3 տարի շարունակ:

Եզրակացություն. Այսպիսով, հայկական պոպուլյացիայի երեխաների մոտ սուր օտոմաստոիդիտի ներ- և արտագանգային բարդությունների կանխարգելման համար անհրաժեշտ է համարժեք հակաբիոտիկաբուժում, ճիշտ ժամանակին կատարված վիրաբուժական միջամտություններ և ամբուլատոր երկարատև հսկողություն:

0227 Մանկական քնի օբստրուկտիվ խանգարումների բուժման ժամանակակից մեթոդների համեմատական բնութագիրը
Comparative description of contemporary methods of treatment for pediatric obstructive sleep apnea

Հասմիկ Հովհաննիսյան[1], Գայանե Սարգսյան[2]
Hasmik Hovhannisyan[1], Gayane Sargsyan
[1]Արաբկիր ԲՀ, Երևան, Հայաստան
[2]ԵՊԲՀ, ԼՕՌ հիվանդությունների ամբիոն, Երևան, Հայաստան

Hasmik Hovannisyan[1], Gayane Sargsyan[2]
[1]Arabkir MC, Yerevan, Armenia
[2]Yerevan State Medical University, Department of ENT Diseases, Yerevan, Armenia

Ներածություն. Ադենոտոնզիլյար հիպերտրոֆիան մանկական քնի օբստրուկտիվ խանգարման ամենահաճախ հանդիպող պատճառն է: Մանկական քնի օբստրուկտիվ ապնոէն արտահայտվում է շնչառության կտրուկ նվազումով կամ լրիվ կանգով, որը հանգեցնում է արյան մեջ թթվածնի խտության նվազման, գլխուղեղի և սրտամկանի հիպօքսիայի:

Նպատակներ. Հետազոտության նպատակն է տալ քնի օբստրուկտիվ խանգարումով երեխաների բուժման ժամանակ կիրառվող տարբեր վիրահատական միջամտությունների արդյունավետության, անվտանգության, վիրահատությունից հետո կյանքի որակի գնահատականը: 2016թ.-ից Արաբկիր ԲՀ-ում կիրառվում է մանկական քնի օբստրուկտիվ ապնոէի վիրահատական բուժման ժամանակակից մեթոդ՝ երկկողմանի ինտրակապսուլյար տոնզիլէկտոմիա և ադենոիդէկտոմիա՝ միկրոդեբրայդերի միջոցով: Ռետրոսպեկտիվ վերլուծության են ենթարկվել 2016-2022թթ. Արաբկիր ԲՀ Քիթ-կոկորդ-ականջաբանության բաժին դիմած 3-10 տարեկան, քնի օբստրուկտիվ խանգարումներով 247 երեխա հետևյալ ախտանիշներով՝ գիշերային ապնոէներ, խռմփոցներ, անհանգիստ քուն, դժվարաշնչություն, քթախոսություն, ցերեկային հոգնածություն, թուլություն, կոգնիտիվ ֆունկցիաների թուլացում, դիմագծերի և ծնոտի փոփոխություն, ճարպակալում: Բոլոր հիվանդներին կատարվել է օբյեկտիվ զննում՝ ռինոսկոպիա, ֆարինգոսկոպիա, քթըմպանի ռենտգենոգրաֆիա, վիդեոֆիբրոսկոպիա, պոլիսոմնոգրաֆիկ հետազոտություն: Քմային նշիկների հիպերտրոֆիայի աստիճանը գնահատվել է ըստ Ֆուդջիտի սանդղակի: Բոլոր հիվանդների մոտ ախտորոշվել է միջին և ծանր աստիճանի քնի օբստրուկտիվ ապնոէ-հիպոպնոէ համախտանիշ: 200 հիվանդի մոտ միկրոդեբրայդերի միջոցով կատարվել է երկկողմանի ինտրակապսուլյար տոնզիլէկտոմիա և ադենոիդէկտոմիա: Երեխաներից 47-ի մոտ մանկական քնի օբստրուկտիվ ապնոէ-հիպոպնոէ համախտանիշը զուգակցվել է քրոնիկական դեկոմպենսացված տոնզիլիտի հետ, կատարվել է երկկողմանի էքստրակապսուլյար ադենոտոնզիլէկտոմիա: Հետվիրահատական շրջանում գնահատվել է երեխաների ցավային համախտանիշը, հետվիրահատական վերքի վիճակը, մինիմալ թթվածնային օքսիգենացիան, հետվիրահատական արյունահոսությունների հաճախականությունը:

Արդյունքներ. Վիրահատված 200 երեխաներից 192-ի մոտ (96%) հետվիրահատական ցավային համախտանիշը, ըստ ցավի ուժգնության սանդղակի, գնահատվել է 0-4 միավոր (0-10 համակարգով): Հետվիրահատական վերքը ապաքինվել է 5-8 օրվա ընթացքում: Նվազագույն օքսիգենացիան միջինում գրանցվել է 98% (միջակայք՝ 96-99%): Հետվիրահատական բերանըմպանային արյունահոսություններ զարգացել են 1% դեպքերում: Քմային նշիկի հետվիրահատական հիպերտրոֆիա նկատվել է 1.2% դեպքերում: 47 հոգու մոտ, որոնք ենթարկվել են էքստրակապսուլյար ադենոտոնզիլէկտոմիայի, ցավի ցուցանիշը գնահատվել է 9-10 միավոր, իսկ հետվիրահատական վերքը ապաքինվել է 10-12 օրվա ընթացքում: Նվազագույն օքսիգենացիան նրանց մոտ միջինում գրանցվել է 98%: Հետվիրահատական բերանըմպանային արյունահոսությունների հաճախականությունը՝ 8.5%:

Եզրակացություն. Միկրոդեբրայդերի միջոցով կատարված երկկողմանի ինտրակապսուլյար տոնզիլէկտոմիան արդյունավետ և անվտանգ վիրահատական միջամտություն է մանկական քնի օբստրուկտիվ ապնոէով հիվանդների բուժման համար, որի շնորհիվ պահպանվում է քմային նշիկների իմունաբանական գործառույթը: Հետվիրահատական ընթացքն ու վերականգնողական շրջանը զգալի թեթև է և կարճ: Ցավը լինում է նվազագույն, օրգանիզմի ջրազրկում չի դիտվում:

0345 Յուրահատուկ օրթոգնատիկ վիրահատությունների մեր փորձը
Our expieriece in specific cases of orthognatic surgery

Հայկ Ենոքյան
Առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան
Hayk Yenokyan
National Institute of Health, Yerevan, Armenia

Ներածություն. Օրթոգնատիկ վիրահատությունները վերջին տարիներին դարձել են առավել արդիական ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: Այս միտումը պայմանավորված է ախտորոշման եղանակների ավելի ճշգրիտ լինելով, վիրահատական տեխնիկայի զարգացմամբ, անեսթեզիոլոգիական ծառայության կատարելագործմամբ, ինչպես նաև բուժառուների առավել հաճախակի դիմելիությամբ:

Եղանակներ. Կատարվել է համապարփակ ռետրոսպեկտիվ վերլուծություն 2005-2022թթ. (17 տարի) ընթացքում յուրահատկություններ ունեցող օրթոգնատիկ վիրահատությունների արդյունքում կուտակված մեր փորձի վերաբերյալ:

Արդյունքներ. Կատարվել են ինչպես երկծնոտանի, այնպես էլ միածնոտանի վիրահատություններ, ինչպես նաև ստորին ծնոտի հոդային ելունի վրա օրթոգնատիկ նպատակներով վիրահատություններ: Վերլուծության արդյունքում ստացվել են հետաքրքիր տվյալներ, որոնք ամփոփվել են հետևյալ կետերով.

► Դեպքերի մեծ մասը պահանջում է երկծնոտանի վի-

րահատություններ:

► Միածնոտանի վիրահատությունները ցուցված են և արդյունավետ, եթե չեն առաջացնում վերին շնչուղիների նեղացում:

► «Surgery First» կոնցեպտը կարելի է կիրառել ավելի հաճախ, ինչի արդյունքում կրճատվում է բուժման տևողությունը, և ապահովվում է առավել լիարժեք վերականգնում:

► Անատամի ծնոտների օրթոգնատիկ վիրահատությունները ունեն յուրահատկություններ, և անհրաժեշտ է ֆիքսել ոսկրային ֆրագմենտերը երկակի թիթեղներով:

0353 Սովորական բշտախտի կլինիկական դրսևորումները բերանի խոռոչի լորձաթաղանթում և դիմածնոտային շրջանում, դրա պատեհաժամ ախտորոշման հիմնախնդիրը ստոմատոլոգիական և դիմածնոտային վիրաբուժության պրակտիկայում

Clinical manifestations of pemphigus vulgaris in the oral mucosa and maxillofacial region, problem of its timely diagnosis in the practice of stomatology and maxillofacial surgery

Կարինե Հարությունյան[1], Հայկ Ենոքյան[1], Արամ Շահվերդյան[2]
[1]Առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան
[2]ՀՀ ԱՆ Մաշկաբանության ազգային կենտրոն, Երևան, Հայաստան

Karine Harutyunyan[1], Hayk Yenoqyan[1], Aram Shahverdyan[2]
[1]National Institute of Health, Yerevan, Armenia
[2]National Dermatology Center of MoH RA, Yerevan, Armenia

Ներածություն. Սովորական բշտախտը տարածված մաշկախտ է, որը կազմում է մաշկային հիվանդությունների մոտավորապես 3%-ը: Հանդիպման հաճախականությունը տարեկան միջինում 1.35:100,000 է, առավել հաճախ հանդիպում է միջերկրածովյան տարածաշրջանում: Հիվանդանում են գերազանցապես 40 տարեկանից բարձր կանայք: Սովորական բշտախտի մահացությունն առաջին 5 տարում մինչև 15% է՝ բուժման պայմաններում: 50-70% դեպքերում սկսվում է բերանի խոռոչի լորձաթաղանթի, բկանցքի և հետմեծաղորիքային շրջանի ու շրթունքի կարմիր երիզի հատվածից:

Եղանակներ. Կատարվել է ստոմատոլոգիական քարտերի, հիվանդների ամբուլատոր քարտերի և պատմագրերի, ախտորոշված հիվանդների պատմագրերի տվյալների վերլուծություն և համադրում: Ուսումնասիրվել են 276 կլինիկական դեպքերի տվյալներ ախտորոշվել է 124 դեպք, որոնցից 79 հիվանդի մոտ ախտորոշումը կատարվել է անարդյունավետ ստոմատոլոգիական բուժումից հետո: Այն բոլոր կլինիկական դեպքերը, որոնց առաջնային արտահայտումը եղել է բերանի խոռոչի լորձաթաղանթներում էրոզիվ մակերեսների դրսևորման տեսքով, առաջին 2 շաբաթվա ադինամիկ բուժումից հետո պահանջել են լրացուցիչ տարբերակիչ ախտորոշում և մաշկաբանների ու ռևմատոլոգների ներգրավվածություն բուժման մեջ:

0356 Էնդոսկոպիայի դերը օդոնտոգեն հայմորիտների բուժման ժամանակ

The role of endoscopy in odontogenic maxillary sinusitis management

Հայկ Ենոքյան, Կարինե Հարությունյան
Առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան
Hayk Yenoqyan, Karine Harutyunyan
National Institute of Health, Yerevan, Armenia

Ներածություն. Օդոնտոգեն հայմորիտների բուժման ժամանակ էնդոսկոպիկ հայմորոտոմիան նվազագույն ինվազիվ միջամտություններից է: Օդոնտոգեն հայմորիտները տարբերվում են իրենց ախտաֆիզիոլոգիայով, մանրէաբանությամբ, ախտորոշման և բուժման մեթոդներով: Առավել հաճախ դիտվում է միակողմանի ախտահարում՝ տհաճ հոտով, արտադրություն քթի խոռոչից, օտար մարմնի (լիցքանյութի) առկայություն ծոցի խոռոչում: Վիրաբուժական բուժումը կայանում է վարակի հեռացման, ծոցի ֆիզիոլոգիական բացվածքի վերականգնման և ռեցիդիվների կանխարգելման մեջ:

Եղանակներ. Կատարվել է բուժառուների անամնեստիկ և կլինիկական տվյալների, ինչպես նաև համակարգչային շերտագրության վերլուծություն: Ուսումնասիրվել է 242 կլինիկական դեպք, որոնցից 94-ին կատարվել է էնդոսկոպիկ հայմորոտոմիա, իսկ 148-ին՝ արմատական միջամտություն ըստ Քոլդուելի-Լյուկի:

Արդյունքներ. Հետվիրահատական շրջանում 148 հիվանդներից 95-ը (64.2%) նշել են ցավ և դիսկոմֆորտ, 50-ի մոտ (33.8%) դիտվել է վերին շրթունքի անցողիկ բնույթի թմրածություն վիրահատության կողմում: Միևնույն ժամանակ, այն հիվանդների մոտ, ում անհրաժեշտություն է եղել պատճառ հեռացնել ատամները (26 հոգի՝ ընդհանուր թվի 10.7%), որոնց արմատները գտնվել են վերինծնոտային ծոցում, առավել նպատակահարմար է եղել կատարել միանվագ վիրահատական մուտք բերանի խոռոչի կողմից՝ լրացնելով hiatus semilunaris-ի էնդոսկոպիկ չափերի մեծացմամբ: Էնդոսկոպիկ միջամտության ենթարկված այն հիվանդների կրկնակի հետազոտությունները, որոնց մոտ բնական բացվածքը մեծացվել է 5.5մմ չափերով, կրկնակի հետազոտությունները փաստում են լորձաթաղանթի արագ վերականգնման, կեղևների առաջացման և կանգային երևույթների նվազման մասին:

Եզրակացություն. Վիրահատության մեթոդի ընտրությունը և ծավալը որոշվում են կլինիկական դեպքի բնույթից:

0419 Խաչվածք-թամբային շրջանի գոյացությունների վիրահատական բուժման արդյունքները
The results of surgical treatment of mass lesions of the chiasmal-sellar region

Վիլեն Ազիզյան[1], Աննա Գալստյան[1], Ավետիս Կիրակոսյան[1], Լեոնիդ Մովսիսյան[1], Հակոբ Մելիքյան[1], Տիգրան Ազարյան[1], Արմեն Հարությունյան[1], Անուշ Հարությունյան[2], Ելենա Աղաջանովա[3], Գայանե Բայբուրդյան[3], Իսսա Ֆրեյջ[3]
[1]Աստղիկ ԲԿ, Երևան, Հայաստան
[2]ԷյԲի Մեդ ԲԿ, Երևան, Հայաստան
[3]Մուրացան ԲԿ, Երևան, Հայաստան

Vilen Azizyan[1], Anna Galstyan[1], Avetis Kirakosyan[1], Leonid Movsisyan[1], Hakob Melikyan[1], Tigran Azaryan[1], Armen Harutyunyan[1], Anush Harutyunyan[2], Elena Aghajanova[3], Gayane Bayburdyan[3], Issa Freij[3]
[1]Astghik MC, Yerevan, Armenia
[2]AB Med MC, Yerevan, Armenia
[3]Muratsan MC, Yerevan, Armenia

Ներածություն. Խաչվածք-թամբային (խիազմալ-սելյար) շրջանի (ԽԹՇ) գոյացությունների ժամանակին ախտորոշումն ու բուժումը ժամանակակից նյարդավիրաբուժության արդիական խնդիրներից է: Այս նորագոյացությունների բուժման հիմնական եղանակը տրանսնազալ հեռացումն է, որն առավելագույնս նպաստում է ծավալային ազդեցության հետընթացին, հորմոնային հիպերսեկրեցիայի համախտանիշի փոխհատուցմանը՝ ներ- և հետվիրահատական բարդությունների փոքր վտանգով:

Նպատակ. Գնահատել 2021-2022թթ. ընկած ժամանակահատվածում Աստղիկ բժշկական կենտրոնի նյարդավիրաբուժական բաժանմունքում ԽԹՇ ուռուցքների վիրահատական բուժման արդյունքները:

Եղանակներ. 2021-2022թթ. նյարդավիրաբուժական բաժանմունքում կատարվել է ԽԹՇ ուռուցքներով 25 հիվանդի հետազոտում և վիրահատական բուժում: Հիվանդների սեռատարիքային կազմը. 16 (64%) կին, 9 (36%) տղամարդ, 2 հիվանդ՝ մինչև 18 տարեկան (15 և 17 տարեկան): 23 հիվանդի մոտ (92%) հայտնաբերվել է հիպոֆիզի ադենոմա, 1 կրանիոֆարինգիոմա, 1 արախնոիդալ կիստա: Ադենոմաներով 3 հիվանդի մոտ հայտնաբերվել են միկրոադենոմաներ, 21-ի մոտ (78.1%)՝ մակրոադենոմաներ: Ըստ հորմոնային ակտիվության. հորմոնային ոչ ակտիվ ադենոմա՝ 8 (34.8%), սոմատոտրոպինոմա՝ 11 (47.8%), պրոլակտինոմա (դեղակայուն)՝ 2 (8.7%), կորտիկոտրոպինոմա՝ 1 (4.35%), թիրեոտրոպինոմա՝ 1 (4.35%): Ախտորոշումը հաստատվել է կլինիկական տվյալների, հորմոնային հետազոտությունների և նյարդապատկերման մեթոդների հիման վրա: Բոլոր հիվանդները վիրահատվել են էնդոսկոպիկ տրանսնազալ-տրանսֆենոիդալ ստանդարտ և ընդլայնված մուտքերով:

Արդյունքներ. Հետվիրահատական շրջանում ակրոմեգալիայով հիվանդներից 2-ի (18%) դեպքում հիվանդության ախտանիշները պահպանվել են, 9-ի (82%) դեպքում դիտվել է ռեմիսիա: Պրոլակտինոմա, թիրեոտրոպինոմա և կորտիկոտրոպինոմա ունեցող հիվանդների 100%-ի մոտ գրանցվել է հիվանդության ռեմիսիա: Հիպոֆիզի հորմոնային ոչ ակտիվ ադենոմաներով և ԽԹՇ ուռուցքներով (արախնոիդալ կիստա և կրանիոֆարինգիոմա) բոլոր հիվանդները ունեցել են տեսողության բարելավում, մեկ հիվանդի մոտ հիպոֆիզի հսկա ադենոմայի հեռացումից հետո դիտվել են գլխուղեղի երկկողմանի մանր-օջախային ինֆարկտներ՝ նյարդաբանական վիճակի հետագա աստիճանական զգալի բարելավմամբ: Հորմոնային խանգարումներից հիպոգոնադիզմ է զարգացել 3 հիվանդի մոտ (2-ը՝ հորմոնային ոչ ակտիվ ադենոմաների և մեկը՝ կրանիոֆարինգիոմայի դեպքում):

Եզրակացություն. ԽԹՇ ուռուցքների էնդոսկոպիկ տրանսնազալ-տրանսսֆենոիդալ մասնահատումը բուժման նախընտրելի եղանակ է՝ բարդությունների նվազագույն հաճախականությամբ, նշանակալի դրական ազդեցությամբ՝ ծավալային ազդեցության ռեգրեսիայով և հորմոնային ռեմիսիայով հորմոնային ակտիվ ադենոմաների դեպքում:

0077 Երկակի տրիգերի՝ գոնադոտրոպին-ռիլիզինգ հորմոնի ագոնիստի և մարդու խորիոնային գոնադոտրոպինի միաժամանակյա կիրառման արդյունավետությունը թարմ արտամարմնային բեղմնավորման ցիկլերում. ռետրոսպեկտիվ հետազոտություն
Efficiency of dual trigger with combination of GnRH agonist and hCG in fresh IVF cycles: a retrospective study

Մարգարիտ Գրիգորյան, Աննա Խաչատրյան
Շենգավիթ ԲԿ, Երևան, Հայաստան

Margarit Grigoryan, Anna Khachatryan
Shengavit MC, Yerevan, Armenia

Ներածություն. Չնայած բազմաթիվ հետազոտությունների՝ վերջնականապես պարզ չէ երկակի տրիգերի, այն է՝ մարդու խորիոնային գոնադոտրոպինի (մԽԳ) և գոնադոտրոպին-ռիլիզինգ հորմոնի (ԳՆՌՀ) ագոնիստի միաժամանակյա կիրառումը անտագոնիստով պրոտոկոլում, նորմալ և ցածր ձվարանային պատասխանի դեպքում, բարձրացնում է արդյոք արտամարմնային բեղմնավորման/սերմի ներցիտոպլազմային ներարկման (ԱՄԲ/ՍՆՑՆ) արդյունավետությունը թարմ տեղադրման դեպքում: ԳՆՌՀ-ագոնիստով տրիգերի կիրառումը ավելի ֆիզիոլոգիական է, քանի որ առաջացնում է էնդոգեն լյուտեինացնող հորմոնի (ԼՀ) և ֆոլիկուլ-խթանիչ հորմոնի (ՖԽՀ) սեկրեցիա հիպոֆիզում, սակայն այս դեպքում հետագայում առաջանում է վաղաժամ լյուտեոլիզ և դեղին մարմինների դիսֆունկցիա: ԱՄԲ ցիկլերում սովորաբար ԼՀ փոխարեն որպես տրիգեր կիրառվում է միզային կամ ռեկոմբինանտ մԽԳ: ԱՄԲ ցիկլերում որպես երկակի տրիգեր մԽԳ և ԳՆՌՀ-ագոնիստի համատեղ կիրառումը կարող է ավելի արդյունավետ լինել ձվաբջիջների որակի լավացման և դեղին մարմինների բավարար

ֆունկցիայի շնորհիվ:

Նպատակ. Համեմատել երկակի տրիգերի և միայն մԽԳ կիրառման լաբորատոր և կլինիկական արդյունքները:

Մեթոդներ. Այս ռետրոսպեկտիվ հետազոտության ընթացքում հետազոտվել է 2020-2022թթ. Շենգավիթ բժշկական կենտրոնում կատարված 103 ԱՄԲ/ՆՑՍՆ ցիկլ: Բուժառուների տարիքը եղել է 22-38 տարեկան, ԱՄՀ (անտիմյուլլերյան հորմոն) ցուցանիշը՝ 0.5-5 նգ/մլ, որոնց կիրառվել է անտագոնիստներով պրոտոկոլ: 53 ցիկլի դեպքում կատարվել է երկակի տրիգերի (0.1 մգ տրիպտորելին և 250 մկգ ռեկոմբինանտ մԽԳ), իսկ 50-ի դեպքում միայն 250 մկգ ռեկոմբինանտ մԽԳ-ով տրիգերի կիրառում և հետագա ստացված սաղմերի թարմ տեղադրում: Համեմատվել են 2 խմբում հասուն ձվաբջիջների մասնաբաժինը, դրանց բեղմնավորման տոկոսը, իմպլանտացիայի, կլինիկական հղիության, վիժման և կենդանի պտղով ծնունդների հաճախականությունը: Արդյունքներ. Երկակի տրիգերի խմբում (1-ին խումբ) հասուն ձվաբջիջների մասնաբաժինը 72.95% էր, իսկ միայն մԽԳ խմբում (2-րդ խումբ)՝ 70.31%, որից 1-ին խմբում բեղմնավորվել էին 77.58%, 2-րդում՝ 70.25%: Իմպլանտացիայի հաճախականությունը եղել է 52.83% և 48%, կլինիկական հղիության հաճախականությունը՝ 47.16% և 44%, վիժման հաճախականությունը հղիացածների 14.28% և 16.66%, կենդանի պտղով ծնունդների հաճախականությունը՝ 45.28% և 40%, համապատասխանաբար 1-ին և 2-րդ խմբերում:

Եզրակացություն. Ուսումնասիրվող 2 խմբերում զգալի տարբերություն չի նկատվել հասուն ձվաբջիջների մասնաբաժնի առումով, որը 2 խմբում էլ բավական բարձր է, քանի որ անցնում է 66% շեմը: Ձվաբջիջների բեղմնավորման հաճախականությունը, սաղմերի իմպլանտացիայի, կլինիկական հղիության և կենդանի պտղով ծնունդների հաճախականությունները բարձր լինելու միտում ունեն երկակի տրիգերի խմբում: Հատկանշական է, որ վիժումների հաճախականությունն ավելի ցածր է երկակի տրիգերի խմբում: Բնականաբար 2 խումբն էլ փոքրաքանակ են, և հետագայում անհրաժեշտ են ավելի լայնածավալ հետազոտություններ վերջնական եզրահանգման համար:

0092 Սթրեսային անմիզապահության ոչ վիրահատական բուժումը ֆրակցիոն CO_2 լազերով

Fractional CO_2 laser for non-surgical treatment of stress urinary incontinence

Լիանա Մարտիրոսյան, Խաթուն Գրիգորյանց, Անուշ Նիկողոսյան, Մելինե Բալայան, Լուսինե Առուստամյան, Անի Գրիգորյան
Վարդանանց ԲԿ, Երևան, Հայաստան

Liana Martirosyan, Khatun Grigoryants, Anush Nikoghosyan, Meline Balayan, Lusine Arustamyan, Ani Grigoryan
Vardanants MC, Yerevan, Armenia

Նպատակ. Գնահատել սթրեսային անմիզապահության (ՍԱՄ) բուժման արդյունավետությունը ֆրակցիոն CO_2 լազերով այն կանանց մոտ, որոնք նախընտրել են ոչ վիրահատական և ոչ հորմոնալ բուժում:

Եղանակներ. Ռեպրոսպեկտիվ, գործիքային, միակենտրոն, բաց հետազոտության մեջ ներառվել են 2021թ. հոկտեմբերից մինչև 2022թ. նոյեմբերը՝ Վարդանանց բժշկական կենտրոնում (Երևան) CO_2 ֆրակցիոն լազերային համակարգով (MonaLisa Touch, SmartXide2 V2LR, DEKA, Իտալիա) բուժում ստացած հիվանդները: CO_2 ֆրակցիոն լազերով բուժումն իրականացվել է տրանսվագինալ եղանակով՝ յուրաքանչյուր 4-6 շաբաթը մեկ, ընդհանուր բուժման 3 կուրս: Բուժման արձագանքը գնահատվել է ելակետային և բուժման ավարտից 4 շաբաթ անց հետևողականությամբ՝ օգտագործելով ՍԱՄ-ի գնահատման LISS միջազգային սանդղակը:

Արդյունքներ. Հետազոտությանը մասնակցել է 31-72 տարեկան 189 կին: Մինչև բուժումը արձանագրվել են բազային չափորոշիչները. 46-ի մոտ թույլ, 102-ի մոտ՝ միջին, 41-ի մոտ՝ ծանր: Մասնակիցների 98%-ը բուժման ավարտին հայտնել է ՍԱՄ ախտանիշների բարելավում: 46 հիվանդից 17-ը ըստ LISS սանդղակի նշել է գանգատների բացակայություն, 29-ը՝ թույլ աստիճան, բայց նկատելի փոփոխություններով: 102-ից 68-ը գանգատների բացակայում, 34-ի մոտ թույլ աստիճան, 41-29-ը թույլ աստիճան, 12-ը միջին աստիճան:

Եզրակացություններ. Հաշվի առնելով բարդությունների բացակայությունը՝ այս հետազոտությունը ցույց է տվել MonaLisa Touch® ֆրակցիոն CO_2 լազերային բուժման արդյունավետությունը ՍԱՄ-ով հիվանդների մոտ: Այն խոստումնալից, ոչ վիրաբուժական, ոչ հորմոնալ, նվազագույն ինվազիվ, ցածր ռիսկի բուժման տարբերակ է:

0205 Էնդոմետրիումի ախտաբանություն. ոչ վիրաբուժական մոտեցում

Pathology of endometrium: nonoperative management.

Մարիամ Սիմոնյան, Ազնար Խաչատրյան
Երևանի պետական բժշկական համալսարան, Երևան, Հայաստան

Mariam Simonyan, Aznar Khachatryan
Yerevan State Medical University, Yerevan, Armenia

Ներածություն. Էնդոմետրիումի (ներարգանդենու) ախտաբանությունները գինեկոլոգիական հիվանդությունների շարքում գրավում են առաջատար դեր՝ հանդիսանալով ացիկլիկ արյունահոսությունների պատճառ: Դրանց վաղ ախտորոշումը և պատշաճ բուժումը ոչ միայն կանխում է հիվանդության ախտադարձերը, կարևոր դեր է խաղում էնդոմետրիումի քաղցկեղի կանխարգելման հարցում, այլ նաև նպաստում է կնոջ վերարտադրողական առողջության պահպանմանը: Էնդոմետրիումի վիճակի գնահատման գործում կարևոր տեղ է գրավում փոքր կոնքի օրգանների ուլտրաձայնային հետազոտությունը (ՈւՁՀ): Այն հասանելի, ոչ ինվազիվ, մատչելի և սքրինինգային հետազոտություն

է վաղ շրջաններում: Հարկ է նշել, որ էնդոմետրիումի անախտանիշ ախտաբանությունների վաղ ախտորոշման համար լայնորեն կիրառվում է փոքր կոնքի օրգանների ՈւՁՀ-ն: Իհարկե չի կարելի անտեսել հիպերդիագնոստիկայի հաճախականության աճը, այսինքն՝ հիստերոսկոպով և ախտահյուսվածաբանորեն չհաստատված ենթադրյալ ախտորոշումները:

Նպատակ. Վերոնշյալից ելնելով՝ կատարվել է հետազոտություն, որում փոքր կոնքի օրգանների ՈւՁՀ տվյալները համեմատվել են հիստերոսկոպիկ և ախտահյուսվածաբանական հետազոտությունների տվյալների հետ:

Եղանակներ. Հետազոտության շրջանակներում անց է կացվել ՈւՁՀ-ով էնդոմետրիումի ախտաբանություն հայտնաբերված 40 կանանց հիվանդության պատմագրերի ռետրոսպեկտիվ դիտարկում: Բոլոր պացիենտներին կատարվել է տրանսվագինալ ՈւՁՀ, հիստերոռեզեկտոսկոպիա և արգանդի խոռոչի ու ցերվիկալ խողովակի ախտորոշիչ-բուժիչ քերում հետագա ախտահյուսվածաբանական քննությամբ: Հիստերոռեզեկտոսկոպիան կատարվել է Karl Storz (Գերմանիա) սարքերի միջոցով:

Արդյունքներ. Պացիենտները բաժանվել են երկու տարիքային խմբի: Առաջին խմբում եղել է վերարտադրողական տարիքի 20 կին, իսկ երկրորդում՝ հետդաշտանադադարային տարիքի 20 կին: Առաջին խմբում ՈւՁՀ-ով հիմնականում ախտորոշվել է դիֆուզ ոչ համասեռ էնդոմետրիում, հաճախ բազմակի մանր անէխոգեն ներառուկներով, էխո-դոպլերոգրաֆիայով ներէնդոմետրիալ արյունահոսքի առկայությամբ կամ բացակայությամբ, ինչպես նաև անհամաչափ բարձրացած էխոգենությամբ: Երկրորդ խմբում ՈւՁՀ-ով հիմնականում հայտնաբերվել են Մ-էխո անհարթ ուրվագծեր, բարձրացած էխոգենություն, էխոնեգատիվ ներառուկներով, էխո-դոպլերոգրաֆիայով ներէնդոմետրիալ արյունահոսքի առկայությամբ կամ բացակայությամբ: Առաջին խմբում ՈՒՁՀ հայտնաբերված ախտաբանության համընկնումը հիստերոսկոպիկ և ախտահյուսվածաբանական հետազոտությունների տվյալների հետ եղել է 85%: Երկրորդ խմբում այդ ցուցանիշը հասել է 95%-ի:

Եզրակացություն. Այսպիսով, գրականության տվյալներից և կատարված հետազոտության արդյունքներից ելնելով, կարող ենք եզրակացնել, որ փոքր կոնքի օրգանների ՈՒՁՀ-ն հիստերոսկոպիայի և ախտահյուսվածաբանական հետազոտության համեմատությամբ ունի ավելի ցածր ախտորոշիչ նշանակություն ներարգանդային ախտաբանության վերջնական ախտորոշման հարցում:

0312 Հղիության ելքերը Կովիդ-19 վարակակիրների շրջանում. նկարագրողական հետազոտություն
Pregnancy outcomes among COVID-19-positive patients: an observational study

Աննա Սարգսյան,Աղասի Շարբատյան
Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ (ՎԱՊՄԳՀԻ), Երևան, Հայաստան

Anna Sargsyan, Aghasi Sharbatyan
Republican Institute of Reproductive Health, Perinatology, Obstetrics and Gynecology, Yerevan, Armenia

2023թ.հունվարի 9-ի դրությամբ աշխարհում գրանցվել է Կովիդ-19-ի 659 միլիոն դեպք և գրանցվել է 6.6 միլիոն մահ: Հղի կանանց շրջանում նկատվում է ախտանիշների լայն սպեկտր՝ միջինից մինչև կրիտիկական ծանր հիվանդություն, որը կարող է հանգեցնել սուր շնչական դիսթրես համախտանիշի և այնպիսի բարդությունների, ինչպիսիք են թոքային զարկերակի թրոմբոէմբոլիան և սուր կորոնար համախտանիշը: Կովիդ-19-ի ծանր կամ ծայրահեղ ծանր ընթացքով, հղիության 3-րդ եռամսյակում գտնվող հղիները ունեն վաղաժամ ծննդաբերության, մեռելածնության և կեսարյան հատման բարձր ռիսկ: ՔՈՎԻԴ-19 վարակակիր հղիները ունեն նաև պրեէկլամպսիայի բարձր ռիսկ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կովիդ-19 վարակակիր հղիների շրջանում նկատվում է բարդությունների բարձր ռիսկ, հետազոտության նպատակն է հետազոտել Կովիդ-19 վարակի ազդեցությունը հղիության ընթացքի և ելքի վրա ՀՀ-ում: Իրականացվել է նկարագրողական հետազոտություն՝ ՎԱՊՄԳՀԻ-ում 2020-2022թթ. ստացիոնար բուժում ստացած Կովիդ-19 վարակակիր հղի կանանց պատմագրերի ուսումնասիրությամբ: Ըստ հետազոտության արդյունքների՝ նկատվել է վաղաժամ ծննդաբերության հաճախականության, մեռելածնության ցուցանիշի բարձրացում, հղիության հիպերտենզիվ խանգարումների հաճախականության բարձրացում, սակայն հղիությունների՝ պրեէկլամպսիայով բարդացման հաճախականությունը փոփոխություն չի կրել: Կովիդ-19 դրական հղիներից նորածիններին վարակի փոխանցման հաճախականությունը համապատասխանում է միջազգային հետազոտությունների տվյալներին:

0424 Հայաստանի Հանրապետությունում արգանդի պարանոցի քաղցկեղի հաղթահարման ճանապարհային քարտեզը
Roadmap to accelerate the elimination of cervical cancer in Republic of Armenia

Վահե Տեր-Մինասյան[1], Հայկանուշ Գեոկչյան-Կժդրյան [1], Նարեկ Գալստյան[1], Անժելա Օհանյան[2], Լոսին Զիրոն[2]
[1]Առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան
[2]Հայ-ամերիկյան առողջության կենտրոն, Երևան, Հայաստան

Vahe Ter-Minasyan[1], Haykanush Geokchyan-Kzhdryan[1], Narek Galstyan[1], Anjela Ohanyan[2], Losin Ziron[2]
[1]National Institute of Health, Yerevan, Armenia
[2]Armenian-American Wellness Center, Yerevan, Armenia

Արգանդի պարանոցի քաղցկեղը (ԱՊՔ) կանանց շրջանում գրանցվող քաղցկեղների շարքում գրավում

է չորրորդ տեղը (Հայաստանի Հանրապետությունում՝ երկրորդ): Եվրոպական տարածաշրջանում ԱՊՔ-ի նոր դեպքերը տարեկան կազմում են մոտ 66,000, ԱՊՔ-ով պայմանավորված մահերը՝ շուրջ 30,000: Միաժամանակ, ԱՊՔ-ն գրեթե միշտ հնարավոր է կանխարգելել առաջնային կանխարգելման (մարդու պապիլոմավիրուսի [ՄՊՎ] դեմ պատվաստման) և երկրորդային կանխարգելման (սքրինինգային ծրագրերի ներդրման) արդյունքում: Ելնելով այս փաստից՝ պարզ են դառնում տարբեր երկրներում ԱՊՔ-ի դեմ պայքարի արդյունավետության տարբերությունները: Ներկայումս Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) անդամ երկրներին առաջարկում է մշակել ԱՊՔ-ի հաղթահարման ճանապարհային քարտեզ, որը հաջողությամբ իրագործելու դեպքում հիվանդացությունը հնարավոր կլինի նվազեցնել մինչև տարեկան 4 նոր դեպք, յուրաքանչյուր 100,000 կանանց շրջանում: Ներկայումս ՀՀ-ում տարեկան գրանցվում է ԱՊՔ-ի 250-270 նոր դեպք, ինչը գերազանցում է ակնկալվող արդյունքը շուրջ 9 անգամ: Տվյալ հետազոտության շրջանակներում վերլուծվել են ՀՀ-ում 2015-2021թթ. անցկացված ԱՊՔ-ի սքրինինգային ծրագրի արդյունքները, ինչպես նաև ներկայացվել է Առողջապահության ազգային ինստիտուտի ուռուցքաբանության ամբիոնի հիման վրա ստեղծված աշխատանքային խմբի առաջարկությունները՝ նոր և արդյունավետ ծրագրի ներդրման վերաբերյալ: ՀՀ-ում 2015-2021թթ. իրականացված սքրինինգային ծրագրի հիմքում ընկած է եղել 30-60 տարեկան կանանց արգանդի պարանոցի բջջաբանական հետազոտությունը (ՊԱՊ թեստ), առանց հաջորդիվ լրահետազոտությունների: Տարեկան հետազոտվող կանանց թիվը տատանվել է 18,000-52,000 շրջանակներում: Ծրագրի ընթացքում կատարված հետազոտություններում արձանագրվել են մի շարք թերություններ.

1. ՊԱՊ թեստը, որպես ցածր զգայունության մեթոդ չի բավարարում ժամանակակից պահանջներին, ինչի մասին ԱՀԿ-ն տեղեկացնում էր արդեն 2013թ.:
2. Կատարվող հետազոտությունների մասնագիտական մեկնաբանությունն եղել է անբավարար: Դրական ախտորոշումների վերանայման ժամանակ ախտորոշումը հաստատվել է միայն 27% դեպքերում:
3. Սքրինինգային ծրագրի արդեն վերջին տարում բջջաբանների միայն 25%-ն է հաղթահարել թեսթային քննությունը:
4. Սքրինինգային հետազոտության արդյունքում հայտնաբերված քաղցկեղների տոկոսը կազմել է ընդհանուր դեպքերի 0.97-7.41%: Արդյունքում՝ ինչպես հիվանդացությունը, այնպես էլ բարձիթողությունը մնացել են գրեթե նույն մակարդակի վրա՝ 257 դեպք և 64% բարձիթողություն (2015թ.), 251 դեպք և 67% բարձիթողություն (2021թ.):

Ստեղծված աշխատանքային խումբը ներկայացրել է սքրինինգային ծրագրի համապարփակ մոդել, որում կներառվի հետազոտությունների ամբողջ շղթան:

1. 25-60 տ. կանանց առաջնային հետազոտություն՝ ուղղված ՄՊՎ հայտնաբերմանը հավաստագրված լաբորատոր սարքավորման միջոցով:
2. Բացասական արդյունքի դեպքում կրկնակի հետազոտություն 5 տարի անց:
3. ՄՊՎ16 և ՄՊՎ18 ենթատեսակների դեպքում կոլպոսկոպիա և հյուսվածաբանական քննություն:
4. Այլ ենթատեսակների հայտնաբերման դեպքում իմունաբջջաբանական հետազոտություն և դրական արդյունքի դեպքում կոլպոսկոպիա և հյուսվածաբանական քննություն: Բացասական արդյունքի դեպքում կրկնակի հետազոտություն 3 տարի անց:

Ակնկալվում է հետազոտության կենտրոնացում, մարդկային գործոնի մինիմալացում, արդյունավետության բարձրացում ավելի քան 10 անգամ:

0034 Ախտաբանության և ինտերվենցիոն ռադիոլոգիայի համագործակցություն. ինչպես թիմային աշխատանքը հաղթահարեց ախտորոշման դժվարությունները

Collaboration of pathology and interventional radiology: how teamwork overcame the diagnostic difficulties

Արմեն Մխիթարյան[1], Արամայիս Գալումյան[2], Փառանձեմ Խաչատրյան[1], Վիկտորյա Սահակյան[1]
[1]Հիստոջեն գիտագործնական կենտրոն, Երևան, Հայաստան
[2]Ուիգմոր Քլինիք ԲԿ, Երևան, Հայաստան

Armen Mkhitaryan[1], Aramayis Galumyan[2], Parandzem Khachatryan[1], Viktorya Sahakyan[1]
[1]Histogen Scientific-Practical Center of Pathology, Yerevan, Armenia
[2]Wigmore Clinic MC, Yerevan, Armenia

Ներածություն. Հայաստանի Հանրապետությունում տարիներ շարունակ ներքին օրգանների օջախային ախտահարումներից թիրախավորված բիոպսիաների կատարումը հնարավոր չէր կամ խիստ սահմանափակ էր տարբեր պատճառներով: Եթե մակերեսորեն տեղադրված օրգանների՝ կրծքագեղձի, վահանաձև գեղձի, ավշահանգույցների, թքագեղձերի բիոպսիոն միջամտությունները խնդիր չէին բուժհաստատությունների համար, ապա ավելի խորանիստ օրգանների՝ լյարդի, թոքերի, կրծքավանդակի տարբեր օրգանների, երիկամների, մակերիկամների և այլ ներքին օրգանների օջախային ախտահարումներից բիոպսիոն նյութ ստանալը կապված էր տարբեր տեխնիկական և մասնագիտական դժվարությունների հետ:

Եղանակներ և արդյունքներ. 2020 թվականից սկսած Հիստոջեն պաթոլոգիայի գիտագործնական կենտրոնը Ուիգմոր Քլինիք բժշկական կենտրոնի հետ համատեղ կատարել է ներքին օրգանների օջախային ախտահարումներից ստացված 764 բիոպսիոն հետազոտություն, որոնցից 330-ը՝ լյարդի, 73-ը՝ ենթաստամոքսային գեղձի, 61-ը՝ թոքերի և 293 այլ տեղադրության օրգանների և հյուսվածքների: Ստացված բիոպտատները հետազոտվել են ոչ միայն հեմատոքսիլինով և էոզինով, այլ նաև 357 դեպքում կատարվել է իմունահիստոքիմիական հետազոտություն, ուռուցքների տարբերակիչ ախտորոշման համար:

Շատ դեպքերում հետազոտվող բիոպտատների հյուսվածքները հանդիսացել են նաև ուռուցքային հյուսվածքի ԴՆԹ-ում տարբեր մուտացիաների հայտնաբերման առարկա, այդպիսով հնարավորություն ստեղծելով ուռուցքային հիվանդություններով պացիենտներին ստանալ թիրախավորված՝ անհատականացված բուժում: Հիստոջենում մշակվել և ներդրվել են շատ կարևոր ներքին ուղեցույցներ, որոնք վերաբերում են ֆորմալինով ֆիքսված հյուսվածքների պարաֆինային բլոկերից ուռուցքային ԴՆԹ արդյունավետ անջատմանը, մաքրմանը և հետագա ՊՇՌ հետազոտությանը: Հետազոտված 764 դեպքերից 52-ում (6.8%) հյուսվածաբանական հետազոտությունից հետո առաջացել էր ռեբիոպսիայի անհրաժեշտություն՝ հյուսվածքի սակավության կամ ուռուցքային հյուսվածքի բացակայության պատճառով: Նշված բուժիմնարկների համագործակցության շրջանակներում առաջին անգամ Հայաստանում կատարվել է նաև ենթաստամոքսային գեղձի գլխիկի նորագոյացության արագ բջջաբանական ախտորոշում (Rapid On-Site Evaluation – ROSE) անմիջապես միջամտության սրահում:

Եզրակացություն. Այսպիսով, ժամանակակից բժշկությունը ուռուցքաբանության և ախտաբանության բնագավառներին պահանջներ է ներկայացնում, որոնք վերաբերում են ներքին օրգանների ուռուցքային հիվանդությունների արագ և ճշգրիտ ախտորոշմանը: Հիստոջեն և Ուիգմոր կենտրոնների համատեղ աշխատանքը ախտաբանության և ինտերվենցիոն ռադիոլոգիայի արդյունավետ համագործակցության վառ օրինակ է, որը որակապես չի զիջում արտերկրում կիրառվող նմանատիպ գործունեությանը, ապահովում է հայաստանցի հիվանդների՝ իրենց ընտանիքներին մոտ, իրենց հայրենիքում անհատակացված բուժման հնարավորությունը:

0367 Լեյկեմիայով հիվանդ երեխաների աղիքային միկրոբիոտայի և հակաբիոտիկային կայունության գնահատումը քիմիաթերապիայի ընթացքում

Evaluation of gut microbiota and antibiotic resistance of children with leukemia during chemotherapy

Դիանա Սողոմոնյան[1,2], Անահիտ Զախարյան[1], Լուսինե Քրմոյան[1], Լալա Վաղարշակյան[1], Օլգա Դավթյան[2], Սիլվա Գաբրիելյան[2], Սամվել Դանելյան[1]
[1]ՀՀ ԱՆ Պրոֆ. Ռ.Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն, Երևան, Հայաստան
[2]ՀՀ ԱՆ Ակադ. Ս.Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան

Diana Soghomonyan[1,2], Anahit Zakharyan[1], Lusine Krmoyan[1], Lala Vagharshakyan[1], Olga Davtyan[2], Silva Gabrielyan[2], Samvel Danelyan[1]
[1]Yeolyan Hematology Center MoH RA, Yerevan, Armenia
[2]National Institute of Health MoH RA, Yerevan, Armenia

Ներածություն. Աղիքային միկրոբիոտային նվիրված հետազոտությունները միշտ եղել են գիտնականների ուշադրության կենտրոնում: Մանրէաբանական հետազոտությունների մոլեկուլյար մեթոդների զարգացումը վերջին տասնամյակներին հնարավորություններ են ստեղծել տարբեր հիվանդությունների ժամանակ ընդլայնել ուսումնասիրվող աղիքային միկրոբիոտայի տեսակային կազմը: Հայտնի է, որ ոչ միայն հակաբակտերիալ թերապիան է ազդում աղիների մանրէային կազմի վրա, այլ նաև քիմիաթերապևտիկ դեղամիջոցները: Գրականության մեջ առկա են տվյալներ, որ լեյկեմիայով հիվանդների մոտ քիմիաթերապիայի ընթացքում տեղի է ունենում աղիքային լորձաթաղանթի վնասում և միկրոբիոտայի ընկճում: Նման ուսումնասիրություններ Հայաստանի ազգաբնակչության շրջանում երբևիցե չեն իրականացվել, ուստի հարկ ենք համարել ուսումնասիրել աղիքային միկրոբիոտայի փոփոխությունը լեյկեմիայով հիվանդ երեխաների մոտ քիմիաթերապիայից առաջ և հետո:

Եղանակներ. Կատարվել է քիմիաթերապիայից առաջ և հետո՝ վերականգնողական փուլում առաջնակի ախտորոշված 5 հիվանդների՝ կղանքային նմուշների հավաքագրում, ԴՆԹ անջատում և սառեցում -80°C պայմաններում, այնուհետ կատարվել է անջատված ԴՆԹ սեքվենավորում: Որոշվել է բակտերիաների տաքսոնոմիական պատկանելությունը, բազմազանությունը, հակաբիոտիկների նկատմամբ կայունությունը, ինչպես նաև՝ հարաբերական քանակները՝ համապատասխան կենսաինֆորմատիկական մեթոդներով: Քիմիաթերապիան կատարվել է ALL-IC BFN-2009 կանոնակարգի համաձայն:

Արդյունքներ. Սեքվենավորման արդյունքում հայտնաբերվել է, որ քիմիաթերապիայի ընթացքում մանրէների հիմնական կուլտիվացվող տեսակները ընկճվում են, և գերակշռում են տեսակներ, որոնց կլինիկական նշանակության վերաբերյալ տվյալները առայժմ քիչ են (Lachnospiraceae spp.), աճում է նաև անօդակյաց մանրէների քանակը (Bacteroides spp.), գրեթե 40%-ով աճում է հակաբակտերիալ դեղամիջոցների նկատմամբ կայունությունը:

Եզրակացություն. Ստացված տվյալները համադրելի են գրականության, այլ երկրներում իրականացված ուսումնասիրությունների տվյալների հետ: Հետազոտությունների շարունակական լինելու պարագայում հնարավորություն կընձեռնվի հետագայում իրականացնել լեյկեմիայով հիվանդ երեխաների մոտ քիմիաթերապիայի ժամանակ առաջացող ինֆեկցիոն բարդությունների գնահատում և կառավարում:

0389 Կլոստրիդիալ վարակի կամ Կլոստրիդիում դիֆիցիլեի հանդիպման հաճախականությունը մանկական ուռուցքաբանության/արյունաբանության ոլորտում

The incidence of Clostridial infection or Clostridium difficile in pediatric oncology/hematology

Վերա Մխիթարյան
ՀՀ ԱՆ պրոֆ. Ռ.Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն, Երևան, Հայաստան

Vera Mkhitaryan
Yeolyan Hematology Center, Yerevan, Armenia

Ներածություն. Կլոստրիդիում դիֆիցիլեն (C. difficile) կամ կլոստրիդիալ վարակը սպոր առաջացնող, անաերոբ բակտերիա է: Համարվում է նաև ներհիվանդանոցային ինֆեկցիայի աղբյուր, որն ավելի հաճախ հանդիպում է քիմիաթերապիայի հետևանքով առաջացած նեյտրոպենիայի և երկրատև հակաբակտերիալ բուժման արդյունքում աղիքային միկրոֆլորայի խախտման հետևանքով: Ներհիվանդանոցային ինֆեկցայի կանխարգելման համար կարևոր և էական դեր ունի բուժքույրական խնամքը և հիվանդի մեկուսացումը:

Եղանակներ. Կատարվել է ռետրոսպեկտիվ հետազոտություն Արյունաբանական կենտրոնի մանկական արյունաբանական բաժանմունքում բուժում ստացող հիվանդների շրջանում: Արդյունք. Արյան հիվանդացությունների և քաղցկեղի մանկական կենտրոնում 2022 թ. ախտորոշվել է սուր լիմֆոբլաստային լեյկոզի 33 դեպք, որոնց 91%-ը (n=30) եղել է B-բջջային, իսկ 9%-ը (n=3)՝ T-բջջային տարբերակ: Հիվանդների 42%-ը (n=14) եղել են արական, իսկ 58%-ը (n=19)՝ իգական սեռի: Բոլոր հիվանդները ստացել են քիմիոթերապիա՝ ըստ ALLIC BFM (Acute lymphoblastic leukemia inter-continental Berlin–Frankfurt–Munster) 2009 ուղեցույցի: Մեկ տարվա ընթացքում բուժվող հիվանդների շրջանում հայտնաբերվել է 8 դեպք, որից 1 դեպքը գնահատվել է ֆուլմինանտ: Բոլոր 8 հիվանդների մոտ դիտվել են ախորժակի վատացում, սրտխառնոց, որովայնի փքվածություն, ցավեր, բարձր ջերմություն՝ լուծով: Մեկ հիվանդի մոտ դիտվել է արյունոտ լուծ, 1 հիվանդի մոտ դիտվել է սեպսիս: Բոլոր հիվանդները մեկուսացավել են, դռան վրա փակցվել է զգուշացնող նշան, որ շփումը արգելվում է: Հիվանդասենյակի դռան մոտ տեղադրվել է սեղանիկ, որի վրա եղել են ձեռնոցներ, ախտահանիչ նյութեր, իսկ սեղանի տակ՝ տարա, որտեղ կարող են թողնվել օգտագործված ձեռնոցները և այլ պարագաներ: Ձեռքերի խնամք ,օգտագործել անտիսեպտիկ միջոցներ, կրել ձեռնոցներ: Կենսական կարևոր ցուցանիշները չափելիս հետևել, որ այդ իրերը ախտահանվեն (ճնշման ապարատ, ստետոսկոպներ, սատուրոմետր, ջերմաչափեր և այլն), ախտահանել դռների բռնակները, զուգարանները, այն ամենը, ինչի հետ եղել է շփում: Ինչպես նաև դռների վրա փակցվել է նախազգուշացնող և վարակի տարածումը կանխող ուղեցույց: Դասընթացներ ծնողների հետ՝ ինչպիսի վարակ է, ինչպես է փոխանցում և ինչպես կանխարգելել:

Եզրակացություն. Կլոստրիդիում դիֆիցիլեն գտնվում է յուրաքանչյուրի օրգանիզմում, այն կարող է բազմանալ և առաջացնել լուրջ հետևանքներ, եթե կան նպաստավոր գործոններ: Հիվանդանոցում երկարատև հակաբիոտիկներով և քիմիաթերապիայով բուժում ստացող հիվանդները թիրախային են: Հետազոտությունը անցկացվել է 33 երեխաների շրջանակում, որոնց մոտ ախտորոշվել է լեյկեմիա: Երկարատև քիմիաթերապիայի ընթացքում, ստացած հակաբիոտիկները նպաստել են կլոստրիդիայի առաջացմանը և բազմացմանը՝ առաջացնելով բարդություններ: Որպես վարակի կանխման միջոց խորհուրդ է տրվում, վարակի տարածումից խուսափելու համար, երեխաների մեկուսացում, ձեռքերի՝ օճառով հաճախակի լվացում, ախտահանում:

0394 Կենտրոնական երակային կաթետեր

Central venous catheter

Լուսինե Թորոսյան, Մանե Գիջլարյան
ՀՀ ԱՆ պրոֆ. Ռ.Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն, Երևան, Հայաստան

Lusine Torosyan, Mane Gijlaryan
Yeolyan Hematology Center, Yerevan, Armenia

Ներածություն. Կենտրոնական երակային կաթետերները (ԿԵԿ) մանկական արյունաբանական և ուռուցքաբանական բաժանմունքների կարևոր բաղադրիչ են քիմիաթերապիայի, պարէնտերալ սնուցման և արյան բաղադրամասերի փոխներարկման համար: ԿԵԿ-երի երկարատև օգտագործումը կապված է վարակի բարձր ռիսկի և ԿԵԿ-ի դիսֆունկցիայի հետ:

Եղանակներ. Մանկական արյունաբանական և ուռուցքաբանական բաժանմունքներում հետազոտվել է 7 հիվանդ՝ հետևելով ԿԵԿ-ի հետ կապված բարդություններին: ԿԵԿ-ի անցանելիությունը ստուգվել է ամեն օր: Վիրակապը փոխվել է 3 օրը մեկ: Վիրակապության համար օգտագործվել է թափանցիկ կպչուն սպեղանի (Tegoderm), ստերիլ վիրակապ: 2%-ոց քլորհեքսիդինի լուծույթով և 70%-ոց սպիրտի լուծույթով ԿԵԿ-ի շուրջը մշակվել է 30վ և այն լվացվել է հեպարինի լուծույթով: ԿԵԿ-ի ջրակայուն վիրակապի (Tegaderm) օգտագործման ժամանակ դիտվել են հետևյալ բարդությունները՝ մաշկի կարմրություն, բորբոքումներ, ալերգիկ երևույթներ:

Արդյունքներ. Հետազոտության մեջ ընդգրկվել է 7 երեխա (տարիքը 5-10 տարեկան): Այդ հիվանդների մոտ ախտորոշվել է սուր լիմֆոբլաստային լեյկեմիա: Տեղադրվել է երկլուսանցք ԿԵԿ: Նրանցից երկուսի մոտ դիտվել են բարդություններ: Առաջին հիվանդի մոտ զարգացել է վարակ կապված արյան հոսքի գծի հետ, մյուսի մոտ՝ տեղային հեմատոմա: Երկու դեպքում էլ ԿԵԿ-երը հեռացվել են, արյունահոսություն չի նկատվել: ԿԵԿ-ի հեռացումից հետո առաջին հիվանդը ունեցել է ջերմության բարձրացում, արյան ցանքսը եղել է դրական, մյուս հիվանդը ջերմել է ԿԵԿ-ի հեռացումից 2 օր անց: Մաշկային բարդություններից խուսափելու համար ջրակայուն սպեղանին փոխարինվել է թանզիֆային վիրակապով:

Եզրակացություն. ԿԵԿ-երը մանկական արյունաբանական և ուռուցքաբանական բաժանմունքներում օգտագործում ենք 2019թ.-ից առ այսօր: Ծայրամասային երակների մշտական օգտագործումը շատ հաճախ հանգեցնում է վնասվածքների, այրվածքների, ֆլեբիտների, սպիերի: ԿԵԿ-երի կիրառումն ունի 70% դրական արդյունք, նվազում են խնդիրները, ունենում ենք անվտանգ աշխատանք և ժամանակի խնայողություն:

0054 Բնածին կատարակտով պայմանավորված ամբլիոպիայի վարումը
Management of amblyopia due to congenital cataract

Նոնա Գալինյան, Արտաշես Զիլֆյան
Զիլֆյան աչքի խնամքի կենտրոն, Երևան, Հայաստան

Nona Galinyan, Artashes Zilfyan
Zilfyan Eye Care Center, Yerevan, Armenia

Ներածություն. Ամբլիոպիան կամ «ծույլ աչքը» ախտաբանական վիճակ է, որի դեպքում նվազում է տեսողության սրությունը մեկ, կամ ավելի հազվադեպ, երկու աչքում: Ամբլիոպիայի տեսակներից է օբսկուրացիոն ամբլիոպիան, որը կարող է առաջանալ բնածին կատարակտի հետևանքով: Հինգ տարեկան տղա երեխան դիմել է Զիլֆյան աչքի խնամքի կենտրոն՝ գանգատվելով ձախ աչքի ցածր տեսողությունից: Կատարվել են հետևյալ հետազոտությունները. վիզիոմետրիա՝ աջ աչք = 0.9-1.0, ձախ աչք = 0.3 (կորեկցիայով = 0.6), ավտոռեֆրակտոմետրիա՝ աջ աչք = սֆ(+)1.25, ցիլ(+)0.25, աքս100, ձախ աչք = սֆ(-)0.75, ցիլ(-)0.5, աքս170, տոնոմետրիա՝ աջ աչք = 18 մմ ս.ս., ձախ աչք = 19 մմ ս.ս., առաջաիետին առանցքի չափում՝ աջ աչք = 22.29 մմ, ձախ աչք = 22.62 մմ, բիոմիկրոսկոպիա, օֆթալմոսկոպիա (ցիկլոպլեգիայով):

Արդյունքներ: Օֆթալմոսկոպիայի ընթացքում ախտորոշվել է սկսվող բնածին կատարակտ, որի պատճառով առաջացել էր «ծույլ աչք»: Նշանակվել է՝ ակնոցային կորեկցիա, ֆիզիոթերապևտիկ բուժում, օկլյուզիա:

Եզրակացություն: Վաղ ախտորոշած ամբլիոպիան կարելի է բուժել ակնոցի, ֆիզիոթերապիայի և օկլյուզիայի միջոցով:

0084 Չոր աչք համախտանիշ. ախտորոշման և բուժման ժամանակակից մոտեցումները
Dry Eye Disease: new approaches of diagnosis and treatment

Հերմինե Սաղոյան, Արտաշես Զիլֆյան
Զիլֆյան Աչքի խնամքի կենտրոն, Երևան, Հայաստան

Hermine Saghoyan, Artashes Zilfyan
Zilfyan EyeCare center, Yerevan, Armenia

Ներածություն. Չոր աչքի համախտանիշ (ՉԱՀ) զարգանում է այն դեպքում, երբ եղջերաթաղանթի և շաղկապենու մակերեսին արցունքային շերտը բացակայում է կամ ցածր որակի է: Արդյունքում աչքի մակերեսը վատ է խոնավեցվում , ինչը առաջացում է անհարմարություն, տեսողության հետ կապված խնդիրներ, եղջերաթաղանթի և շաղկապենու վնասում: Վերջին տարիներին «չոր աչքի» համախտանիշի հայտնաբերման հաճախականությունը աճել է 4 անգամ: Այն ազդում է մարդկանց 5-34%-ի վրա՝ կախված նրանից, թե բնակչության որ շրջանում է դիտարկվում: Զարգացած երկրների բնակչության շուրջ 17%-ի մոտ առկա է վերը նշված համախտանիշը: Տարեցների շրջանում տարածվածությունը 70%-ից ավելի է: Այն մեծապես կապված է ռասայի, տարիքի և սեռի, մասնագիտական առանձնահատկությունների, կիրառվող դեղորայքի, ինչպես նաև կերատոռեֆրակցիոն վիրահատությունների լայն կիրառման հետ: Նպատակ. Ուսումնասիրել մեր կողմից մշակված և առաջարկված բուժման ալգորիթմի արդյունավետությունը ՉԱՀ-ով հիվանդների մոտ վաղ և ուշ շրջանում:

Եղանակներ. Հետազոտության մեջ ընդգրկվել է 122 հիվանդ, որից 50-ը I-II° ՉԱՀ-ով, 50-ը III° ՉԱՀ-ով, իսկ 22-ը՝ IV° ՉԱՀ: Ընդգրկվելու պահին, 2 շաբաթ անց և 3 ամիս անց կատարվել է ՉԱՀ-ի ախտորոշում Lacry-Diag սարքով, Dry eye Test մեթոդով: Հետազոտության մասնակիցներին նշանակվել են աչքի խոնավեցնող կաթիլներ՝ 1 կաթիլից՝ օրը 5 անգամ, երկու շաբաթ տևողությամբ և աչքի տաքացնող դիմակ (Graphine eye Mask) 6 օր անընդմեջ՝ 25 ր տևողությամբ: 2 շաբաթ անց և 3 ամիս անց կրկնվել է ողջ դիագնոստիկան և համեմատվել նախնական արդյունքների հետ:

Արդյունքներ. Երկու շաբաթ անց II° ՉԱՀ 50 հիվանդի մոտ դիտվել է առողջացում: III° ՉԱՀ 50 հիվանդի մոտ դիտվել է բարելավում, III°-ը դարձել է I°: IV աստիճանի ՉԱՀ 22 հիվանդի մոտ դիտվել է բարելավում, 12-ի մոտ IV°-ը դարձել է II°, 10 հիվանդի մոտ՝ I°: 3 ամիս անց տվյալները մնացել են անփոփոխ, վատացում չի դիտվել:

Եզրակացություն. Վերոնշյալ բուժման մեթոդի կիրառումը՝ արհեստական արցունքի կաթիլների համակցությունը հնարավորություն են տալիս բարելավել կամ բուժել չոր աչքի համախտանիշը:

0097 Յուվենիլ գլաուկոմա. ինչպես խուսափել գերախտորոշումից
Juvenile Glaucoma: how not to overdiagnose

Լուսինե Սումբուլյան, Արտաշես Զիլֆյան, Աիդա Աբովյան
Շենգավիթ ԲԿ, Երևան, Հայաստան

Lusine Sumbulyan, Artashes Zilfyan, Aida Abovyan
Shengavit MC, Yerevan, Armenia

Ներածություն. Գլաուկոման աչքի քրոնիկ նեյրոդեգեներատիվ հիվանդությունների խումբ է, որը բնութագրվում է խորացող տեսողական նևրոպաթիայով, տե-

սադաշտի յուրահատուկ նեղացմամբ, իսկ ներակնային ճնշման (ՆԱՃ) բարձր մակարդակը ռիսկի գործոն է: Յուվենիլ գլաուկոման հազվադեպ հանդիպող և, սովորաբար, ավելի ծանր ընթացքով գլաուկոմայի տարատեսակ է՝ վաղ դրսևորմամբ (3-40 տարեկան):

Եղանակներ. Յուվենիլ գլաուկոմայի հանդիպման հաճախականությունը 0.38 է 100,000 բնակչության հաշվով: Կատարվել են հետևյալ հետազոտությունները՝ վիզիոմետրիա, տոնոմետրիա, օֆթալմոսկոպիա, պերիմետրիա, գոնիոսկոպիա, օպտիկ կոհերենտ տոմոգրաֆիա:

Արդյունքները. 2021-2023թթ. ընթացքում Շենգավիթ ԲԿ-ում հետազոտված և բուժված պացիենտներից երկուսը (33 տարեկան տղամարդ և 20 տարեկան օրիորդ) դիմել են՝ գանգատվելով աչքերում ծանրության, ցավի և դիսկոմֆորտի զգացողությունից: Տղամարդու մոտ օֆթալմոսկոպիայով նկատվել են երկու աչքերում տեսանյարդի սկավառակի համաչափ էքսկավացիաներ, տոնոմետրիայի տվյալներով՝սահմանային ՆԱՃ, պերիմետրիան՝ առանց արտահայտված փոփոխությունների: Երկրորդ պացիենտի մոտ օֆթալմոսկոպիայով նկատվել են երկու աչքերում տեսանյարդի սկավառակի համաչափ, թեք էքսկավացիաներ, տոնոմետրիայի տվյալներով՝ նորմալ ՆԱՃ, պերիմետրիան՝ քիչ փոփոխված:

Ամփոփում. Զեկույցի նպատակն է ցույց տալ, որ երկու նմանատիպ գանգատներով և տվյալներով պացիենտներից մեկի մոտ «գլաուկոմա» ախտորոշումը հաստատվել է, մյուսի մոտ՝ հերքվել: Այսպիսով, գլաուկոմայի ժամանակին և ճիշտ ախտորոշումը, ինչպես նաև դրա զարգացման մեխանիզմների վերլուծությունը մեծ նշանակություն ունեն երեխաների և երիտասարդների մոտ տեսողության պահպանման համար:

0282 Տարիքային մակուլյար դեգեներացիայի թաց փուլի վարման ժամանակակից ու ակտուալ ալգորիթմները և դրանց համեմատությունը

The comparison of modern and actual algorithms for the management of the wet age-related macular degeneration

Արտաշես Զիլֆյան[1,2], Գոհար Ալեքսանյան[2]
[1]Զիլֆյան Աչքի խնամքի կենտրոն, Շենգավիթ ԲԿ, Երևան, Հայաստան
[2]Առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան

Artashes Zilfyan[1,2], Gohar Aleksanyan[2]
[1]Zilfyan Eye Care Center, Shengavit MC, Yerevan, Armenia
[2]National Institute of Health, Yerevan, Armenia

Ներածություն. Տարիքային մակուլյար դեգեներացիան (ՏՄԴ), մասնավորապես իր թաց կամ, այլ կերպ ասած, էքսուդատիվ փուլը, աշխարհում տեսողության կորստի ու հաշմանդամության առաջատար պատճառներից է: Երկար տարիներ համարվելով անբուժելի, այն վերջին երկու տասնամյակում ենթարկվել է բազմաթիվ հետազոտությունների, որոնց շնորհիվ հայտնաբերվել են պաթոգենեզի հիմնական շարժիչ գործոնները VEGF-1 (Vascular Endothelial Growth Factor-1), VEGF-2 (Vascular Endothelial Growth Factor-2), PGF (Platelet Growth Factor), և որոշ ուղիներ դրանց շրջանցելու և հիվանդությունը կառավարելի դարձնելու համար: Չնայած ներկայիս կիրառվող սահմանապակ թվով դեղորայքի (anti-VEGF ներակնային ներարկման պրեպարատներ), բուժման և հսկողության մոտեցումները տարբերվում են: Ժամանակակից ակնաբուժական համայնքի կողմից կատարվող ուսումնասիրությունները միտված են երկարաձգել ներարկումների միջև ինտերվալը, միաժամանակ ստանալով երկարատև, կայուն արդյունք: Ենթադրվում է նաև, որ այս մոտեցումը կլավացնի բուժառուների հակվածությունը բուժմանը:

Եղանակներ. Նյութը պատրաստելու ընթացքում կատարվել է նորագույն մոտեցումների, հետազոտությունների, գրականության, հոդվածների, ուղեցույցների ուսումնասիրություն և վերլուծություն, կատարվել է համեմատություն մեր փորձի հետ, բացահայտվել են յուրաքանչյուր մոտեցման առավելությունները և թերությունները:

Արդյունքներ. Վերլուծության արդյունքում պարզվել է, որ Treat and Extend մոտեցումը թույլ է տալիս ստանալ մակուլյար այտուցի և արյունազեղումների վերացման, թաց ՏՄԴ կայունացման, բարդությունների կանխարգելման և պացիենտի հետ համագործակցության հնարավորինս լավագույն արդյունքը:

Եզրակացություն. Որպես եզրակացություն՝ ՏՄԴ-ի թաց ձևի բուժումն ու վարումը ակնաբույժից պահանջում է իր գործունեության վերահսկում, բուժման արդյունքների մշտական վերլուծություն, ինչպես նաև արդի մոտեցումների ու ուսումնասիրությունների արդյունքների մասին տեղեկացվածություն և դրանց ըստ ցուցման կիրառում:

0398 Տեսողության սուր կորստով անոթային խցանումները և նյարդա-ակնային դրսևորումները Կովիդ-19-ի ժամանակ

Vascular occlusion and neuro-ophthalmic manifestations with acute vision loss in COVID patients

Անուշ Ղարիբյան, Սարգիս Ղազարյան, Մարիամ Գյուլբուդաղյան, Թամարա Մկրտչյան
Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ, Երևան, Հայաստան

Anush Gharibyan, Sargis Ghazaryan, Mariam Gyulbudaghyan, Tamara Mkrtchyan
Surb Grigor Lusavorich MC, Yerevan, Armenia

Ներածություն. Նոր կորոնավիրուսային հիվանդությունն առաջացնում է մի շարք ակնային դրսևորումներ, այդ թվում ավելի հաճախ աչքի առաջային հատվածի ախտահարումներ՝ կոնյուկտիվիտ, կերատիտ, էպիսկլերիտ, «չոր աչքի» համախտանիշ, ներակնային

և ներականակապճային բորբոքումներ, ինչպես նաև անոթային թրոմբոէմբոլիկ բարդություններ՝ ընդհուպ տեսողության կորուստ: Վերջինիս մասին տվյալները ներկայացված են ստորև:

Եղանակներ. Հետազոտությունում ընդգրկվել են պոլիմերազային շղթայական ռեակցիայով (ՊՇՌ) հաստատված Կովիդ-19 դրական, ծանր կլինիկական ընթացքով դեպքերը մեկ (Սուրբ Գրիգոր լուսավորիչ) բժշկական կենտրոնից: Հիվանդների հետազոտությունները կատարվել են նեղ մասնագետի՝ ակնաբույժի կողմից, ինչպես նաև կատարվել է բոլոր բժշկական հետազոտությունների՝ լաբորատոր և գործիքային տվյալների վերլուծություն՝ գնահատելու համար հիվանդների կլինիկական վիճակը, ուղեկցող հիվանդությունների առկայությունը, դեմոգրաֆիկ տվյալները:

Արդյունքներ. Կլինիկայում բուժում ստացած ընդհանուր 32,000 կովիդ-դրական հիվանդներից 4-ի մոտ դիտվել է տեսողության սուր կորուստ, որպես անոթային խցանման առաջին դրսևորում: 3 հիվանդի մոտ տեսողության կորուստը եղել է միակողմանի, իսկ 1-ի մոտ՝ երկկողմանի, որտեղ առկա էր նաև ներականակապճային բորբոքում: Կին/տղամարդ հարաբերությունը եղել է 3/1, միջին տարիքը՝ 65տ., 3-ն ունեցել է շաքարային դիաբետ: Բոլոր հիվանդները ստանում էին հակակոագուլյացիոն բուժում: Բոլորի մոտ եղել է նաև տոտալ օֆթալմոպլեգիա, պտոզ, պրոպտոզ և հարաբերական աֆերենտ բբային դեֆեկտ և հաջորդիվ զարգացել է գլխուղեղի արյան շրջանառության սուր խանգարում, որոնցից 3-ը՝ մահացու ելքով:

Եզրակացություն. Կորոնավիրուսային հիվանդությունն ունենում է ակնային տարբեր դրսևորումներ, և անկախ հակակոագուլյանտների օգտագործումից նաև անոթային խցանման դեպքեր՝ նյարդա-ակնային դրսևորումներով և տեսողության սուր կորստով, որոնք կարող են պայմանավորված լինել կորոնավիրուսային վարակի թրոմբոէմբոլիկ բարդությամբ:

0228 Քայլվածքի գործիքային հետազոտությունը մանկական ուղեղային կաթվածով հիվանդների մոտ
Instrumented Gait Analysis for Pateints with Cerebral Palsy

Դավիթ Սեկոյան[1,2], Կարեն Քոլոյան[1], Սևան Երիցյան[3], Հովհաննես Դաշտոյան[1,2]
[1]Ուիգմոր Գրուփ, Երևան, Հայաստան
[2]Քլինչոյս պայմանագրային հետազոտական կազմակերպություն, Երևան, Հայաստան
[3]Մուրացան համալսարանական մանկական հիվանդանոց, Երևան, Հայաստան

Davit Sekoyan[1,2], Garen Koloyan[1], Sevan Yeritsian[3], Hovhannes Dashtoyan[1,2]
[1]Wigmore Group, Yerevan, Armenia
[2]ClinChoice Contract Research Organization, Yerevan, Armenia
[2]Muratsan University Children's Hospital, Yerevan, Armenia

Ներածություն. Մանկական ուղեղային կաթվածը (ՄՈւԿ) նյարդամկանային հիվանդություններից առավել հաճախ հանդիպող ախտաբանությունն է: Չնայած նրան, որ հիվանդությունը պրոգրեսիվող չէ, այնուամենայնիվ՝ աճի հետ երեխաների մոտ առաջանում են հոդերի կոնտրակտուրաներ և վերջույթների դեֆորմացիաներ, ինչից տուժում են հիվանդի ֆունկցիոնալ հնարավորությունները և քայլելու կարողությունները: Կոնտրակտուրաների և դեֆորմացիաների մեծամասնությունը պահանջում է վիրահատական բուժում: Ներկայումս համընդհանուր ընդունված է բոլոր կոնտրակտուրաների և դեֆորմացիաների միանվագ բազմամակարդակ վիրահատական շտկումը: Միայն կլինիկական զննումը թույլ չի տալիս հայտնաբերել հիվանդի բոլոր խնդիրները, այդ իսկ պատճառով 80-ականներին սկսեցին կիրառել գործիքային հետազոտության մեթոդներ, այսպես կոչված, քայլվածքի հետազոտման լաբորատորիաներում: Քայլվածքի հետազոտությունը թույլ է տալիս քայլելու ընթացքում չափել յուրաքանչյուր հոդի շարժումը բոլոր 3 հարթություններում, ինչպես նաև իրականացնել ստորին վերջույթների հիմնական մկանների էլեկտրոմիոգրաֆիա: Հետազոտության տվյալները թույլ են տալիս իրականացնել քայլվածքի խանգարումների ճշգրիտ գնահատում և վիրահատական բուժման պլանավորում:

Եղանակներ. 2017 թվականին Ուիգմոր Քլինիքի հիման վրա ստեղծվել է քայլվածքի առաջին կլինիկական հետազոտության լաբորատորիան Հայաստանում: Ներկայումս բոլոր հիվանդները, որոնք ունակ են քայլելու (թե՛ ինքնուրուն, թե՛ օժանդակ սարքերի օգնությամբ) հետազոտվում են ինչպես մինչև վիրահատությունը, այնպես էլ վիրահատությունից և վերականգնողական բուժումից հետո՝ բուժման արդյունքները գնահատելու համար: Քայլվածքի լաբորատորիայի (ՔԼ) շնորհիվ զգալի փոփոխվել են ՄՈւԿ-ով երեխաների բուժման մոտեցումները: Եթե ժամանակին ավելի շատ իրականացվում էին փափուկ հյուսվածքային վիրահատություններ, ապա այժմ շտկումներն իրականացվում են բազմառանցքային ոսկրահատումներով, ինչը թույլ է տալիս վերացնել ինչպես կոնտրակտուրաները, այնպես էլ պտտական դեֆորմացիաները՝ պահպանելով մկանային ուժը:

Արդյունքներ. 2017-2022թթ. ՔԼ-ում հետազոտվել է 404 հիվանդ: 348-ը ունեցել են նյարդամկանային ախտաբանություն, որից 318-ի ախտորոշումը եղել է ՄՈւԿ, 12-ինը՝ ուղեղային կաթված, 18-ինը՝ spina bifida, իսկ 53-ն ունեցել են այլ ախտաբանություններ: Համեմատելով ՄՈւԿ-ով հիվանդների վիրահատությունների բնույթը՝ մինչև ՔԼ գործարկումը, նկատվել է զգալի փոփոխություն վիրահատությունների տեսակների միջև: Եթե մինչ այդ 267 հիվանդից 90-ին (34%) կատարվել է ծնկան ծալիչների երկարացում և ընդամենը 8 հիվանդի (3%) ազդրի հեռադիր տարածիչ ոսկրահատում, իսկ 11-ին (4%) ապապտտական ոսկրահատում, ապա 2017թ.-ից ի վեր 297 հիվանդից միայն 21-ին (7%) է ցուցվել ծնկատակի ծալիչների երկարացում, իսկ ոսկրային վիրահատություններ իրականացվել են 88 (30%) հիվանդի մոտ:

Եզրակացություն. ՔԼ կիրառությունը թույլ է տվել չափել քայլվածքը և գնահատել բուժման արդյունքները: Այն զգալի փոխել է վիրահատական բուժման մարտավարությունը և մոտեցումները նյարդամկանային հիվանդություններով հիվանդների մի ստվար խմբի մոտ և թույլ է տվել բարելավել նրանց ֆունկցիոնալ վիճակը և կյանքի որակը:

A023 Նեյրոսուրալ լաթերի կիրառումը ոտնաթաթերի խնայողական անդամահատումների ժամանակ

Implementation of neurosural flaps in sparing foot amputations

Ջոն Կարապետյան, Խաչատուր Կարապետյան
Գյումրու ԲԿ, Գյումրի, Հայաստան

John Karapetyan, Khachatur Karapetyan
Gyumri Medical Center, Gyumri, Armenia

Ներածություն. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում քիչ չեն ցրտահարման դեպքերը, որոնք հաճախ հանդիպում են անօթևան, թափառող և քրոնիկ ալկոհոլիզմով տառապող մարդկանց մոտ: Հատկապես մեծ տոկոս են կազմում ստորին վերջույթների գանգրենոզ բարդությունները՝ III° ցրտահարության ժամանակ: Հիվանդները, որոնք ցրտահարության կապակցությամբ դիմում կամ տեղափոխվում են տարբեր վայրերից, արդեն ունեն անդամահատման կարիք: Տարեկան ցրտահարությամբ հիվանդանոց են դիմում միջինը 5-6 հիվանդ: Գերակշռող մասի մոտ առկա է մատների և կրունկի շրջանի փափուկ հյուսվածքների մեռուկացում:

Եղանակներ. Մեր պրակտիկայում, նախկինում կատարվել են անդամահատումներ սրունքի կամ ազդրի մակարդակից: Առանց ազգականի կամ անօթևան հիվանդները հետագայում բարդույթների առաջ են կանգնում կապված խնամքի և կենցաղային մի շարք կարիքների հարցով: Նշված իրավիճակից դուրս գալու նպատակով մեզ մոտ կիրառվում է ոտնաթաթերի խնայողական անդամահատումներ՝ կիրառելով նեյրոսուրալ լաթերն անոթային ոտիկի վրա: Թաթի մեռուկացած հատվածն անդամահատվում է ընդունված մեթոդներից մեկով, կատարվում են կրունկի փափուկ հյուսվածքների նեկրէկտոմիաներ: Փափուկ հյուսվածքների առաջացած դեֆեկտը կրունկի շրջանում կամ թաթի ծայրատը փակվում է նեյրոսուրալ լաթի տեղադրմամբ, պահպանելով կրունկոսկրը և երբեմն էլ նախագարշապարային որոշ ոսկրերը, հիվանդին տալով հետագայում քայլելու հնարավորություն առանց պրոթեզավորման անհրաժեշտության:

Արդյունքներ. Ցրտահարության պատճառով, եթե հիվանդի մոտ առկա է անոթային սնուցման խնդիրներ (որը գրեթե միշտ ուղեկցում է), կիրառվում են դեղորայքային կամ վիրահատական սիմպաթէկտոմիաներ, որոնք նույնպես տալիս են բավարար և լավ արդյունքներ: Խնայողական ամպուտացիա կատարել ենք 31 հիվանդի մոտ: 11-ի մոտ կատարվել է վերքերի սանացիա, VAC-ի (Vacuum-Assisted Closure) կիրառում և ռեամպուտացիա ըստ Պիրոգովի: 12-ի մոտ կատարվել է վերքի սանացիա, VAC-ի կիրառում և պլաստիկա սուրալ լաթով: 4-ի մոտ՝ VAC և ազատ դերմոպլաստիկա:

Եզրակացություն. Արդյունքները գոհացուցիչ են: Իսկ 4 հիվանդների մոտ կատարվել են ռեամպուտացիաներ ավելի բարձր մակարդակից:

A021 Քրոնիկ հետվնասվածքային օստեոմիելիտ

Chronic post-traumatic osteomyelitis

Ջոն Կարապետյան
Գյումրու ԲԿ, Գյումրի, Հայաստան

John Karapetyan
Gyumri Medical Center, Gyumri, Armenia

Ներածություն. Վերջին տարիներին, կապված Արցախյան պատերազմի և վիրահատական ոչ ճիշտ մարտավարության հետ, զգալի շատացել են հետտրավմատիկ ոսկրաբորբերը: Հետտրավմատիկ ոսկրաբորբն ավելի հաճախ տեղակայվում է սրունքի (67.5%) շրջանում: Հետվիրահատական ոսկրաբորբը որպես բարդություն կարելի է կապել մի շարք մարտավարական խախտումների հետ.

- ► Ասեպտիկայի նորմերի խախտումը:
- ► Վիրահատության կոպիտ իրագործումը:
- ► Ոսկրահյուսվածքի աննպատակ կմախքացումը:
- ► Մետաղական կոնստրուկցիայի և բաղադրիչների ոչ ադեկվատ ընտրությունը:

Եղանակներ. Վերջին տարիներին մեր բաժանմունքում հետվիրահատական օստեոմիելիտի կապակցությամբ վիրահատական բուժման են ենթարկվել 43 հիվանդներ: Նրանցից 7-ի մոտ եղել է ոչ կայուն օստեոսինթեզ՝ կեղծ հոդի ձևավորմամբ, որոնցից մեկի մոտ կատարվել է կոնստրուկցիայի հեռացում և կոնսերվատիվ բուժում՝ հետագայում գիպսակապով: 6-ի մոտ կատարվել է կոնստրուկցիայի հեռացում, ֆիստուլոսեկվեստրոնեկրոէկտոմիա՝ արտաօջախային ֆիքսող համակարգի տեղադրումով: Նշված դեպքերում ոսկրաբորբի 5 դեպք բազուկոսկրի, 1 դեպք նախաբազկի, 6 դեպք ազդրոսկրի, 29 դեպք սրունքի և 2 դեպք ոտնաթաթի կամ նախագարշապարի ոսկրերի շրջանում: 27 դեպքում կատարվել է ֆիստուլոսեկվեստրոնեկրոէկտոմիա՝ դեֆեկտի միոպլաստիկ փակումով, 3 դեպքում կատարվել է ոսկրային պլաստիկա 2 փուլով ըստ Մասկուլեի: Միոպլաստիկ մեթոդը առաջին անգամ առաջարկել և կիրառել է ֆինլանդացի Շուլտենը 1896թ.-ին: Նա առաջարկել է վիրահատությունը իրականացնել 2 փուլով՝ 1-ին փուլում – օջախի մաքրում, սանացիա, 3-4 շաբաթ անց դեֆեկտի փակում՝ միոպլաստիկա:

Արդյունքներ. Միոպլաստիկայի ենթարկված բոլոր հիվանդներ մոտ նկատվել է լավացում: Բոլոր դեպքերում մկանային լաթը վերցվել է ոսկրային դեֆեկտին հնարավորինս մոտ մկաններից, վերին կարճ ոտիկի վրա: Դրված մկանային լաթը ոսկրային խոռոչի մեջ ապահովել է հետևյալ ֆունկցիաները.

- ► Փոխարինիչ – մկանային հյուսվածքը, շնորհիվ իր մասիվության և էլաստիկության համարվում է իդեալական պլաստիկ նյութ և լցնում է դեֆեկտի ամբողջ խոռոչը:
- ► Հեմոստատիկ – տեղադրված մկանալաթը՝ անջատելով թրոմբոկինազա, խթանում է մակարդելիությունը՝ դադարեցնելով մշակված ոսկրային խոռոչի արյունահոսությունը:
- ► Դրենաժային – տեղադրված մկանալաթը ռեզորպցիայի է ենթարկում միկրոսկոպիկ բազմաթիվ էլեմենտներ՝ հյուսվածքի կտորներ, օտար մարմին, միկրոօրգանիզմ:
- ► Վերականգնողական – մկանային հյուսվածքը, ճիշտ է, չի խթանում ոսկրային ռեպարացիան, սակայն առաջացած կպումներով լավացնում է սնուցումը և ար-

յան շրջանառությունը: Վերջինս հնարավորություն է տալիս ոսկրի ռեգեներացիային:

Եզրակացություն. Միոպլաստիկայի համար ցանկալի չեն մեծ ֆունկցիա իրականացնող զանգվածային մկանների կիրառումը այն առումով, որ չառաջանա ֆունկցիայի զգալի իջեցում, իսկ տեղադրված մկանալաթը իր իններվացիայով լինի անկայուն թերֆիքսված: Այլ խնդիր է, երբ կա արդեն արտահայտված հոդային կոնտրակտուրա հարակից հոդերում և վերը նշված վիճակը չի ստեղծվում:

0033 Ավշային համակարգի տեսապատկերումը մերձինֆրակարմիր սպեկտրոսկոպիայի մեթոդով ինդոցիանին կանաչ մարկերի միջոցով. կիրառումը պլաստիկ վիրաբուժության մեջ

Lymphatic system visualization by near-infrared spectroscopy with indocyanine green marker: application of the method in plastic surgery

Պարույր Անտոնյան, Կարեն Պետրոսյան
Առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, Հայաստան

Paruyr Antonyan, Karen Petrosyan
National Institute of Health, Yerevan, Armenia

Ներածություն. Ներկայումս ավշային համակարգի (ԱՀ) տեսապատկերման մեթոդները շարունակում են ակտիվորեն կատարելագործվել, ի հայտ են գալիս էլ ավելի զգայուն սարքեր և համակցվում են տարբեր մեթոդներ: Դիտարկված է ԱՀ տեսապատկերման համար օգտագործվող հիմնական մեթոդներից (լիմֆանգիոսցինտիգրաֆիա, մագնիսառեզոնանսային շերտագրություն [ՄՌՇ], ռադիոնուկլիդային, ուլտրաձայնային հետազոտություն) համեմատաբար բարձր զգայունությամբ և կիրառման հարմարավետությամբ առանձնացող մերձինֆրակարմիր սպեկտրոսկոպիայի (ՄԻԿՍ) մեթոդը: Կներկայացվեն մեթոդի առանձնահատկությունները՝ զգայունությունը, սպեցիֆիկությունը, հյուսվածքների մեջ ինդոցիանին կանաչի ներթափանցման խորությունը, լուծունակությունը: Դիտարկված է տեսապատկերման այն մեթոդը, որն առավել հարմար է պլաստիկ վիրաբուժության տեսանկյունից օգտագործման համար:

Եղանակներ. Նախկինում օգտագործված մեթոդները, ինչպիսիք են լիմֆանգիոգրաֆիան, լիմֆոգրաֆիան լիմֆազուրին 1% ներկով, լիմֆոսցինտիգրաֆիան, համակարգչային շերտագրությունը (ՀՇ) և ուլտրաձայնային հետազոտությունը (ՈւՁՀ), չեն կարողացել լիովին բավարարել բոլոր կլինիկական կարիքները: Վերջերս ներդրվել են նոր մեթոդներ՝ ՄՌՇ, 18-ֆտորդեզօքսիգլյուկոզային պոզիտրոն-էմիսիոն ՀՇ (18-ՖԴԳ ՊԷՇ/ՀՇ), միաֆոտոն էմիսիոն ՀՇ (ՄԷՀՇ, SPECT), կոնտրաստով ուժեղացված ՈւՁՀ (ԿՈւՁՀ, CEUS), ՄԻԿՍ: Ավշային անոթների պունկցիայի տեխնիկական բարդության պատճառով ուղղակի լիմֆանգիոգրաֆիան մասնագետների շրջանում մնում է չպահանջված: ԱՀ-ի հետազոտության զարգացման կարևոր քայլ է ճապոնացի վիրաբույժների կողմից մշակված համակարգը ՄԻԿՍ մեթոդով՝ օգտագործելով ինդոցիանին կանաչ (ԻՑԿ, indocyanine green – ICG) մարկերը: ԻՑԿ-ն ջրալույծ միացություն է, որը լայնորեն օգտագործվում է սրտի թողունակությունը գնահատելու համար անգիոգրաֆիայի, ակնաբուժության և վերականգնողական վիրաբուժության մեջ: ԻՑԿ-ն տրիկարբոցիանինային ներկ է, որի կլանման և արտացոլման սպեկտրը գտնվում է ինֆրակարմիր տիրույթում: Կլանման առավելագույնը 790-805 նմ է, իսկ արտացոլման գագաթնակետը՝ 825-835 նմ: Ի տարբերություն տեսանելի լույսի, ինֆրակարմիր ճառագայթումն ավելի լավ է թափանցում կենսաբանական գունանյութեր (պիգմենտներ՝ մելանին, հեմոգլոբին) պարունակող հյուսվածքների միջով և ավելի քիչ է ցրվում դրանց մեջ: ԻՑԿ-ի վիզուալացման համար այն ներարկվում է ավշային դրենաժային ավազանի ուսումնասիրվող գոտու հեռադիր հատվածների ինտերստիցիալ տարածություն: Մեր կողմից օգտագործվող ԻՑԿ-սկոպ համակարգն օժտված է նմանատիպ ախտորոշիչ հատկություններով:

Արդյունքներ. Կատարվել են ներարկումներ դեմքի երիտասարդացնող վիրահատություններից առաջ, ընթացքում և հետո: Նաև դիտարկվել են դեմքի միջին երրորդականի բարձրացման ժամանակ հեռացված մաշկի եզրային հատվածները և միջին գոտու մակերեսային և խորանիստ ճարպային փաթեթների հատվածներ: Մեր կողմից օգտագործված մեթոդը թույլ է տալիս վիրաբույժին իրական ժամանակում տեսնել ԱՀ-ի կառուցվածքային միավորները, արդյունքում խուսափել վնասումից:

Եզրակացություն. ԱՀ-ի տեղայնացումը, լիմֆոդրենաժի վնասման կանխարգելումը կարևոր տարր է հետվիրահատական բարդությունների կանխարգելման գործում: Այս համեմատաբար անվտանգ և տեխնիկապես հեշտ իրագործելի մեթոդը վիրահատարանում թույլ է տալիս իրական ժամանակում պատկերացնել ԱՀ-ի դինամիկ կարգավիճակը և որոշել պահակային ավշահանգույցների տեղակայումը:

0057 Տղամարդկանց մոտ մարդու պապիլոմավիրուսի օնկոգեն ՄՊՎ16, ՄՊՎ18 շտամների որոշումը ՊՇՌ մեթոդով Հայաստանում

Human papillomavirus oncogenic strains (MPV16, MPV18) detection in Armenia among men

Անահիտ Պետրոսյան, Քրիստինա Աղաջանյան, Տաթև Սարհատյան
Ցիտոլաբ, Երևան, Հայաստան
Anahit Petrosyan, Kristina Aghajanyan, Tatev Sarhatyan
Citolab, Yerevan, Armenia

Ներածություն. Մարդու պապիլոմավիրուսը (ՄՊՎ) սեռական ճանապարհով փոխանցվող ամենատարածված վարակն է, որն առաջացնում է մի շարք ՄՊՎ-ասոցացված նորագոյացություններ (կանանց մոտ ար-

գանդի վզիկի, տղամարդկանց մոտ հետանցքի և առնանդամի ուռուցքներ): Ամենաօնկոգենը համարվում են ՄՊՎ16 և ՄՊՎ18 շտամները: Նպատակ. Հայաստանում բնակվող չափահաս տղամարդկանց մոտ որոշել ՄՊՎ16, ՄՊՎ18 շտամների առկայությունը՝ վերջիններիս տարածվածությունը պարզելու համար:

Եղանակներ. Հետազոտության մեջ ներառվել է 282 տղամարդ 20-59 տարեկան տարիքային խմբում: Հետազոտությունն անցկացվել է Վեկտոր-Բեստ թեսթ հավաքածուներով՝ ներկա-ժամանակում պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) միջոցով: Հետազոտության կենսանյութ է հանդիսացել միզասեռական քսուքը: Հետազոտվել են նաև սեռական ճանապարհով փոխանցվող այլ վարակներ:

Արդյունքներ. Ընդհանուր հետազոտվող օնկոգեն շտամների տարածվածությունը չափահաս հայաստանցի տղամարդկանց շրջանում կազմել է 8.51%, որից 4.61%-ը բաժին է ընկնում ՄՊՎ16-ին, իսկ 3.90%-ը՝ ՄՊՎ18-ին: ՄՊՎ օնկոգեն շտամների համակցվածությունն այլ վարակների հետ կազմել է ընդհանուր հայտնաբերվածների 37.50%-ը: Ըստ տարիքի բաշխումը ցույց է տվել, որ տարածվածությունն ավելի բարձր է 22-39 տարեկան հասակում, ուր ներառված է հայտնաբերված նմուշների 91.66%-ը:

Եզրակացություն. ՄՊՎ16-ի և ՄՊՎ18-ի անախտանիշ կրելիության բարձր ցուցանիշը տղամարդկանց մոտ հանգեցնում է ՄՊՎ տարածվածության մեծացման ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց շրջանում: ՄՊՎ օնկոգեն շտամների սքրինինգային հետազոտությունը տղամարդկանց մոտ թույլ կտա կանխարգելել վարակի տարածումը և խուսափել վերջինիս ծանր կլինիկան դրսևորումների արտահայտումից:

A055 Միզապարկի քաղցկեղ. գիտական հետազոտությունների ժամանակակից ուղղվածությունը
Bladder cancer: modern direction of scientific research

Հայկանուշ Գեոկչյան-Կժդրյան[1,2], Ռոզա Բարակյան[1], Նարեկ Գալստյան[2]
[1]Էրեբունի ԲԿ, Երևան, Հայաստան
[2]Առողջապահության Ազգային Ինստիտուտ, Երևան, Հայաստան

Haykanush Geokchyan-Kzhdryan[1,2], Roza Barakyan[1], Narek Galstyan[2]
[1]Erebouni MC, Yerevan, Armenia
[2]National Institute of Health, Armenia

Միզապարկի քաղցկեղը յոթերորդ ամենատարածված քաղցկեղն է ամբողջ աշխարհում արական բնակչության շրջանում, և տասներորդը, երբ հաշվի են առնվում երկու սեռերը: Ամբողջ աշխարհում միզապարկի քաղցկեղի տարիքային ստանդարտացված մահացության մակարդակը (ըստ 100,000 մարդ/տարեկան) կազմում է 3.3 տղամարդկանց համար և 0.86՝ կանանց համար: Այս ցուցանիշները ցույց են տալիս, որ միզապարկի քաղցկեղը ունի լուրջ սոցիալական նշանակություն և ժամանակին ախտորոշումը, բուժական մեթոդների ճիշտ ընտրությունը, այդ մեթոդների կատարելագործումը և նոր մեթոդների ստեղծումը ժամանակակից բժշկագիտության առաջնային նպատակներից են: Ներկայումս միզապարկի քաղցկեղի հետ կապված գիտական հետազոտությունները ունեն հետևյալ հիմնական ուղղությունները՝

► Մինիմալ ինվազիվ ցիստէկտոմիա: Այս ուղղությամբ իրականացվող հետազոտություններով փորձ է արվում համեմատել մինիմալ ինվազիվ վիրահատական մեթոդները բաց վիրահատական մեթոդի հետ՝ էֆեկտիվության և անվտանգության առումներով:

► Միզապարկ պահպանողական տակտիկայի ավելացում: Ներկայումս բազմաթիվ հետազոտություններ միտված են հայտնաբերել մեթոդներ, որոնցով հնարավոր է պահպանել միզապարկը՝ ստանդարտ հեռացման փոխարեն:

► Լիմֆատիկ հանգույցների հեռացում: Իրականացվում են հետազոտություններ, պարզելու համար միզապարկի քաղցկեղի տարբեր փուլերում լիմֆոդիսսեկցիայի ծավալից կախված էֆեկտիվության փոփոխությունը:

► Ուռուցքի մոլեկուլյար թեստավորում: Ներկայումս իրականացվում են բազմաթիվ հետազոտություններ ուռուցքի գենետիկ մակարդակով փոփոխությունների հայտնաբերման հետ կապված: ԴՆԹ փոփոխությունները հնարավորություն են տալիս կանխատեսել միզապարկի քաղցկեղի կրկնությունը կամ կանխատեսել, թե որ հիվանդները կարող են ավելի ինտենսիվ բուժման կարիք ունենալ: Կախված ուռուցքում հայտնաբերված գենետիկ փոփոխություններից, հնարավոր է իրականացնել առավել էֆեկտիվ թիրախային թերապիա:

